



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2485

heavy - copper

XV ~~Handwritten scribble~~



~~1627~~

~~173~~
~~173~~

ԵՐԱԶԱՀԱՆ

ԵՐԱԶԱՀԱՆ

ԵՒ

ԵՐԱԶԱՑՈՅՑ

ՅՈՐՈՒՄ ԳՏԱՆԻՆ


ԵՒ ԲԱՆՔ ԽՐԱՏՈՒ

ԵՒ ԽԱՂՔ ԻՆՉ ՄԱՆԿՏԻՈՅ

Է ԽՐԱՏ ԵՒ Ի ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՄԱՆԿԱՆՑ

2485



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՔԻՔԻՃԵԱՆ

Կ. - ՊՕԼԻՍ, ՖԻՆԱՆՑԱԿԱՆ

— 1865 —



ՅԱՌԱՋԱԲԱՆ



ԵՐԱԶԱՀԱՆԸ նոր տպագրութեամբ 'ի լոյս ընծայիլը շատերուն զարմանալի պիտի երեւայ : Բայց մեզի համար զարմանալին ան է որ , քանի որ Եւրոպական լեզուաց մէջ ասոր նման խաղու և զբօսանաց գիրքեր կը վիտան , Ազգին մէջ աս մէկ գիրքը այնչափ բամբասանաց առիթ տուած է : Ուրիշ ազգեր այսպիսի գուշակութեանց գիրքեր , զորօրինակ խաղի թուղթերու վըրայ հմայել ու պատգամ և գուշակութիւն տալու այլ և այլ կերպերը կը հրատարակեն , և ամեն մարդ գիտէ թէ խաղ են . մինակ Հայերն աւելորդապաշտ կ'ըլլան , վասն զի Երազահան ունին : Գիտենք որ ռամիկն ասանկ բաներու երբեմն աւելի հաւատք մը կ'ընծայէ , բայց ռամիկն աստկարութիւնը մինակ մեր ազգին մէջ չէ . շատ լուսաւորեալ ազգերու մէջ ալ տեսած ենք այնպիսի մարդիկ որոնք այլ և այլ տեսակ գուշակութեանց , որոնք զբօսե-


ցրնելու նպատակաւ միայն հնարուած են ,
չատ կոյր հաւատք մը կ'ընծայեն :

Եթէ աս գիրքն ալ աղէկ մը քննելու
ըլլանք , բարոյականութեան վնասակար բան
մը չի պարունակեր : Գրքին սկիզբը ՅՈՎԱ.
ՍՍ.ՓՈԻ անուամբ պարզ ոտանաւոր պատ-
մութիւն մը կայ , որ բարոյական վէպ մըն է
և որուն ճիշդ նմանը , քիչ մը աւելի ըն-
դարձակ և աւելի վայելուչ , Գաղղիերէն
լեզուով տեսած ենք : Կան քանի մը յօդ-
ուածներ ալ որոնք պարզ խրատաբանու-
թիւն են : Իսկ Երազահանն ու Երազացոյ-
ցը , ինչպէս նաև քանի մը , տառերու , ան-
ուանց և թիւերու վրայ շինուած խաղեր ,
լոկ զբօսանաց համար են , և մինակ ան
նպատակով յօրինուած են որ , ինչպէս վեր-
նագիրն ալ կ'ըսէ , տղաք ուրիշ վնասակար
խաղերէ և զբօսանքներէ ետ կենան :



ՆԱԽԵՐԳԱՆՔ

ՎԱՍՆ ՅԵՏԱԳԱՅ ՏԱՂԱԶԱՓ ԲԱՆԻՑ



Ե՞ս Առաքել Բաղիշեցի ,
մեղօք լըցեալ նուաաս ողի •
Տաղաչափել ըստ իմ կարի ,
ըղճառ Հնդկաց թագաւորի •
Կըռապաշտին Աբեներայ ,
Յովասափու ողւոյ նորա •
Դիւրին է տաղս 'ի վերծանել ,
և հեշտընկալ է 'ի լսել •
Զի իմացեալ զմիտրս բանին ,
փառքս տացեն Տեառն արարչին •
Այն որ յանբեր քարանց երկրիս ,
Աբրահամու հանէ ողւիս •




THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

1950

PHYSICS DEPARTMENT



Ա՝

ՏԱՂ,

Ի Վ Ե Ր Ա Յ


ՅՈՎԱՍՏԱՓՈՒ ԹԱԳԱԻՈՐԻ

ՈՐԴԻՈՅ ԱԲԵՆԵՐԱՅ

ԹԱԳԱԻՈՐԻՆ ՀՆԴԿԱՑ

ՅՈՐԺԱՄ հայրն երկնաւոր յերկիր հաճեցաւ,
Եւ բանն Աստուած իջեալ յերկիր մարմնացաւ,
Ի խաջափայտն ելեալ սիրով բարձրացաւ,
Եղաւ ՚ի գերեզման եւ փառօք յարեաւ:
Ելեալ մարմնով յերկինս յաջմե հօր նստաւ,
Եւ Աստուած սուրբ հոգին ՚ի յերկիր իջաւ.
Ի վերնատանն ՚ի կերպ հրոյ յայտնեցաւ,
Ի դասս առաքելոց սիրով բնակեցաւ:
Աշխարհս առաքելոցն վիճակեցաւ,
Երկիրն Հնդկաստան թովմայի անկաւ.
Դնացեալ անդ քարոզեաց Տեառն հրամանաւ,
Եւ անդէն սքանչելեօք նահատակեցաւ:

Հաւատք Քրիստոնէից անդ հաստատեցաւ,
 Կռապաշտութիւն դիւացն խափանեցաւ.
 Մի ոմն յաստուածոց խորտակեալ բարձաւ,
 Անունն Քրիստոսի փառաւորեցաւ:
 Յետոյ ջար բազաւոր մի երեւեցաւ,
 Որոյ Աբեներ անուն կոչեցաւ.
 Սատանայի կամաց նա հետեւեցաւ,
 Կամաւ 'ի պաշտօն դիւաց խոնարհեցաւ:
 Հայածեր գ'Քրիստոնէայս յաշխարհէն Հնդկաց,
 Եւ անթիւ բազմութիւնս անդ նահատակեաց.
 Զանունն Քրիստոսի յայնմ երկրէ ջնջեաց,
 Զամենեւեան դիւաց պաշտօնէայս կարգեաց:
 Զուներ մեծ բազաւորն Աբեներ որդի,
 Որ ժառանգեր զարքուն իւրոյ հայրենի.
 Շատ աղաչեաց զկուռսս վասն զաւակի,
 Եւ դերն ոչ կարացին տալ նմա որդի:



Վ.Ա.Ս.Ն ԾՆՆԴԵՍ.ՆՆ ԵՒ ՍՆՆԴԵԱՆ
 ՅՈՎ.Ա.ՍԱՓՈՒ

Աստուածն ամենայնի որ բարեգութն է,
 Բարձի մեղաւորաց նա կամեցող է.
 Աբեներ արքային զաւակ պարգեւէ,
 Այն որ 'ի փռշտնկոյն' վարդ բուսեցանէ:
 Իսկ նա 'ի ջաստուածոցն զնա համարի,
 Զենու զոնս բազումս եւ ուրախ լինի.
 Եւ կուոցն առաջի անկեալ զոհանայ,
 Եւ Յովսէփի տալ կոչել զանունն նորս:

Ժողովեալ զաստղաբաշխան որք էին գիտուն,
 Եկեալ 'ի միասին համարով յիսուն.
 Հարցեալ թագաւորին վասն նորա որդւոյն,
 Ասէն թէ Լինիցի քան զքեզ մեծագոյն:
 Մի ոմն 'ի նոցանէ այն որ ճարտարն էր,
 Աբեներ արքային զայս դարձեալ ասէր.
 Հզօր մեծ թագաւորդ մեր գիտասցէ,
 Որդին քո քրիստոնէայ իսկ լինելոց է:
 Յորժամ լուսաւ արքայն զբանո աստղագիտին,
 Տրամեցաւ դառնագին վասն զաւակին.
 Խնդրէր հնարս առնել վասն Յովասափին,
 Զի մի լուիցէ նա զճայն Գրիստոնէայ ազգին:
 Յորժամ հատուցաւ մանուկն 'ի ստէնէ,
 Թագաւորն տեղի նմա պատրաստէ.
 Դեռահասակ մանկուհն առ նա ժողովէ,
 Եւ զՅովասափ մանուկն իւր ուրախ առնէ:
 Եւ պատուէր տայ նոցա արտաքս ջհանել,
 Եւ այեւոր եւ ծեր' անդ ոչ մտժանել.
 Յաւոց ճայն եւ մահու անդին ոչ յիշել,
 Եւ ոչ զքրիստոնէից օրհնս անուանել:
 Եւ թէ յայնց մանկանց մեռանէին,
 Որք որդւոյ արքայի ընկերակիցք էին.
 Զմի այլ ընդ նորա կացուցանէին,
 Զմեռեալն յօտար երկիր գնացեալ ասէին:
 Մանուկն Յովասափ յորժամ զարգացաւ,
 Իմաստութեան բանից նա ընդելացաւ.
 Բերին ուսուցիչս յորոց նա ուսաւ,
 Եւ յաստղաբաշխութեան արուեստ վարժեցաւ:


Ուտեր եւ ընպեր յորախորեան կայր,
 Չայնի երգեցողաց խնդութեամբ ցնծայր.
 Եւ հայր նորա զամենայն օր առ նա գայր,
 Որդւոյն Յովասափոս սիրով ողջոյն տայր:



ՎԱՍՆ ԵԼԱՆԵԼՈՅՆ ԱՐՏԱՔՍ ՅՈՎԱՍԱՓՈՒ

Յանուր միում մտօք խորհուրդ արարեալ,
 Մանուկն Յովասափ 'ի տրտմութեան լեալ.
 Կոչեալ զմի յընկերաց իւրոց եւ հարցեալ,
 Վասն էր 'ի տաճարիս եմ աստ արգելեալ:
 Յայնժամ պատասխանի տուեալ ծառային,
 Յովասափոս ասաց զբանս արքային.
 Զքրիստոնեայս հալածեաց, ասէ, Հայր քոյին,
 Կամեցաւ խափանել զանուն Քրիստոսին:
 Եւ զքեզ վասն այսորիկ աստ արգելեալ է,
 Զի մի գօրէնս նոցա ազանջ քո յուիցէ.
 Ըզբանս աստղագիտին նմա ծանուցանէ,
 Որ վասն Յովասափոս նախ ասացեալ է:
 Շնորհքն Աստուծոյ 'ի նմա ծագեալ,
 Որդւոյ թագաւորին յորժամ զայս լուեալ.
 Յայնժամ եկեալ առ նա հայրն յողջոյն տալ,
 Ելանել արտաքս յարքայէն խնդրեալ:
 Ասաց. Զարդարեցէք զփողոցս քաղաքին,
 Հիւանդք եւ ախտածեալք մի երեւեցին.
 Եւ դասք երգեցողաց պատրաստ եղիցին,
 Զի ուրախ լիցի որդի արքային:

Հանապազ Յովասափ արտաքս էլաներ,
 Հանդերձ ընկերօքն նա ուրախ լինէր.
 Յանկարծ գուրուկ էւ գկոյր մի նա տեսանէր,
 Տրտմութեամբ գարհուրեալ էւ սիրտն ճմլէր:
 Եհարց թէ Չինչ պատճառաւ նա ցաւագնեալ է,
 Ասէն թէ պատահմամբ 'ի տարերացս է.
 Եհարց թէ Ամենեցուն այն լինելոց է,
 Ասէն. Ոչ այլ ոմանց միայն պատահէ:
 Յառուր միում էլեալ ծեր մի տեսանէ,
 Որ 'ի գաւազանին վերայ դողդոջէ.
 Եհարց վասն ծերոյն թէ Այն վասն էր է,
 Ասէն թէ Օր մահուն էլեալ հասեալ է:
 Եւ թէ ամենեցուն մահն հանդիպիցի,
 Եթէ նմա միայն գոր աջօք տեսի.
 Ասէն թէ Ամենայն մարդ որ ծնանի,
 Մահուամբ յաշխարհես էլանել պարտի:
 Լուեալ Յովասափու գայս սիրտն դողաց,
 Եւ դառնացեալ ոգով նա յոյժ հառաջեաց.
 Զկեանս մարդոյ յերկրի ճչինչ համարեաց,
 Երազ է գիշերոյ որպէս Դաւիթ ասաց:
 Օր ըստ օրէ տրտում կայր էւ վշտագին էր,
 Եւ հանապազի ծածուկ մտօք տագնապէր.
 Զփառս էւ գպատիւ յոչինչ համարէր.
 Խնդրէր մարդ իմաստուն որ զնա խրատէր:




ՎԱՍՆ ՔԱԼՈՅ ԲԱՐՍԷԼԱՄՈՒ ՃԳՆԱԻՈՐԻՆ
ԱՌ ՅՈՎԱՍՏՓ
ԵՒ ՔԱՐՈՋՈՒԹԵԱՆ ՆՈՐԱ

Արարչագործն Աստուած տերն ամենայնի,
Որ հանապազ խնդրող է մոլորեալ հօտի.
Նա որ յերկնից իջեալ վասն ծառայից,
Ի փայտ խաչին ելեալ՝ փրկեաց յանիծից:
Եհան յանապատեն զհովիւն բարի,
Որոյ է իսկ անունն Բարադամ կոչի.
Իջեալ ՚ի բաղաքին վասն Յովասափի,
Որ էր տեղի պատրաստեալ փառացն Յիսուսի:
Եկեալ ՚ի բաղաքին ճգնաւորն ընտրեալ,
Որ էր Աստուածաշունչ զրովքն վարժեալ.
Ի բաղց է ՚ի ծարաւ զմարմինն ճնշեալ,
Յայրս է ՚ի փապարս յերանց բնակեալ:
Զբաղաքացւոյ զգետտ առեալ ազանի,
Ի կերպարանս եղեալ վաճառականի.
Գնացեալ հասանէ ՚ի դուռն որդւոյն արքայի,
Որ էր լցեալ շնորհօք որդւոյն Միածնի:
Ծառայն Յովասափոս զնա տեսանէ,
Հանդարտութեամբ է սիրով առ Բարադամ գոչէ.
Թէ յինչ պետս եկեալ իցէ՝ զնա հարցանէ:
Նա ասէ, Վաճառական եմ յօտար երկրէ:
Եւ մարգարիտ ունիմ առ իս մեծագին,
Որ ջիք ՚ի գանձս քոյ թագաւորին.
Զէ քո տեսեալ նման իմում մարգարտին,
Ոչ դու ոչ քո արքայն ոչ նախնիք նորին:

Քանզի մարգարիտրն այն զայս շնորնս ունին,
 Ձի կոյր քե տեսանե աչք նորա բանին.
 Խից լսել շնորհե եւ համերք խօսին,
 Հոգւով հիւանդացեալք նովաւ բժշկին:
 Մտեալ ծառայն ասաց որդւոյ արքային,
 Ձբանն Բարադամու սուրբ ճգնաւորին.
 Որ եր վաճառական անգին մարգարտին,
 Ձոր եւ Քրիստոս ասաց յԱւետարանին:
 Հրաման առեալ ծառայն 'ի Յովասափե,
 Ձվաճառող մաքգարտին 'ի ներքս մուծանե.
 Ի գլուխ որդւոյ բազաւորին զայն դնե,
 Մանուկն Յովասափ զնա մեծարե:
 Ետ պատասխանի մանուկն նորա բանից,
 Յոյց ինձ զմարգարիտն զայն զի տեսից.
 Ասաց. Վասն այնր եկի զի քեզ զայն ցոնցից,
 Ձմեծագին մարգարիտն իմ քեզ վաճառեցից:
 Բայց նախ ունկնդիր մտօք իմոցս բանիս,
 Ձի զպատճառն ասացից մեծի մարգարտիս.
 Երե խօսից իմոց զոն հաւանեցիս,
 Ապա տեսոյ նորա արժանի յիցիս:
 Քանզի արքայն եւ տերն որ իմ Աստուածն է,
 ՅԱւետարանի իւրում զայս ասացեալ է.
 Առականք բանիս նա խօսեցեալ է,
 Ամենայն մարդոյ 'ի իսրաւ զայն ասացեալ է:
 Սերմանացանն եչեալ սերմանել յերկրի,
 Ի սերմանցն եր որ անկաւ 'ի ճանապարհի.
 Թոչունք երկնից կերան եւ առ ոտն հարին,
 Է օրինակ մեղաց եւ սատանայի:

Իսկ այլն անկաւ 'ի փռւշ որ հեղձոյց զնա,
 Օրինակ մեծութեան որ բազումս հոգայ.
 Եւ այլն յապառածի ուր ոչ բռնաւ նա,
 Եւ տապ փորձութեան ջորացոյց զնա:
 Այլ էր որ անկեալ բռնաւ յերկիր բարի,
 Բերեալ պտուղ հարիւր վարսուն ընդ երեսնի.
 Նման է գործոց արդարոց յերկրի,
 Այնց որք կամարարք Աստուծոյ լինին:
 Եթէ տեղի ունիս դու 'ի սերմանել,
 Այլ եւ յտղ լինիս բանին Աստուծոյ.
 Յայնժամ սկսայց քեզ սիրով պատմել,
 Զխորհուրդ պաշտօնեից տեառն Աստուծոյ:
 Ապա թէ զմարգարիտն իմ դու իմանաս,
 Եւ հոգով եւ մարմնով նմա ցանկանաս.
 Զամենայն իշխանութիւն քո նմա գին տաս,
 Եւ անանց մեծութիւն յայնժամ ստանաս:
 Իսկ եթէ ոչ ունիս դու տեղի սերման,
 Այլ եւ փռւշ ապառած ճանապարհ կոխան.
 Յայնժամ յԱստուծոյ ջունիմ եւ հրաման,
 Յուցանել զմարգարիտն իմ քեզ պատուական:
 Քանզի յԱւետարանին ինձ պատուիրեալ է,
 Թէ՛ զբան պատուիրանին որ մարգարիտն է.
 Խոզից մեղսասիրաց որք շունք գործովք են,
 Մի տայք կոխան առնել զի բազում մեղք են:
 Մանուկն Յովնասափ որդի արքային,
 Յորժամ լուսն զբարբառ սուրբ ձգնաւորին.
 Ծագեաց լոյսն շնորհաց 'ի սիրտ նորին,
 Բորբորեցաւ սիրով անխօս մարգարտին:


Ուրա խուրեամբ սկսաւ խօսել ընդ նմա,
 Ասէ արքայորդին մեծին Բարդամայ.
 Թե Ձինջ բան գոր ունիս՝ զամենայն ասա,
 Քանզի բարի խրատու անձն իմ՝ ցանկայ:
 Զսերմն հոգեւոր դու յիս սերմանեա,
 Թուչունք երկնից տանել ոչ կարեն զնա.
 Ոչ տապ փորձութեան ջորացոցանել,
 Եւ ոչ փութն մեղաց զնա հեղձոցանել:
 Այլ հաւատով զբան քո յիս ընդունիմ,
 Եւ յուսով կատարման բարեաց ակն ունիմ.
 Սիրով բուսուցեալ արդիւնաւորիմ,
 Թե միայն անանց կենաց ժառանգ լինիցիմ:



ԱՌԱԿ ԶՈՐ ԱՍԱՅ ԲԱՐԱՂԱՄ
 ՅՈՎԱՍՍՓՈՒ

Բարադամ ասաց. Առակ ասեմ յուիջիր,
 Զոր ՚ի միտ առեալ բազում շահեաջիր.
 Այսմ անցաւոր աշխարհիս օրինակ է,
 Եւ զկեանս յաւիտենից քեզ ծանուցանէ:
 Թագաւոր մի փառօք ՚ի կառու իւր նստէր,
 Յանկարծ երկուս աղբատու նա տեսանէր.
 Մարմին նոցա սեւագոյն արեւակեզ էր,
 Ոչ ունեին հանդերձս որ զնոսա ծածկէր:
 Եկեալ առ արքայ ասեն յայտնապէս,
 Մենք եմք քարոզ կենացն ճշմարտապէս.
 Սոսկացեալ քագաւորն այն ահեղապէս,
 Երկիր եպագ նոցա անդ խոնարհապէս:

Զօրք թագաւորին զհա բամբասեցին,
 Եղբօր նորա ասէն զբանս արքային.
 Անա զնացեալ պատմեաց զայն թագաւորին,
 Վասն էր խոնարհեցար արանցն ջնջին:
 Եւ ունէր սահմանս բաղար Թագաւորին,
 Զմահապարտ մարդիկ զորս ըմբօնէին.
 Փողով ազդեցութեան ծանուցանէին,
 Որք զդառնագոյն տանջանսն տեսանէին:
 Թագաւորն զեղբայրն իւր էտ ըմբօնէլ,
 Զանգակ մահապարտից հնչեցուցանէլ,
 Ի մեջ հրապարակին ձեռս յետս կապէլ.
 Զխորհուրդ դատաստանին աստ ծանուցանէլ:
 Յայնժամ արքայն ցեղբայրն եկեալ ասէ,
 Թէ Դոս զարհուրեցար յայդմ մահուանէ.
 Զիւրդ էս ոչ երկեայց յարանցն յայնցանէ,
 Որք ինձ սպառնան տանջանս որ ոչ անցանէ:
 Յովասափոս ասաց Բարդամ զայս առակ,
 Թէ բան թագաւորին՝ է քեզ օրինակ.
 Ոք կամիցիս լսել զբարեացն յիշատակ,
 Ատէլ զկուսապաշտութիւն՝ Տեսուն հակուսակ:



ԱՌԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Դարձեալ առակ մի այլ ասեմ այսմ նման,
 Է օրինակ մեղաց էւ արկարութեան.
 Ոնկնդիր էւ լոր կամօք հանութեան.
 Եւ տես զփառս աշխարհիս դատարկ էւ ուն այն


Երկուս արկեղս շինեաց արքայ մի բարևոք,
 Չմին ելից ոսկեով եւ ակամբք ցանկայեօք.
 Եւ գմիւսն զագրահոտ աղբով աղտեղի,
 Զերկոսին եւս ամուր փակեաց բերանովք :
 Եւ զայն որ ոսկեով եւ ակամբք լցեալ էր,
 Արտաքոյ սեւագոյն կպրով ծեփեալ էր.
 Եւ այն որ 'ի ներքոյ աղբով լցեալ էր,
 Մեծագին հանդերձիւ արտաքուստ ծածկեալ էր :
 Ասաց. Երկուց անօթոցս այսոցիկ տուք գին,
 'Նորա զբանն ծածուկ գիտել ջկարացին.
 Զայն որ աղբով լցեալ էր, մեծարեցին,
 Եւ զայն որ լինէր ոսկեով անարգեալ խոտեցին :
 Մեկնեմ զբան առակիս' դու միտ դիր սիրով,
 Այն մարդն որ յաշխարհի թարուն է բարևով .
 Թեպէտ 'ի մեջ մարդկան նա անարգեալ է,
 Առաջի Աստուծոյ յոյժ մեծարեալ է :
 Իսկ որ յերեւելիս պայծառ եւ ճոխ է,
 Եւ 'ի բարեաց գործոց դատարկացեալ է .
 Թեպէտ զփառս աշխարհիս աստե՛ն վայելի,
 Յանաւոր ատենին զամօք կրեացի :
 Յովասափ զայս լուեալ յոյժ զուարթացաւ,
 Զի նմա այնպէս իրատ յայտնեցաւ .
 Ի կռապաշտութեանց նա ազատեցաւ,
 Եւ որդւոյն Աստուծոյ ծառայ կարգեցաւ :
 Ապա դարձեալ ասէ մեծին Բարդամու,
 Երէ Յայտնեա զխորհուրդ բանին առաջնոյ .
 Զանուն թագաւորին քո ուսուցողին,
 Զառակ սերմանողին եւ զմեկնութիւն նորին :

Յայնժամ սուրբն Բարդամ սկիզբն արարեալ,
 Չարարչութիւնն աշխարհի նմա ծանուցեալ.
 Չբանսարկութիւն անկումն որ ապստամբեալ,
 Չմարդոյն լինելութիւն եւ զպտուղն կերեալ:
 Չրկելն յանճառ յուսոյն, զանեծս դառնագոյն,
 Այլ եւ զցաւօք ծնունդ, զքիրտն վաստակոյն.
 Չսուգ նախաստեղծին վասն յանցանելոյն,
 Չխոստումն Աստուածորդւոյն եւ մարդանալոյն:
 Չծնունդ Աղամայ հօր, եւ մօր Եւայի,
 Չանումն զաւակաց 'ի վերայ երկրի.
 Որ որ բարի գործովք եկած յաշխարհի,
 Եւ որք անսացին կամաց բանսարկութիւն:
 Չմարգարեիցն դասս որք գուշակեցին,
 Չմարդեղութիւն բանին Աստուծոյ ցուցին.
 Չտնօրինաբար շրջելն 'ի մեջ մարդկան ազգի,
 Եւ զսքանչելեաց նշան որդւոյն Միածնի:
 Չչարչարանս խաչին, զթաղումն նորին,
 Չյարութիւն Քրիստոսի յառուրն երրորդի.
 Չհամբառնալ Փրկչին յարուն հայրենի,
 Չգալուստ Հոգւոյն սրբոյ 'ի Պենտեկոստեին:
 Չբարոզս Առաքելոցն յաշխարհս ամենայն,
 Որք յուան նոցա եւ առ Աստուած դարձան.
 Չհաւատս քրիստոնեից որք հաստատեցան,
 Չմոլորութիւնս կռոց որք խափանեցան:
 Չգալուստն 'ի դատաստան որդւոյն Միածնի,
 Չհատուցումն գործոց մարդկային ազգի.
 Չարագործացն զհուրն որ ոչ շիջանի,
 Բարեգործացն զփառս որ անճառելի:

Եւ յորժամ գայս լուսա որդի արքային,
 Անկեայ երկիր եպագ սուրբ ճգնաւորին.
 Իմացաւ զգօրութիւն անգին մարգարտին,
 Որ խոստացաւ յայտնել գայն Յովասափին:
 Պատասխանի տուեայ մեծին Բարդամայ,
 Ասէ. Չմարգարիտն քո եւ իմացայ.
 Արդ այժմ զհայրենի կուռսն մոռացայ,
 Եւ Յիսուսի Փրկչին լինիցիմ ծառայ:
 Արդ զինչ բան զոր գիտես զամենայն ասա,
 Բանգի բարի խրատու հոգի իմ ցանկայ.
 Այս մոլորեայ հոգւոյս դարման դու արա,
 Եւ լուսով գիտութեան ինձ առաջնորդեա:
 Ասաց քե Մկրտեաց յանուն Յիսուսի,
 Եւ Հօրն երկնաւորի՝ Հոգւոյն ճշմարտի.
 Անեղ՝ անհաս՝ անճառ. Աստուծոյ մեծի,
 Արարչին արարածոց երկնի եւ երկրի:
 Ասաց. Մկրտութեան խորհուրդն զինչ է,
 Ասաց Սուրբն Բարդամ քե Մեծ պարգեւ է.
 Ի սկզբնական մեղաց զմարդ ազատէ,
 Եւ Հօրն երկնաւորի Որդի անուանէ:
 Մկրտութիւն սուրբ՝ ամբիժ հաւատով,
 Ի բազմագոյն մեղաց զմարդ փրկելով.
 Լուսափայլ պատմութեան ազուցանելով,
 Ժառանգակից կենաց բանին առնելով:
 Մկրտութիւն սուրբ կենաց պատճառ է,
 Բժշկութիւն հոգւոյ եւ դեղ ցաւոց է.
 Ի խոցմանէ ջարին զմարդիկ բժշկէ,
 Ի մահուանէ մեղաց նա յարուցիչ է:

Մկրտութիւն սուրբ՝ գեղումն է շնորհաց,
 Եւ ճանապարհ գնայոյ յուսով առ Աստուած.
 Դուռն արքայութեան եւ հանգիստ փառաց,
 Ժառանգ յաւիտենից անպատում բարեաց:
 Մկրտութեանն շնորհք սքանչելի է,
 Ամենայն բարութեան պատճառ. եւ սկիզբն է.
 Զախտի ծնունդս որդիս Աստուծոյ առնէ,
 Զապականեալ բնութիւն կենդանի գործէ:
 Մկրտութիւնն զգեստ է արքունական,
 Ի Բրիստոսէ շնորհեալ մեզ որդեոց մարդկան.
 Պարիսպ է ամրութեան եւ զէն յաղթութեան,
 Զաղար ապաստանի եւ գանձ պատուական:
 Մկրտութեամբ որ որ սրբեալ մաքրեսցի,
 Բազմապատիկ շնորհաց արժանաւորի.
 Աստէն յօրհնութեան իւղոյն օծանի,
 Եւ անդ յԱստուծոյ յուսոյն վառեսցի:
 Որ որ զմկրտութիւն սրբութեամբ պահէ,
 Նա յառագաստն երկնից առ Տէր մտանէ.
 Իսկ որ աղտեղացեալ զազիր գործովք է,
 Յանաւոր ատենին զամօք կրեսցէ:
 Արդ թո՛ւ թէ մկրտիս յանուն Յիսուսի,
 Յորդեգրութիւն կոչիս Հօրն երկնաւորի.
 Տաճար կազմիս անճառ Հոգւոյն ճշմարտի,
 Եւ ժառանգես զկեանս որ անպատմելի:
 Յայնժամ ուրախ եղէ որդի արքային,
 Պատասխանի տուեալ ասէ սուրբ ձգնաւորին,
 Զիմրդ կատարեցից զկանս արարչին,
 Զի գերծայց ես յանշեջ հրոյ գեհեկնին:

Ասաց թէ Ռարացիք զկուռան դիւական,
 Որք են ճեռագործք արարեալ մարդկան.
 Մերկացիք զխաւարն որ անգիտութեան,
 Ծանիր զլոյս հաւատոյ Աստուածգիտութեան:
 Մաքրեսցիր մկրտութեամբ յաղտից մարմնական,
 Զգեցիր զՀոգին շնորհաց անսպառական.
 Զերծիր 'ի տանջանաց յախտենական,
 Եւ լեր բաժին շնորհաց եւ արքայութեան:
 Զի որք զկուռան պաշտեն' մտօք մոլարք են,
 Եւ զարարիչն Աստուած իսկ մոռացեալ են.
 Յուցից թեզ օրինակ թէ ճամ նման են,
 Առականոր բանիւք որ նշանակեն:





ԱՌԱՎ ԵՐԲԱՐԴ

Ոմն ճնճողուկ մի ետես եւ կայաւ զնա,
 Այլ նա սկսաւ խօսել եւ ասէ զնա.
 Թէ Զիս արձակիցես' բազում շահ լիցի:
 Երիս ինչ խրատ տամ' թեզ օգուտ լիցի:
 Լաւաւ այրն ճնճողկին եւ արձակեաց զնա,
 Ել նստաւ 'ի ծառն եւ ասաց զնա.
 Ռնկն եղ նմա բարբառեցաւ նա,
 Երէք խրատքն այս էին զոր ասաց նմա:
 Ասէ. Անճաւատ բանից մի հաւատայ,
 Ի տեղի' ուր ոչ հասանէ ճեռօք մի ճկտել:
 Ընդ այն ինչ որ կանց, բնաւ մի տրամել:
 Ի միտ առնույ զխրատ եւ մի մոռանայ:

Յայնժամ փորձեալ զնա եւ դարձեալ ասե,
 Առ իս ե այս մարգարիտ որ մեծագին ե.
 Պայծառ եւ պատուական եւ գեղեցիկ ե,
 Իբրեւ զձու մի ջայլեման՝ այնպէս մեծ ե:
 Իսկ նա որ արձակեաց՝ եղեւ ապաշահ,
 Գնաց գոյն նորա եւ յոյժ տրամեցաւ.
 Զգեաց զձեռն ըմբռնել զճնճողուկն զայն,
 Իսկ նա դարձեալ ասէր ցլիմար այրն այն:
 Զիմբղ ասե զխրատն իմ դօւ մոռացար,
 Եւ զսուտն զոր ասացի ուղիղ իմացար.
 Ի ձեռսդ էի անկեալ՝ պանել չկարացեր,
 Վասն անցելոյն հոգացար որում հնար չէր:
 Այնպէս են որք կօոց երկրպագութ են,
 Եւ զձեռագործս իւրեանց աստուածս՝ անուանեն.
 ԶԱստուածն ամենայնի՝ ի բաց թողեալ են,
 Եւ զբարեաց պարգեւողն մոռացեալ են:
 Այլ մեզ մի ե Աստուած Հայր ամենակալ,
 Եւ մի ե Միածինն Հօր հաւասար.
 Հոգին ճշմարտութեան ՚ի Հօրե բղխեալ,
 Փառակից Միածնին եւ ոչ բաժանեալ:
 Անձամբ ե երբակի՝ բնութեամբ միակի,
 Անուամբ երեք կոչի՝ կամքն ե եզակի.
 Բաժանեալ ե յերիս եւ անբաժանելի,
 Երբեակն ՚ի միակէն անեղանելի:
 Մինն ծնող կոչի անմարմին բանին,
 Մինն ծնունդ ասի հաւասար ծնողին.
 Մինն էլումն ՚ի Հօրե անձառ անբննին,
 Էիցս համօրէն միայն գիտողին:

Անեղ է հայրն Աստուած յափտենական,
 Անեղակից Որդին ծնունդ հայրական.
 Անեղաբար Հոգին՝ հօր համանման.
 Էակից Միածնին ՚ի գործ կատարման:
 Արարիչ Հայր ասի երկնի եւ երկրի,
 Արարչակից Որդին եիցս ամենայնի.
 Կատարիչ սուրբ Հոգին ստեղծական սեռի,
 Իմանալեաց՝ զգալեաց՝ ծովու եւ ցամաքի:
 Կամաւ Հօրն յուսոյ արարածքս եղեն,
 Մարդեղութեամբ բանին՝ գերեայք փրկեցան.
 Աստուծոյ սուրբ Հոգւոյն նման ճորոգման,
 Անեղ է անգրաւ կենօք անվախճան:
 Արդ դու քե հաւատաս ՚ի նա՝ ապրեցիս,
 Մկրտութեան շնորհաց արժանաւորիս.
 Ի փորձութեանց մեղաց կամաւ գերժանիս,
 Անտրտում կենօք միշտ մխիթարիս:
 Քանզի փառք աշխարհիս այս անպիտան է,
 Եւ քագաւորութիւն քո քեզ մի մնացէ.
 Այսօր դու վայելես՝ վաղիւն այլոց է,
 Անշեջ հուր գեհեցնին՝ ձեզ պատրաստեալ է:
 Երէ յսող լինիս, այլ առակ ասեմ,
 Զունայն կեանս աշխարհիս քեզ օրինակեմ.
 Երէ ունկն դնես զոր ծանուցանեմ,
 Կամիմ զի ՚ի մեղաց զքեզ ազատեմ:





ԱՌՍԿ ՉՈՐՐՈՐԴ

Մարդ մի փախուցեալ էր 'ի միեղջերուէ,
 Գնացեալ 'ի խոր վիրապ մի նա հասանէ.
 Ի մեջ գբին վիշապ մի մեծ տեսանէ,
 Եւ հուր 'ի բերանոյ նորա բորբորէ:
 Իսկ 'ի բերան հրոյն զծառ մի տեսանէր,
 Զձեռն ձգեալ ոտիւք 'ի նա հասանէր.
 Երկու մկուսք մին սեաւ' մին սպիտակ էր,
 Հատանէին զուտն զոր նա կայեալ էր:
 Օճք ջորք ներքոյ ոտից նորա փորէին,
 Կամէին ընկենույ զայրն 'ի խորս գբին.
 Իսկ ոստքն զոր մկուսքն անդադար կրծէին,
 Սակաւ ինչ քաղցրութեան մեղր ծորէին:
 Իսկ նա մտօք մոյար եւ յիմարեալ էր,
 Որ զահ միեղջերուին մոռացեալ էր.
 Զգբոյն եւ զվիշապին որ հուր արձակէր,
 Եւ 'ի կլանել զնա' անկման նորա սպասէր:
 Մոռացեալ էր եւ զօճսն որ ընդ ոտիւք նորա կային,
 Զմուկսն որք զուտն յոր յեցեալ կայր կտրէին.
 Զորոգայթսն ամենայն մարդն այն մոռանայր,
 Եւ յուտ անդր 'ի վեր գբերանն բանայր:
 Միեղջերուն մահու օրինակեալ է,
 Վիշապն անագին' ճայն դժոխոց է.
 Վիրապն խորագոյն' այն գերեզման է,
 Զորէքին իժքն ընդ ոտիւք' ջորք տարերք են:

Մկուսնք սեաւ եւ սպիտակ՝ տիւ եւ գիշեր են,
 Չայս ամենայն մարդկան ազգք մոռացեալ են.
 Քաղցրութիւն մեղերն՝ այս սնուտի կեանք են,
 Որ պատրանօք ջարին կորուսանող են:
 Յոգեոց ենան Յովասափ խբրեւ զայն լուսաւ,
 Եւ ՚ի կուսպաշտութեանցն եղեւ ապաշաւ.
 Ասաց ցճգնաւորն, Սուրբ հայր պատուական,
 Ուսն ինձ զայլ խրատս հոգւոյ փրկութեան:
 Քանզի Լուսաւորիչ դու ինձ յայտնեցար,
 Հանելով ՚ի բանտե զհոգի իմ խաւար.
 Արդ մարգարիտ ունիս դու եւ անգին գոհար,
 Եւ ես ՚ի ստանալ՝ զայն կամօք եմ յօժար:



ԱՌԱՎ ՀԻՆԳԵՐԲՈՐԴ

Առակ մի այլ ասաց նա Յովասափի,
 Թե երիս սիրելիս ունեք այր մի.
 Ջերկուսն մեծարեք խիստ յօժարաբար,
 Եւ զմին ոչ մեծարեք նոցին հաւասար:
 Յաղքատութիւն անկաւ այրն այն մեծատուն,
 Կոչեաց զբարեկամս զերկոսին սիրուն.
 Խնդրեաց ՚ի նոցանե ինչս յօգնութիւն,
 Ասաց թե պարտս ունիմ բազում եւ անհուն:
 Ասաց թե զիս կոչե թագաւորն յատեան,
 Եւ ես բիւր բանբարոյ եղե պարտական.
 Յիշեցեք զառաջին գութն սիրական,
 Լերութ ինձ կարեկիցք յաւորայայամիկ նեղութեան:

Մինն ասէ յինէն օգնութիւն չիք բեզ,
 Բայց թէ երկուս կտանս տամ, առեայ գնացեա.
 Եկրորդն ասէ թէ գամ ընդ բեզ առ արքայ,
 Բայց խօսել ոչ կարեմ առաջի նորա:
 Այլ նա յուսահատեայ երող գերկուսին,
 Առ երրորդն գնաց սրտի դառնագին.
 Բայց ոչ կարէր հայել յերեսս յամօրոյն,
 Զի չէր նա կաթոգին 'ի սեր սիրելոյն:
 Այլ նա կոչեայ սիրով առ ինքն եւ խօսի,
 Ասէ մի երկնչիք, իմ քաջ սիրելի.
 Փոխանակ քո խօսիմ 'ի դուռն արքայի,
 Ազատեմ զբեզ 'ի պարտուց քոց անտի:
 Յորժամ յուսա գառակս որդի արքային,
 Աղաչեաց զԲարդամ մէկնել զմիտս նորին.
 Եւ նա սկսաւ մէկնել զմիտս առակին,
 Եւ ունկնդիր լինէր Յովասափ բանին:
 Ասաց թէ Սիրի իր մարդոյ' մի' ինչքն են,
 Եւ երկրորդ ազգականքն եւ բարեկամք են.
 Յորժամ յօր մահու մարդն հասանէ,
 Ոչ ազգն է օգնական, ոչ ինչքն փրկէ:
 Իսկ թէ գործս բարիս յաշխարհի ունիցի.
 Այն երրորդ սիրելին է գորմէ ասացի.
 Այն լինի ապաւեն յատենին Յիսուսի,
 Եւ ազատէ յանշեջ հրոյն գեների:
 Լուեայ զայն Յովասափ յոյժ բեկրեցաւ,
 Եւ բոլորով սրտի յԱստուած յուսացաւ.
 Բանիք Բարդամու վառաւորեցաւ,
 Զկեանս օւնայնութիւն եւ երազ համարեցաւ:



ԱՌԱԿ ՎԵՅԵՐՈՐԴ

Առակ մի այլ Բարդամ ճգնաւորն ասէ,
 Այր մի ունէր որդի սիրուն 'ի սրտէ.
 Կամեցաւ կին առնել յազնուական տանէ,
 Այլ նա գնացեալ յօտար Երկիր հասանէ:
 Ետես անդ կոյս աղջիկ մի այլեւորի,
 Ճարտար, սուրբ, անարատ, իմաստութեամբ լի.
 Եկեալ հօր նորա ասէ թէ տուր ինձ զնա,
 Եւ ծերոյն հաճեալ էտ զղուստրն նմա:
 Իբրեւ անուրբ հարսանեաց լցան,
 Կոչեաց այլեւորն այն 'ի տուն զփեսայն.
 Ասաց. Աջացս իմ լոյս որդի պատուական,
 Զգօն եւ իմաստուն եւ յոյժ սիրական:
 Արդ որ յաղքատութիւնս իմ հաւանեցար,
 Եւ 'ի կուսան դատրիկն իմ դու հաճեցար,
 Զմեծութիւն հօր քո փութով մոռացար,
 Կամիմ զքեզ Իսրայել' ինձ սրտիւս յօժար:
 Եւ էտ նմա զմրութիւտ ակն մի պատուական,
 Որ եր քսան լտեր ջափով ծանրութեան.
 Վաճառեաց եւ էհաս նա այնու մեծութեան,
 Եօթնպատիկ քան զհայրն յընչեղութեան:
 Յովասափ զմեկնութիւն առակին խնդրէ,
 Քանզի 'ի բանից քոց, ասէ, յոյժ ուրախ եղի.
 Զի այրն որ առաքեաց զքեզ յանապատէ,
 Նոյն ինքն անճառ կենօր զքեզ փառաւորէ:

Ասաց՝ Երիտասարդ մանուկն դու ես,
 Աղքատ ծեր այեւորն՝ ես որ պատմեմ քեզ.
 Եւ դուստրն գեղեցիկ՝ զոր ասացի քեզ,
 Այն վարքն է սրբութեան՝ յոր հրաւիրեմ զքեզ:
 Իսկ ակն մեծագին արքայութիւնն է.
 Գանձ անպատում բարեաց անդ ամբարեայ է,
 Եւ այն որ ծանրութեամբն քսան լիտր է,
 Զյաւիտենից գլեանսն նշանակէ:
 Թէ դու քարոզութեանս իմոյ լուիցես,
 Եւ զճշմարիտն նստուած հոգւով ծանիցես.
 Ի ջար գործոց մաքուր զքեզ պահեցես,
 Եւ գլխին օր մահուն քոյ միշտ յիշեցես:
 Յայնժամ ստանաս աստէն բազում մեծութիւն,
 Քան զհայր քո առաւել թագաւորութիւն.
 Յետոյ ժառանգեցես զանանց մեծութիւնն,
 Եւ հասանես յերկնից թագաւորութիւնն:
 Լուսաւ զայն Յովասափ էւ զուարճացաւ,
 Հոգւով այլ էւ մարմնով բերկրեայ ցնծացաւ.
 Ի Տեառնէ Աստուծոյ նա յոյժ գոհացաւ,
 Զի այնպիսի բժիշկ նմա յայտնեցաւ:
 Ասաց նա Բարադամու սուրբ ճգնաւորին,
 Եթէ քանի ամաց են աւուրք քոյին.
 Քառասուն է հինգ ամաց են, ասէ, նմին,
 Զարմացաւ ընդ բանն որդի արքային:
 Ասաց թէ ծերացեայ՝ այեւօք սպիտակ ես,
 Թերեւս առաւել քան ուրսնամենի ես.
 Արդ քառասուն է հինգ տարւոյ ասէն զքեզ,
 Զհամրդ այսու բանի գիս հաճեցուցես:

Ասաց' Եօթանասուն 'ի ծննդէնէ եմ,
 Այլ զոր յաշխարհի կացի զայն ոչ համարեմ.
 Քառասուն եւ հինգ ամ է զի յանապատի եմ,
 Իսկ որ յառաջ քան զայն ոչինչ համարեմ:
 Քանզի որ յաշխարհի մեղօք ցնորի,
 Մեռեալ է նա հոգւով եւ ոչ կենդանի.
 Նորա կեանքն 'ի մարդոյ համար չանկանի,
 Այլ անբան անասուն է եւ մեղաց գերի:
 Քառասուն եւ հինգ ամ յանապատի եմ,
 Յընթերցմանէ զբոց եւ դադարեալ չեմ.
 Ի քաղց եւ 'ի ծարաւ զմարմինս ճնշեալ եմ,
 Եւ թողութիւն մեղաց յԱստուծոյ հայցեմ:
 Եհարց Յանապատին ին իւրի կերակրիք,
 Ասաց' Այնու զոր ուտեն անբան վայրենիք.
 Դայար խոտ բանջարոյ է մեր ուտելի,
 Եւ 'ի ցօղոյ երկնից լինի ըմպելի:
 Ասաց. Ագանելի մարմնոյ ձերոյ զինչ է:
 Ասաց թէ' Մաշկեղէն եւ մազեղէն է.
 Զամառն եւ զմեռն այն մեր հանդերձ է,
 Միայն զի զմերկութիւն մարմնոյ ծածկեցէ:
 Քանզի որք կամիցին Տեառն ծառայել,
 Պարտին զանդամս մարմնոյ' յերկրի սպանանել.
 Բազում ազգի ազգի վշտաց համբերել,
 Ապա վերինն երկրի ժառանգորդ լինել:
 Ասաց, Եթէ քո հանդերձն մազեղէն է,
 Ապա զոր զգեցեալն ես' այդ ուստի իցէ.
 Ասաց թէ' Զայս առեալ եմ յայսմ քաղաքէ,
 Զի զգայն իմ առ քեզ ոչ որ իմասցէ:

Քանզի յանապատեն յորժամ մեկնեցայ,
 Զայս մեծատան հանդերձս առի եւ ազայ-
 Ապա 'ի դուռն եկեալ հրաման ընկալայ,
 Եւ այս կերպարանօքս յապարանս չորայ:
 Ապա ասէ առ նա որդի արքային,
 Թե Հան զիս 'ի բանտե աստի խաւարին.
 Եւ տար յանապատ աղօթից քոյին,
 Միքե ազատիցիմ 'ի հրոյ գեհեցին:
 Պատասխանեալ Բարադամ որդւոյ արքայի,
 Զքեզ ոչ կարեմ տանել յանապատ վայրի.
 Այլ դիր ունկն բանից իմոյ առակի,
 Վասն գայտեան կամիմ տայ քեզ օրինակ մի:

Ե Մ Թ


ԱՌԱԿ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Որսորդ մը կալեալ զմի 'ի ճագուց եղին,
 Բերեալ սովորեցոյց զնա 'ի շինին.
 Այլ նա դարձեալ զնաց 'ի մեջ երեոց,
 Որսորդն պնդեալ կալսա զնա ընդ այլոց:
 'Նոյնպէս եթէ զքեզ տանիմ' քո հայրն իմանայ,
 Եւ ընդ որ երբամ զտեղւոյն տեղեկանայ.
 Զեղբարսն իմ զամենայն' սրոյ իւրում կեր տայ,
 Եւ զքեզ անդ ոչ բողոան' բերեն առ արքայ:
 Այլ զխրատ զոր տամ քեզ' պահեա 'ի սրտի,
 Եւ մկրտեաց յանուն Որդւոյն Միածնի.
 Ես յանձն առնեմ զքեզ Փրկչին Յիսուսի,
 Նա ինքն առաջնորդեսցէ քեզ որպէս եւ կամի:

Ես ակն ունիմ յԱստուած Հայրն Ամենակալ,
 Եւ յԱստուած Որդին 'ի Հօրե ծնեալ,
 Զի գրեզ ուղեւորե փութով առ իս գալ,
 Մինչեւ 'ի միմեանց այլ ոչ հեռանալ:
 Յովասափ Բարդամու գայս բան հարցանե.
 Սուրբ հայր հոգեւոր, այս իմ խնդիր է,
 Թե մարդ որ մկրտի' եւ կրկին մեղանչե,
 'Նա գրողութիւն մեղաց սրպէս գտանե:
 Ասաց նա. Բարեբար տերն ողորմած է,
 Որ զմեղաւորաց զղարձն խնդրե.
 Քանզի որ առ Աստուած սրտով դիմեալ է,
 Զնորս գառաշին յանցանս նա ոչ եւս յիշե:
 Որչափ է գլորի մարդ' դարձեալ կանգնեացի,
 Որքան է մեղանչե' խոստովանեացի.
 Գրած է մարդասերն Աստուած ընդունի,
 Արքայութեանն առնե զնա արժանի:
 Ի սուրբ Աւետարանի' նա մեզ խոստանալ,
 Թե որ գալ առ իս' անտես չառնեմ զնա.
 Քանզի առանց մեղաց յերկրի ոչ որ է,
 Այլ անդարձն դիւաց նման է:
 Քանզի Եսայիաս մարգարէն ասե
 Թե Որ զանօրեկութիւն յեզուան յայտնե,
 Յայնժամ արդարանայ շնորհօք 'ի Տէառնե.
 Եւ յԱստուծոյ առ նա մեծ պարգեւ իջանե:
 Դաւիթ ասե. Պատմեմ ինձէն զմեղս իմ,
 Դու զամբարշտութիւնս մեղաց թողուս զիմ.
 Մարգարէիւն ասե թե զղարձ մեր կամի,
 Այն որ յերկնից էջ մեզ բժիշկ բարի:

Զի մեղաւորն յորժամ դառնայ 'ի մեղաց,
 Խոստովանի զբազում ջարիս յանցանաց.
 Գրած Հայրն Երկնաւոր մաքրէ զնա 'ի մեղաց,
 Այն որ անառակի որդւոյն ընդառաջ գնաց:
 Քանզի ողորմութիւն Տեառն անսպառ է,
 Որ զամենայն մարդոյ զդարձն խնդրէ.
 Իսկ որ անգեղջ մնայ էւ ջապաշխարէ,
 Զանշեջ հուր գեհեկոյն նմա պատրաստէ:
 Յովասափ Բարդամու դարձեալ զայս ասէ,
 Մկրտեա դու զիս, յորժամ գնաս աստէն.
 Առ ոսկի էւ արծաթ՝ որչափ պիտոյն է,
 Եւ տար յանապատն ուր կրօնաւորք էն:
 Յայնժամ ցՅովասափ ասաց Բարադամ,
 Ոսկւոյ էւ արծաթոյ քոյ ոչ ցանկանամ.
 Եւ զի քան զքեզ յոյժ մեծատուն էմ,
 Անցաւոր փառաց քոց էս ոչ կարօտ էմ:
 Քանզի զմեծութիւնդ զոր դու վայելես,
 Վաղիւն այլոց բողոսս, 'ի հող մտանես.
 Ոսկւոյ էւ արծաթոյ դու ծառայ լեալ էս,
 Որպէս զաղբ անպիտան զայն համարիմ էս:
 Վասն այնորիկ էս քան զքեզ մեծատուն էմ,
 Փառաց էւ մեծութեան քո ցանկացող ջեմ.
 Յանանց կեանսն անվախճան գանձս ժողովեմ,
 Յընչից մարմնականաց էս ազատեալ էմ:
 Եւ թեպէտ յաշխարհի շրջիցիմք աղբատ,
 Այլ ակն ունիմք անանց բարեացն յորդառատ.
 Յուսով էւ հաւատով՝ սիրով անարատ,
 Ծառայ էմք Աստուծոյ 'ի մեղաց ազատ:

Այլ թէ յընչիցդ առեալ յանապատ տանիմ,
 Ընկերաց իմոց եւ խոովիչ լինիմ.
 Պատճառ եւս մեղաց նոցա լինիցիմ,
 Եւ աղօթից նոցա խափանիչ լինիմ:
 Քանզի երկուց տերանց՝ մարդ ոչ ծառայէ,
 Զի թէ գմին սիրիցէ գմիւսն ասիցէ.
 Զի որ մամոնայի ծառայ եղեալ է,
 Նա յԱստուծոյ սիրոյն զանձն զրկեալ է:
 Այլ դու եթէ կամիս զքեզ մկրտեմ,
 Յառաջին մեղաց կռոցն ազատեմ.
 Որդի Հօր Աստուծոյ՝ շնորհօք զարդարեմ,
 Ժառանգակից բանին Աստուծոյ առնեմ:




Վ Ա Ս Ն Մ Կ Ր Տ Ո Ւ Ք Ե Ս Ն Ն Յ Ո Վ Ա Ս Ա Փ Ո Ւ

Յայնժամ հրաժարեցոյց ՚ի սատանայէ,
 Զերրորդութիւնն սուրբ՝ դառանել առ Ե.
 Ի մահն Քրիստոսի զնա մկրտե,
 Շնորհք Հոգւոյն սրբոյ ՚ի նա իջանէ:
 Հաղորդեցոյց զնա մարմնոյ կենսատուին,
 Ուսոյց պահել նմա զբան պատուիրանին.
 Ասաց զգուշանալ կամաց Արարչին,
 Եւ ինքն ելեալ զնաց ՚ի տեղի առանձին:
 Իսկ մի ՚ի ծառայից որդւոյ արքային,
 Որոյ Զարդ անուն նմա կոչեին.
 Իմացաւ զգայուստ առ նա Բարդամին,
 Եւ զՔրիստոնեայ լինել Յովասափին:

Եկեալ առ Յովաաափ Զարդն այն եւ ասէ,
 Թէ վասն քո գործոյդ՝ ան զիս պատեալ ե.
 Ընդէր այն ծերունին առ քեզ մտանէ,
 Իստեմ զի Քրիստոսեալ զքեզ արարեալ ե:
 Քո հայրն յայսմ երկրէ զնոսա հայածեաց՝
 Զքրիստոսեից անուն յաշխարհէ ջնջեաց.
 Եւ զքեզ վասն այնորիկ ՚ի տան արգելեաց,
 Զի մի յուրիցես զքան նոցին օրինաց:
 Երէ զխորհուրդս զայս հայր քո իմանալ,
 Զի մոռտս ունի առ քեզ այր Քրիստոսեալ.
 Փութով զամենեւեան զմեզ սպանանէլ տալ,
 Թէ զի ոչ զգործս քո յայտնեցար նմա:
 Պատասխանի տուեալ նմա որդի արքային,
 Երէ յորժամ զայցէ առիս ծերունին.
 Իո՞ւ ՚ի ծածուկ կացցես զկնի վարագութին,
 Ունկն դիր եւ յուր զխրատս նորին:
 Վաղիւն եկեալ առ նա սուրբ Ճգնաւորին,
 Յայնժամ խօսի ընդ նա որդի արքային.
 Ասէ, Սուրբ Հայր, կարօտ եմ բանից քոյին,
 Դարձեալ զիս խրատեա կամօք Արարչին:
 Յովաաափո՛ւ Բարդամ զայս դարձեալ ասէ,
 Թէ զոր քեզ ուսուցի՝ դու ՚ի մտի պահեա.
 Յաղտեղութեանց մեղաց զհոգիդ որոշեա,
 Ի սերն Քրիստոսի զքեզ բեւեռեա:
 Այսմ որ ոչ պահեաց զպատուեր Աստուծոյն,
 Մերկացաւ ՚ի յուսոյն ճաշակմամբ պտղոյն.
 Մինչ բանն Աստուած մարմնով ազատեաց զնոսին,
 ԶԱղամ ընդ Եւայի եւ զճնունդս նոցին:


Եւ այլ բազում բանի խրատեաց զնա,
 Եւ Չարդն ունկն դներ բանիցն նորա.
 Իմացաւ զճշմարիտ հաւատալ նորա,
 Բայց ոչ էտ հաւատալ նմա սատանայ:
 Ապա էկեալ ասէր ցարքայորդին այն,
 Որ առ Յովասափոս ծառայէր Չարդն այն.
 Ի Հօրե քումմե ծածկել ոչ կարեմ,
 Խաբեբայ ծերոյն հաւանեցար դոս գիտեմ:
 Յովասափ ծառային պատասխանի տայ,
 Թե ճշմարիտ եղեալ էմ ես ՚ի իստոնեալ.
 Երե հայրն իմ արքայ զիս սպանանել տայ,
 Իմ սիրտս ՚ի Բրիստոսե այլ ոչ հեռանայ:
 Վասն այն զքեզ բերի զի դոս լուիցես,
 Եւ բարի խրատուն այնմիկ անսայցես.
 Եւ դոս ոչ ը կայար զյոյսն մարտեր,
 Ոգիդ մնաց խաւարեալ՝ ոնայն եւ բափուր,



ՎԱՍՆ ԳՆԱԼՈՅՆ ԲԱՐՍԷԼԱՄՈՒ ՅԱՆԱՊԱՏ

Եկեալ առ Յովասափ ճգնաւորն ընտրեալ,
 Ասէ թե Բրիստոսի ես դոս գիտաւորեալ.
 Չնաւատան յաւազանեան որ քեզ աւանդեալ,
 Որդեակ իմ ըստ ճշմոյ, սիկնդ հաստատուն կա:
 Ես յաննն առնեմ զքեզ որդւոյն Միսածնի,
 Այնմ որ խնամիչ է ամենայնի.
 Խաղաղութեամբ կաց ՚ի քո ապարանս,
 Գնամ ես առ ընկերսն իմ յանապատս:


Յովասափ ցԲարադամ գայս դարձեալ ասէ,
 Ի քէն խնդիր մի ունիմ դու ինձ կատարեա.
 Ձկրկնոցդ է՛ գմագեղենդ, հայր, ինձ պարգեւեա,
 Ձի առ.իս յիշատակ մի քո մնասցէ:
 Եհան գմագեղենն է՛ զկրկնոցն յանձնէ,
 Առեալ գայն Յովասափ 'ի սրբոյ յառնէ.
 Ձգեցաւ գայն ընդդէմ ջար բանասարկութիւն գէն,
 Որպէս գմաշեակն սուրբ յեղիայէն:
 Եւ յայով գմիմեանս համբո՛րեցին,
 Ելեալ Բարդամ գնաց յանապատ տեղին.
 Հանապագ աղօթէր վասն Յովասափու,
 Ձի ազատեցի նա յախտիցն մարմնոյ:



ՎԱՍՆ ՅԱՅՏՆԵԼՈՅ ՁԱՐԴ ԾԱՌԱՅԻՆ
 ՁՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԼԻՆԵԼՆ ՅՈՎԱՍԱՓՈՒ

Իսկ Յովասափ 'ի տան իւրում աղօթէր,
 Եւ Ձարդ ծառայն յանէն հիւանդ անկանէր.
 Եհարց գնա թագաւորն է՛ ասել ջկարէր,
 Յետոյ յերկիւղէն զճշմարիտն ասէր:
 Ասաց թէ Գիտես տէր իմ է՛ արքայ,
 Ձի Յովասափ մանուկն եղէ՛ Բրիստոնեայ.
 Ձի յանապատէ ծերունի մի եկեալ առ նա,
 Քարոզելով նմա մոլորեցոյց գնա:
 Յայնժամ լուաւ արքայն է՛ յոյժ տրտմեցաւ,
 Անդէն 'ի կատաղի ջար գագան դարձաւ.
 Կոչեաց գմեծամեծս է՛ տեղեկացաւ,
 Թէ զինչ արասցէ մանկանն որ զկուռան ուրա ցաւ.

Իսկ ոմն զոր Առաջիս անուն կոչեին,
 Որ էր աստեղաբաշխ երկնից կամարին.
 Ետես յոյժ դառնացեալ զերեսս արքային,
 Ասաց թէ Մի տրտմիր վասն Յովասափին.
 Արդ զմոյորեցուցիչ ծերն ես ըմբռնեմ,
 Եւ յատեան մահու զնա կացուցանեմ.
 Չարաչար տանջանօք զնա սատակեմ,
 ԶՅովասափ 'ի նմանե փութով բաժանեմ:
 Զճանապարհ քաղաքին գայն ըմբռնեցին,
 Բազում զօրօք էլեալ զԲարդամ խնդրեցին.
 Գնացեալ յանապատ զնա որոնեին,
 Յոյժ աշխատեցան, զԲարդամ ոչ գտին:
 Իսկ 'ի կրօնաորացն որք յանապատին,
 Բազումք յանե նոցին փախստեալ զնացին.
 Զուրեւտասն ըմբռնեալ ընդ իւրեանս բերին,
 Որպէս զանմեղ գառինս նահատակեցին:



ՎԱՍՆ ՆԱՔՈՎՐԱՅ ԿՍԽԱՐԴԻՆ

Իսկ կայր 'ի քաղաքին Նաքովր անուն մի.
 Էր ջար եւ խաբեբայ կախարդութեամբ լի.
 Եկեալ առ Առաջիս ընդ նմա խորհի,
 Խաբել զՅովասափ մանուկն բարի:
 Գնաց 'ի ծածուկ 'ի կողմն անապատին,
 Նաքովր անուն կախարդն, կամարար ջարին.
 Կերպարանեալ կամաւ յանուն Բարդամին,
 Բանիւք Առաջիսին եւ քագաւորին:

Գնացեալ յետոյ գօրօք զնա ըմբռնեն,
 Քերեալ 'ի բաղարն 'ի բանտ արկանեն.
 Կամաւ 'ի հրապարակին յայտնի համբաւեն,
 Թէ զժերունին թարղամ առեալ բերեալ են:
 Գնաց առ Յովասափ արքայն Աբեներ,
 Ասաց թէ Այս զինչ է զոր դու գործեցեր.
 Յաստուածոց մերոց զմեզ բաժանեցեր,
 Զքրիստոնէից աղանդ կամաւ յանձն առեր:
 Նախատինս արարեր զմեզ ազգի մարդկան,
 Գիրն կուռք' մեզ յոյժ բարկանան,
 Խռովին' վիրաւորին' փախչին եւ զնան,
 Եւ ո՞ր աստուած լիցի երկրիս պահապան:
 Լաւ էր թէ չէիր ծնեալ յերկրի մեզ զաւակ,
 Զի ծնար եւ արարեր զմեզ խայտառակ.
 Ատելի ջաստուածոցն եղեր դու, որդեակ,
 Եւ օրինաց մերոց յայտնի հակառակ:
 Արդ ես զվարդապետն քո կապեալ եմ,
 Ի բանտ խաւարին զնա արգելեալ եմ.
 Վաղին յատենի զնա կացուցանեմ,
 Զխաբեռօթին նորա քեզ ծանուցանեմ:
 Յովասափ պատասխանի առնէ արքային,
 Ասէ. Մի բարկանար, հայր իմ, զայրագին.
 Քանզի կամաւ թողի զխաւարն ներքին,
 Եւ զգեցայ զյոյս փառասցն վերին:
 Քանզի կուռքն զսր պաշտէք' շինուածք են,
 Զեռաց արարածք մարդկան Աստուած զիմրդ լինին
 Այլ նա որ արար զերկիր եւ զերկին,
 Աստուած է ամենայնի' երրեակ է եւ մի:

Արդ ես 'ի Հայր Աստուած հաւատացեալ եմ,
 Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն երկրպագեալ եմ.
 Ի բանն Աստուած Յիսուս' եւ յուսացեալ եմ,
 Որ եւ զքեզ Քրիստոնեայ' յետոյ առնիցեմ:
 Իսկ Աբեղեր արքայն բարկութեամբ լցեալ,
 Ելեալ յոյժ դառնութեամբ եւ 'ի տուն գնացեալ.
 Այլ Յովասափ Մանուկն 'ի տրտմութեան լեալ,
 Գիտաց թէ վարդապետն իւր եր ըմբռնեալ:



ՎԱՍՍՆ ՅԱՅՏՆԵԼՈՅ ՀՐԵՇՏԱԿԻՆ
 ՅԵՐԱԶ ԳԻՇԵՐՈՅ ՅՈՎԱՍԱՓՈՒ
 ԶՆԵՆԳՈՒԹԻՒՆ ՆԱՔՈՎՐԱՅ ԿԱԽԱՐԳԻՆ

Զգիշեր յերագի' հրեշտակն յայտնե,
 Որդւոյ թագաւորին գայս ծանուցանե.
 Թէ այն որ 'ի բանտին' Բարադամ ոչ է,
 Այլ կախարդն է Նաբովր' որ խաբեբայն է:
 Վաղիւն զքեզ կամին կոչել յատենի,
 Նաբովր 'ի Բարդամու կերպարան լինի.
 Բերեն զիմաստասերն 'ի մեջ հանդիսի,
 Եւ զքեզ կամին խաբել ձեռամբ Նաբովրի:
 Զարթեալ յերագոյն մանուկն բարի,
 Եւ գոհացաւ զՏեառնն որդւոյն Միածնի.
 Որ յայտնեաց զգաղտնիս ձեռամբ հրեշտակի,
 Զի որդի արքային ոչ մոլորեացի:
 Թագաւորն Աբեղեր ժողով արարեալ,
 Զաստեղագետս ամենայն 'ի մի գումարեալ.
 Նաբովր 'ի Բարդամու կերպարանս փոխեալ,
 Բերին զնա յատեան եւ հարցափորձեալ:

Մանուկն Յովասափ անդէն ժամանէ,
 Տեսեալ անդ զկախարդն՝ իսկոյն ճանաչէ.
 Բայց ոչ ասաց նոցա՝ վարդապետն իմ չէ,
 Մինչեւ բանիւ նորա զնա որսացէ:
 Փիլիսոփայիցն ասաց Աբենէր արքայն,
 Եթէ կարէք յաղթել զայեւոր ծերն այն.
 Առնուք յինէն պարգեւս եւ գանձ պատուական,
 Ապա թէ ոչ եհաս՝ ձեր օր մահուան:
 Իսկ Յովասափ ասաց սուտ Բարադամու,
 Թէ գօրենս Քրիստոսի ուսուցէր ինձ դու.
 Յուցէր զիս ատելի իմ հօրն արքային,
 Որոշեցէր ՚ի կռոց խրատուքն բանին:
 Արդ եթէ ճշմարիտ է զոր ասացէր,
 Այսօր փիլիսոփայիցս դու յաղթեցէր.
 Նա ՚ի հօրէ իմմէ կասկած մի կրէր,
 Յայտնի օրինաց քոց՝ դու քարոզող լեր:
 Եւ թէ խաբէութեամբ դու զիս պատրեցէր,
 Եւ սուտ եւ անիրաւ օրենս ուսուցէր.
 Քո կենդանութեանդ պատճառ դու եղեր,
 Ի մարմնոյ քո կտրեմ եւ տամ քեզ ՚ի կեր:
 Անդամ անդամ զմարմինդ յօշոտեմ,
 Եւ շանց եւ զազանաց զքեզ արկանեմ.
 Ամեն մարդոյ խրատ զքեզ ցուցանեմ,
 Այսօր զսուտն եւ զիրաւն քո ես յայտնեմ:
 Յայնժամ որ նախ դիւաց նա բնակարան էր,
 Շնորհացն Աստուծոյ ընդունակ լինէր.
 Յորդոյ թագաւորին երկիրդէն սարսէր,
 Եւ սուտն Բարադամ զճշմարիտն ասէր:



ՎԱՍՆ ՔԱՐՈՋԵԼՈՅ ՍՈՒՏ ԲԱՐԱՂԱՄԻՆ
ՈՐ ԷՐ ՆԱՔՈՎՐ, ԶԲԱՆՍ ՃՇՄԱՐՏԻՆ ՅԻՍՈՒՍԻ
ԶՈՐ ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ ՅԱՅՏՆԵԱՑ ՆՄԱ

Ասաց ոմն նմա՛ թե դու Բարդամ էս,
Որ սուտ ես խաբեբայ օրենս քարոզես.
Ասաց. ճշմարտութեան վարդապետ եմ էս,
Որ որդւոյ արքայի օրենս ցուցի էս:
Յայնժամ Հոգւոյն շնորհօք՝ լցեալ կախարդին,
Զոր Տեառն օրինաց հակառակ բերին.
Որպէս երբեմն Բարդամ ընդ Իսրայելին,
Անեծքն յօրհնութիւն փոխարկեալ լինին:
Խօսեալ ընդ արքային բանիւ ես ասե.
Այն որ ծածուկ Նաբովր՝ յայտնի Բարդամ է.
Թե Կոռքն գոր պաշտեք այն ձեզ վնաս է,
Զի բնակարան դիւաց պատկեր կանգնեալ է:
Ոմանք որք զյոռասաւորս Աստուածս ասացին,
Նորա մոլորեցան եւ ոչ գիտացին.
Զի փոփոխին տեղեաւ եւ ոչ դադարին,
Հրամանաւ անփոփոխ կամօք Արարչին:
Իսկ որք զչորս տարերս՝ Աստուածս անուանեն,
Նորա յիմարեալ մոլար մտօք են,
Զի որք միմեանց ընդդէմ հակառակք են,
Նորա զԱստուածութեան անուն ոչ կրեն:
ԶԵՂԻՍՏԱՅՆՈՅ Աստուածսն է զԲաբելոնին,
ԶՀԵՂԵՆԱՅՆՈՅՆ է զորս ՚ի կարգի նոցին.
Որք մարդոյ կերպարանս շինեալ պաշտեցին,
Եւ որք իգաց անգամ Աստուած ասացին:

Քողոսմբ ասել է գայլսն որք ջեն յիշելոյ,
 Զգագանս է գանատունս 'ի հսողոյ է 'ի ջրոյ.
 Զաքիս' գմուկն է գկատու է գայլսն 'ի գետնոյ,
 Զծառ' գտունկ է գբոյս' գսոխ ընդ խատորոյ:
 Արդ' այս է գոր երկրի Աստուած ասացին,
 Եւ գնշմարիտն Աստուած մոռացեալ թողին.
 Զարարածս' Արարչին փոխանակ պաշտեցին,
 Գարշելեաց է ամօթոյ երկրպագեցին:
 Այլ որ ամենայնի Աստուածն է' մի է,
 Անճամբ է երրակի' անուամբ երեք է.
 Բնութեամբ է իշխանութեամբ' գօրութեամբ մի է.
 Կեանք է կենդանարար է նորոգող է:
 Հայր է ծնող բանին' Հոգին բղխումն է,
 Անեղ անժամանակ է անսահման է.
 Անտես անբնին է անզնին է,
 Անչափ է ամբաւ է աննման է:
 Անգիտելի է Հայր' Որդին զնա զիտէ,
 Գիտէ Որդին զՀայր' Հոգին քննիչ է.
 Արարիչ' կեցուցիչ' պարգեատու է,
 Գթած է մարդասէր է խնամող է:
 Կամեցող է բարեաց' կամակատար է,
 Հոյս է միշտ համասփիռն է յուսատու է.
 Աղբիւր յորդախաղաց արբուցանող է,
 Եւ գետ լայնատարած' ծով խորագոյն է:
 Էր միշտ յախտենից' է է եղիցի,
 Որ են' անեզր է անհաս ասի.
 Արարիչ ամենայնի երկնի է երկրի,
 Իմանալեաց' զգալեաց ծովու' ցամաքի:

Նախատիպ անգոյն եւ կերպ անձեւ ե,
 Էութիւն անսկիզբն եւ գոյ անեզր ե.
 Իսկութիւն ե յաւետ կեանք անվախճան ե,
 Անուր՝ ամերբ՝ ամբաւ՝ անհաս եակ ե:
 Ծնունդ ե ՚ի ծոց Հօր անբաժանելի,
 Բոխուն սուրբ Հոգւոյն անսպառելի.
 Են հարբ եւ հաւասար անձինքն երրակի,
 Ոչ մեծ ընդ կրտսերոյ կամ նախ ընդ վերջի:
 Այլ եր որդի ընդ Հօր նախ քան գյաւիտեան,
 Որով եւ բոլոր եակքս նովաւ արարան.
 Հոգին արարչակից Որդւոյ, Հօր նման,
 Յաւիտենից յաւետ մշտնջենական:
 Իսկ մին յերից անձանց՝ յերկիր խոնարհեալ,
 Ի հայրական ծոցոյ նա ոչ բաժանեալ.
 Ծնեալ ՚ի կոյս Մօրե Աստուած մարդացեալ,
 Որ նախ քան գյաւիտեանս անմայր ե ծնեալ:
 Մարմնով յերկրի շրջեալ գամս երեսուն,
 Եկեալ ՚ի Յորդանան կամաւ մկրտի.
 Ի Հօրե վկայեալ՝ յիջանել Հոգւոյն.
 Ապա սքանչելեօք յայտնեալ յաշխարհի:
 Ընտրեաց իւր աշակերտս երկուտասան թիւ,
 Նորօք որսաց գմարդիկ կենացն բանիւ.
 Զոր նախանձեալ ընդ նա ջարին խորհրդիւ,
 Ի իսաջ բեւեռեցին թիւրեայքն սրտիւ:
 Եղաւ ՚ի գերեզման կամաւորական,
 Յարեաւ ՚ի մեռելոց Աստուածն անվախճան.
 Ելեալ մարմնով յերկինս յաթոռ հայրական,
 Առաքեաց զսուրբ Հոգին՝ դասուն մետասան:

Իսկ առարեայքն սուրբ՝ յերկիր սփռեցան,
 Եւ մոյորեայքն ՚ի կոռուս առ Աստուած դարձան.
 Չարագործաց պահեալ է հուրն անվախճան,
 Բարեգործաց հանգիստն յախտենական:
 Արդ հշմարիտ Աստուած՝ Յիսուս Քրիստոս է,
 Այն որ տէր կենդանեաց էւ մեռելոց է.
 Իսկ որ արարածոց երկիրպագանէ,
 Նմա անլոյս խառարն պատրաստեալ է:



ՅԱՄՕԹ ԼԻՆԵԼՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՑ
 ԵՒ ՆԱՔՈՎՐ ԵՂԵԱԼ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
 ԵՒ ԳՆԱՅԵԱԼ ՅԱՆԱՊԱՏՆ ԼԻՆԻ ԿՐՕՆԱԻՈՐ

Յորժամ Նաքովր ասաց զայս հաւատոյ բան,
 Փիլիսոփայքն ամենայն զամօթի հարան.
 Տալ նմա պատասխանի, այլ ոչ կարացին,
 Առեալ զՆաքովր Յովասափ տարաւ առանձին:
 Զգիրս կախարդութեան իւր Նաքովր այրեալ,
 Գնացեալ յանապատ էւ անդ մկրտեալ.
 Յուսով էւ հաւատով ՚ի տէր հաստատեալ,
 Եւ մինչէս ցօր մահուն անդ կրօնաւորեալ:
 Դարձեալ՝ ՚ի տրտմութեան Աբենէր լինէր,
 Եւ միշտ էւ հանապազ ՚ի դառնութեան էր.
 Քանզի որ ՚ի կախարդն ապաւինեալ էր,
 Ետես զնա Քրիստոնեայ՝ որդւոյն իւր ընկեր:
 Յայնժամ ՚ի միասին զիշխանսն կոչէ,
 Եւ դառնացեալ սրտիւ խրատ հարցանէ.
 Թէ զինչ հնարս որդւոյ իւրում գտցէ,
 Զի ՚ի կռապաշտութիւն զնա արկանիցէ:

Կախարդ մի այլ ցուցին՝ Թեղաս անուն,
 Ի սատանայէ ուսեալ բանիբուն.
 Եւ դիւաց եղեալ ծառայ մեծանուն,
 Եւ զմարմինն արարեալ էր նա նոցա տուն:
 Որ միշտ է հանապազ յանապատի կայր,
 Եւ դիւացն դասուց եղեալ էր դադար.
 Նա մերկ է գլխիբաց է բոկ ոտամբ կայր,
 Եւ անդադար ՚ի ջար զմարդիկ որսայր:
 Յուդարկէ է կոչէ թագաւորն զնա,
 Զամենայն թաղաքն առեալ ընդ առաջ էրթայ.
 Փառօք մեծարանօք առեալ է դառնայ,
 Թերեւս Յովասափոս հնարս գտցէ նա:
 Ասաց Թեղաս թէ ես հնարս գտանեմ,
 Եւ զՅովասափ ՚ի կուռսն դարձուցանեմ.
 Յաղանդոյն Բարդամուս զնա որոշեմ,
 Եւ զկամս թագաւորիդ փութով կատարեմ:
 Արդ հան նախ զմանկունսն ՚ի տանէ նորս,
 Եւ փոխանակ մանկանց՝ տար աղջկունս առ նա.
 Եւ ես զցանկութեան դէն յղեմ ՚ի նա,
 Որ յախտ պոռնկութեան շարժեսցէ զնա:
 Յայնժամ Աստուածն Յիսուս յոր հաւատաց նա,
 Բարկութեամբ զայրանայ ՚ի գործս նորս.
 Քանզի է մեղսասերն ատելի նորս,
 Եւ Յովասափ անդրէն ՚ի կուռսն դառնայ:
 Հրաման ետ թագաւորն՝ զմանկունսն հանին,
 Եւ կայս աղջկունս առ նա բերեալ կացուցին.
 Իսկ Յովասափ լցեալ շնորհօք Յիսուսին,
 Ոչ ինչ կարաց յաղթել զնա թշնամին:

Քանզի աղօթելով զԱստուած աղաչէր,
 Զդէն պռնկութեան 'ի բաց հալածէր,
 Քան զգեղեցիկն Յովսէփ զգաստագոյն էր,
 Որպէս 'ի մայր է. 'ի բոյր յաղջկունսն հայեր:
 Յայնժամ Թեղաս կախարդն առ Յովասափ գայ,
 Եւ ջարաջար բանի. խրատէ զնա.
 Իսկ նա առ Զար ծէր, զբերան քո կարկէա,
 Սաստեցէ 'ի բեզ Յիսուս' Աստուածն իմ արքայ:
 Սկսաւ սուրբն Յովասափ զնա խրատել,
 Զօրէնս Աստուծոյ' Թեղասայ պատմել.
 ՅԱղամայ հետէ նմա քարոզել,
 Զտնտեսութիւն բանին Աստուծոյ ճատել:
 Հոգւոյն սրբոյ շնորհքն 'ի նա ծագեցաւ,
 Զմոյրութիւն դիւաց փութով ուրացաւ.
 Քարոզութեան նորա յոյժ հաւանեցաւ,
 Եւ գայն նոյն ժամայն գառն էրեւեցաւ:
 Գնացեալ առ բագաւորն ասաց թէ Արքայ,
 Յորդին քո ճշմարիտ շնորհաց հոգի կայ.
 Արդ էս բանի. նորա եղէ Քրիստոնէայ,
 Զկոռուսն էւ զդիւաց գունդն մոռացայ:
 Զկախարդութեան գրեան զամենայն այրեաց նա,
 Գնաց մկրտեցաւ նման Նաթովրայ.
 Եղէ. Սուրբ ճգնաւոր' ընտիր Քրիստոնէայ,
 Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ ծառայ:





ՎԱՍՆ ԲԱԺԱՆԵԼՈՅ ԱԲԵՆԵՐԱՅ ԹԱԳԱԻՈՐԻՆ


ՋԵՐԿԻՐՆ ԻԻՐ ԸՆԴ ՅՈՎԱՍՏՔՈՒ


ՈՐԴՒՈՅ ԻԻՐՈՒՄ ԵՒ ՆՈՐԱ ԱՐԱՐԵԱԼ

ՋԱՄԵՆԵՍԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՍ

Իսկ Աբեներ չգիտեր թե զինչ առնիցե,
 Զորդին ՚ի կամաց իւրոց հանել չկարեր.
 Վարել յօտար աշխարհ եւս չհանդուրժեր,
 Սպանանել զնա անհնարին էր:
 Ապա մեծամեծօք խորհուրդ արարեալ,
 Զերկիրն իւր զամենայն յերկուս բաժանեալ.
 Զմի մասն իւրում որդւոյն կամաւ տուեալ,
 Եւ Յովասափ զնացեալ անդ թագաւորեալ:
 Գտեալ Եպիսկոպոս մի նա փախուցեալ,
 Որ յահե հօրն իւրոյ էր նա թագուցեալ.
 Բերեալ զնա Յովասափ առաջնորդ կարգեալ,
 Քաղաքին եւ երկրին հովիւ կացուցեալ:
 Եկեղեցիս բազումս անդէն շինեցին,
 Զկուռսն եւ զմեհեանսն կործանեցին.
 Եկեղեցեաց սահմանս եւ կանոնս եղին,
 Զօրէնս Քրիստոնէից անդ հաստատեցին:
 Օր ըստ օրե զբազումս անդ մկրտելով,
 Եւ դառնային ՚ի տեր պայծառ հաւատով.
 Զառաջին պղծութիւնսն մերկանալով,
 Եւ նոր բարս վարուց յանձինս բերելով:

Ամենայնի պարգեւս Յովասափ շնորհեր,
 Հանդերձս պատուականս նա ազուցաներ,
 Զամենեսեան ՚ի նոյն հաւատս յորդորեր.
 Ոսկի արծաթ եւ այլ ինչս պարգեւեր:
 Քաղաքական օրհնս եւ սահմանս եղեալ,
 Զգողս եւ զաւագակս յերկրեն փախուցեալ,
 Զշնացողս եւ զմարդասպանս յաշխարհեն զատեալ,
 Խրատու սուրբ օրինաց զնոսա պարսպեալ:
 Յամենայն տեղիս Խաչն կանգնեցաւ,
 Անունն Քրիստոսի փառաւորեցաւ.
 Կարողութիւն դիւրացն կործանեցաւ,
 Եւ յոյսն հաւատոյ անդ հաստատեցաւ:
 Ով որ զՅովասափու ճայնն լսէին,
 Յօտար աշխարհէ առ նա երթային.
 Ի տեսութիւն նորա ուրախ լինէին,
 Յիմաստութիւն շնորհացն զարմանային:
 Իսկ արքայն Աբեներ աջօր տեսաներ,
 Զի ժողովուրդ երկրին իւրոյ պակասեր.
 Փառք իշխանութեան որդւոյն յաւելեալ լիներ,
 Եւ բազմութիւն զօրաց առ նա ժողովեր:
 Յայնժամ ծագեաց ՚ի նա շնորհքն երկնային,
 Փարատեաց զխաւար մտաց եւ սրտին.
 Իմացաւ զի կուռքն այն ընդունայն էին,
 Եւ հաւատաց փառաց որդւոյ Միածնին:






ԳՐԷ ԹՈՒՂԹ ԱԲԵՆԷՐ ԱՌ ԱՐՔԱՅՆ ՅՈՎԱՍԱՓ
ԵՒ ՆԱ. ԳՆԱՅ ԱՌ ՆԱ.

ՅԱբեներ արքայէ ողջոյն իմում որդւոյ,
Սիրասնունդ զաւակ՝ իմ հոգւոյս հոգւոյ.
Կարօտեայ փափաքիմ տեսոյդ բաղքազոյն,
Յովասափ բագաւոր ծառայ բարձրելոյն:
Իմացայ ճշմարիտ ՚ի բոլոր սրտե,
Յոր դու հաւատացեր՝ ստոյգ Աստուած է.
Չաստուած մեր ոչինչ՝ դատարկ է ունայն է,
Եւ պաշտօնեայն նորա մտօք խաւար է:
Արդ զառաջին ջարիսն զոր էս գործեցի,
Եւ գ՛րիստոնեայս բազումս զոր ջարջարեցի.
Անճն իմ զարհուրի յահէն Քրիստոսի.
Երկնչիմ թէ զանպիտանս ոչ էս ընդունի:
Արդ թէ գիտես զի նա ինճ կամեցող է,
Եւ զառաջին խաւար գործսն իմ ոչ յիշէ.
Յայնժամ յօժար կամօք սիրտ իմ փափաքի,
Եւ զՅիսուս ճշմարիտ Աստուած դաւանի:
Կարօտ էմ էւ ցանկամ զքեզ տեսանել,
Զորդիդ իմ զանդրանիկ գրկով համբուրել.
Զօրէնս Քրիստոնէից ՚ի քէն ուսանել,
Եւ ճշմարիտ Աստուածն քո ճանաչել:
Զթուղթն առ Յովասափ տարան էւ տային,
Կարդաց էւ փառս էտ՝ անմահ Արքային.
Որ հանապազ կամի զդարձ մեղաւորին,
Եւ ծառանգորդ առնէ ՚ի փառսն վերին:

Ելեալ ուրախութեամբ առ հայրն զնաց,
 Գորովագութ սիրով զարքայն ողջունեաց.
 Լցեալ ուրախութեամբ ՚ի Հոգւոյն շնորհաց,
 Եւ Յովասափ սկսաւ խօսել յօրինաց:
 Իսկ Աբեներ արքայն՝ բարձրաձայն գոչե,
 Թե՛ ճշմարիտ Աստուած՝ Քրիստոնէիցն է.
 Յիսուս Քրիստոս փրկիչ ծնեայն ՚ի կուսե,
 Երկրպագեմ նմա ՚ի բոլոր սրտե:
 Քաղաքն հաւասար՝ զնոյն ասացին,
 Քրիստոսի Աստուծոյ ծունր կրկնեցին.
 Ձերբորդութիւնն սուրբ խոստովանեցին,
 Ձկուռան էւ զմեհեանսն կործանեցին:
 Ձեպիսկոպոս մի Յովասափ բերեալ,
 Յորմէ Աբեներ եղէ մկրտեալ.
 Հօրն կնքահայր՝ ինքն որդին եղեալ,
 Նոյնպէս զայս խորհուրդ էւ այլքն ընկալեալ:
 Քաղաքն ամենայն անդ մկրտեցան,
 Սպիտակազգեստ լեալ նորոգեցան.
 Ի բարութիւն Տեառն սիրով փութացան,
 Եւ զառաջին ջարիսն իւրեանց մոռացան:
 Այլ Աբեներ արքայն զՅովասափ կոչեաց,
 Ձերկիրն զամենայն իւր որդւոյն յանձնեաց.
 Ամիս մի առանձին նա ապաշխարեաց,
 Պահօք էւ աղօթիք արտասուօք էլաց:



ԲԱՅՈՒՆ

ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆ ԱԲԵՆԵՐԱՅ ԱՐՔԱՅԻ

ԵՒ ԹԱԳԱԻՈՐԵԼՈՅ ՈՐԴԻՈՅՆ ԻԻՐՈՅ ՅՈՎԱՍԱՓՈՒ

Սբէնէրայ մահոռ օրն հասանէր,
 Կոչեայ գՅովասափ եւ անդարձ առնէր.
 Զառաշին ջարուքիւն գործոցն իւր յիշէր,
 Եւ 'ի դատաստանէ առնէրն սարսէր:
 Իսկ Յովասափ որդին մխիթարէր զնա,
 Ասէ Մի երկնջիւր հայր իմ եւ արքայ,
 Զի որ որ կամաւ առ Ասատուած դատնայ,
 Զանցեայ գործս մեղաց անտես առնէ նա:
 Քանզի հայր բարեգութ եւ ողորմած է,
 Արարիջ' ինամիջ եւ մարդասէր է.
 Մեղաւորաց դարձի միշտ կամեցող է,
 Անոխակայ է նա եւ անյիշաջար է:
 ՅԱւետարանի անդ սուրբ' նա զայս ասէ,
 Թէ Մի մարդ մեղաւոր որ ապաշխարէ.
 Հրեշտակաց յերկինս ուրախութիւն է,
 Զի պատկէր Աստուծոյ երկնաւորի է:
 Քանզի զմաքսաւորին զմեղսն ջնջեաց,
 Զպոռնիկն արդարացոյց եւ ոչ անարգեաց,
 Քանանուհւոյն լուեայ զդուստրն բժշկեաց,
 Աւագակին զդուռն դրախտին եբաց:
 Արդ մի յուսահատիր, հայր իմ թագաւոր,
 Այլ երբ առ Արարիջն քո երկնաւոր.
 Եւ նա անտես ջառնէ յահաւոր ատենի,
 Այլ պսակաց առնէ զքեզ արժանի:

Յայնժամ հաղորդեցաւ մարմնոյ կենսատուին,
 Եւ աննդեաց զհոգին 'ի ձեռս Արարչին.
 Ժողովեալ 'ի վերայ նորա կոծ մեծ արարին,
 Առեալ մեծաւ պատուով' տարեալ թաղեցին:
 Իսկ Յովասափ արքայն անդէն դադարեալ,
 Եւ եօթն օր 'ի վերայ տապանին կացեալ.
 Զտիւ եւ զգիշեր աղօթս արարեալ,
 Արտաստօք պաղատանս առ Տէր մատուցեալ:
 Պատարագս մատուցին զաւուրս քառասուն,
 Բազում բաշխս արարին արքային հոգւոյ.
 Աղբատաց կերակուր եւ հանդերձս ետուն,
 Զծառայսն ազամեցին կամօքն Աստուծոյ:

ԹԵՃ

ԹՈՂԼՈՒ ՅՈՎԱՍԱՓ

ԶԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆՆ Ի ԾԱՌԱՅՆ ԻԻՐ

ԲԱՐԱՔԻԱՍ

ԵՒ ԻՆՔՆ ԳՆԱՅ ՅԱՆԱՊԱՏՆ

ԱՌ ԲԱՐԱՂԱՄ

Իսկ Յովասափ Արքայն խորհուրդ արարեալ,
 Զիշխանս եւ զմեծամեծս 'ի մի ժողովեալ.
 Բազում բանս օրինաց նոցա ասացեալ,
 Եւ զփառս այսմ աշխարհիս կամաւ անարգեալ:
 Ասաց թէ Աբենէր հայրն իմ փոխեցաւ,
 Փառք եւ մեծութիւնն նորա ոչնչացաւ.
 Գեղեցկութիւն պատուոյ նորա 'ի հող դարձաւ,
 Ահագին իշխանութիւնն 'ի միջոյ բարձաւ:

Վաղի գնոյն օրինակ՝ ինձ կամի լինել,
 Եւ գփառու եւ պատիւս յինէն խափանել.
 Արդ ես կամաւ իմով պարտիմ զայս ձգել,
 Եւ ՚ի Բարաքիաս ծառայն իմ յանձնել:
 Կոչեաց զԲարաքիաս առ ինքն եւ ասէ .
 Թէ զոր ինչ յիս տեսեր՝ գնոյն կատարեա,
 Սա այն Բարաքիաս բարեաց պատճառն է,
 Որ նախ Յովասափոս զՔարդամ ցուցեալ է:
 Առեալ զթագն եղ ՚ի գլուխն նորա,
 Զիշխանութիւնն յանձնեաց կամաւ նմա .
 Բարաքիաս նմա պատասխանի տայ,
 Թէ էր բռնադատես զիս այսօր, արքայ:
 Քանզի դու որ որդի թագաւորի ես,
 Եւ այսմ իշխանութեան արժանաւոր ես.
 Կամաւ դու ՚ի դմանէ գփախուստ խնդրես,
 Զիմրդ զիս զծառայս քո յայս հրաւիրես:
 Յովասափ թագաւորն զնա խրատէ,
 ԶԲարաքիաս կամաւ ՚ի հաւան ածէ.
 Յարեւելս դարձեալ՝ եւ աղօրս առնէ,
 Զթագն ՚ի գլուխն եղեալ՝ արքայ հաստատէ:
 Յայնժամ քաղաքն ամենայն ՚ի մի ժողովեալ,
 Յողբ եւ ՚ի կոծ բարձրաձայն գոչեալ.
 Ի ճիչ եւ յաղաղակ, յարտասուս հարեալ,
 Եւ վասն Յովասափոս մեծ կոծ արարեալ:
 Զգրկելն յարքայէն իւրեանց ողբային,
 Լայականաց բարբառ անդ արձակեին.
 Թող խաւարի ասէն արեւ եւ յուսին,
 Ի բաժանել ՚ի մէնջ մերոյ արքային:

Զի Յովասափ արքայն՝ աջաց մեր յոյս էր,
 Աղբիւր յորդախաղաց դրախտին կենաց էր.
 Այգի քաղցրաճաշակ՝ ծառ անթառամ էր,
 Անուշահոտ վարուք՝ վարդ մանուշակ էր:
 Պարիսպ ամուր էր սա յերկրիս Հնդկաստան,
 Պատճառ բարեաց եղէ քրիստոնէութեան.
 Կարգաց եկեղեցւոյ է դաւանութեան,
 Արդար ՚ի դատաստան՝ վանիչ ջարութեան:
 Այսօր արդարութիւն մեր խափանեցաւ,
 Եւ ջահ եկեղեցւոյ մերոյ փութով շիջաւ.
 Մեր անթառամ ծաղիկն թառամեցաւ,
 Փլաւ այգւոյ պարիսպն է յաւեր դարձաւ:
 Այսօր մեր թագաւորն ՚ի մենջ բաժանի,
 Զմեզ անտէր թողու ՚ի վերայ երկրի.
 Հովինն Հոգեւոր բանաւոր հօտի,
 Այսօր յոջխարաց իւրոց հեռացի:
 Արդ գայս է որ սոցին նման ասեին,
 Յողբ է յարտասուս զարքայն շարժեին.
 Յայնժամ նա համբուրեալ սիրով գնոսին,
 Ելեալ գնայր, էւ նորա գհետ երթային:

ԷԳ՝

ՎԱՍՆ ԳՆԱԼՈՅՆ ՅՈՎԱՍԱՓՈՒ ՅԱՆԱՊԱՏ

Ելեալ Յովասափու յերկրէն հեռացաւ,
 Լայով ժողովուրդն այսրէն դարձաւ.
 Նա գնացեալ աղքատի միում դիպեցաւ,
 Եմուտ ՚ի տունն նորա էւ անդէն ազաւ:

Առաւօտուն էլեայ զհանդերձսն հաներ,
 Զբեհեզն եւ զծիրանին՝ աղբատին շնորհեր.
 Եւ ինքն զմագեղեն քուրճն իւր ազաներ,
 Զոր ՚ի վարդապետեն իւրմէ առեայ եր:
 Յերկիրն Երիտացոց զնացեայ հասանե,
 Ամիսս երկու՝ ճանապարհ առնե:
 Յանկարծ յանապատին ծերոյ հանդիպի,
 Նմա հարցանե զտեղի սրբոյն Բարդամի:
 Իսկ ծերն պատուական նմա ցուցանե,
 Եւ Յովասափ փութով անդր ժամանե.
 Տեսեայ ծերն Բարդամ զնա ողջունե,
 Զբարեաց պատճառն զԱստուած նա փառասորե:
 Յայնժամ եհարց ցնա զամենայն կարգաւ,
 Թե ո՞րպէս ՚ի հօրեն իւրմէ նա զերծաւ.
 Կամ զիսորդ զմեծութիւն իւր նա ուրացաւ,
 Եւ ՚ի փառաց իւրոց կամաւ հեռացաւ:
 Ասաց թե Քրիստոսնեայ զհայրն իմ արարի,
 Եւ զաշխարհն ամենայն յԱստուած դարձուցի.
 Լուեայ ծերն Բարդամ զբանն Յովասափի,
 Օրհնեաց զարարիչն երկնի եւ երկրի:
 Յայնժամ էլեայ երկոքեան աղօթս արարին,
 Ճաշու ժամու զխորհուրդն կատարեցին.
 Գոհացան զԱստուծոյ հոգով ցնծացին,
 Եւ տեսութեամբ միմեանց ուրախ լինեին:
 Կերակուր պատրաստեաց Բարդամ եւ Էբեր,
 Ասաց. Արքայորդիդ, հրամայեա եւ կեր.
 Զի եր բանջար՝ արմաւ՝ եղջիւր զոր Էբեր,
 Եւ աղ եւ հաց եւ այլ միրգ եւ ծառոց բեր:

Կերեայ ուրախութեամբ զԱստուած օրհնեցին,
 Յարեան զխաղաղական զաղօթսն ասացին.
 Սակաւ մի ննջելով եւ հանգիստ առին,
 Յետոյ զգիշերային աղօթսն արարին:
 Դարձեայ առ Յովասափ Բարդամ զայս ասե,
 Թե իմ օր մահուն եկեայ հասեայ է.
 Արդ թող ձեռն քո զմարմինս իմ թաղեսցե,
 Եւ օրհնութիւն Փրկչին ՚ի քեզ մնասցե:
 Կանգեայ մատոյց զխորհուրդ Սուրբ Պատարագին,
 Հաղորդեցաւ եւ ետ զայն Յովասափին.
 Անկեայ աւանդեաց առ Աստուած զհոգին,
 Թաղեցաւ ձեռամբ իւրոյ աշակերտին:
 Հարիւր եւ ուր ամ Բարադամ եկեաց,
 Եօթանասուն եւ հինգ յանապատի եկաց.
 Շնորհօքն Քրիստոսի յերկրի ձգնեցաւ,
 Անպատում պարգեաց նա արժանացաւ:

ԲԳՕ

ՎԱՍՆ ՏԵՍԼԵԱՆՆ ՅՈՎԱՍԱՓՈՒ

ԵԻՄԱՀՈՒԱՆ ՆՈՐՍ.

Յորժամ թաղեաց զնա որդի արքային,
 Ննջեայ տեսիլս ետես ՚ի մեջ գիշերին.
 Զի արք լուսապայծառք զԲարդամ տանեին,
 Եւ ՚ի խորանս երկնից հանգուցանեին:
 Այլ եւ երկուս արձուս ոսկիս տեսանե,
 Երկու պսակ լուսոյ՝ զոր մարդ տեսեայ չե.
 Եհարց թե Այս ամենայն ո՞ւմ պատրաստեայ է,
 Ասեն թե Մին քեզ՝ եւ միւսն հօր քում է:

Իսկ Յովասափ ասէր զայս տրտնջելով,
 Թէ ես բազում ամօք յերկրի ճգնելով.
 Եւ հայր իմ մի ամիս ապաշխարելով,
 Զիարդ եղէ նմա հաւասարելով:
 Բարդամ յերագի զնա իւրատե,
 ԶՅովասափու խորհուրդն յանդիմանե.
 Զառակաց մշակին օրինակ բերե,
 Յետնոցն եւ առաջնոց մի դահեկան է:
 Այլ Յովասափ կացեալ յանապատին,
 Երեսուն եւ եօթն ամ ճգամբք մեծագին.
 Եւ մինչ եթող զփառս իւր զհայրենին,
 Քսան եւ հինգ ամաց էին առուրք նորին:
 Վարսուն երկու ամաց՝ հասանե վախճան,
 Յովասափու մեծի ճգնաւորին այն.
 Այնմ որ եթող զփառս եղծական,
 Եհաւ անանց կենացն յաւիտենական:
 Եկեալ կրօնաւորաց թաղեցին զնա,
 Յետոյ Բարաքիաս արքայն իմանայ.
 Գնացեալ յանապատեն տայ հանել զնա,
 Տանել եւ թաղել առ հօրն նորա:
 Բազում բժշկութիւն նոքօք կատարի,
 Ի փառս ամենագօր Հօրն երկնաւորի.
 Եւ Որդւոյն Միածնի Փրկչին Յիսուսի,
 Ամենասքանջ Հոգւոյն Սրբոյ ճշմարտի:
 Ի թուականիս Հայոց՝ որ ութ հարիւրն է,
 Ուրսուն եւ երեք ՚ի նոյն յաւելեալ է.
 Ոտիւք ջափեցաւ այս յԱռաքելոյ,
 Վարդապետ կոչեցեալ՝ ՚ի Բաղիշեցւոյ:



ԻԳՆԱՏԻՈՍԻ

ԱՐԱՐԵԱԼ

ՄԱՐՄՆԱԽԱՂԱՑ ՓՈՐՁԻ



Եթիւն որուք գաղտն խաղայ՝ շահու և մեծութեան նշան է, պատիւս և բարիս գտանէ, անուն նորա հռչակի, 'ի բարի ճանապարհ երթայ և ուրախ լինի:

Եթէ գագաթն (տէփէ) խաղայ՝ բարւոք է, և սիրի յամենեցունց, մեծութեան և փառաց հանդիպի, մեծ թագաւոր տեսանէ, յիշխանաց պատիւ առնու, 'ի ճանապարհ երթայ, շահի և ուրախ լինի:

Եթէ ծոծրակն (էնսէ) խաղայ՝ զերծանի 'ի չարեաց և 'ի հոգոց, 'ի նեղութենէ և 'ի տանջանաց:

Եթէ աջ կողմն գլխոյն (պաշտն սաղթէրաֆը) խաղայ, զոր ատեն՝ սիրէ, երկայն ճանապարհ գնայ, և բազում շահի, բարւոյ

հանդիպի և դառնայ բարութեամբ • թէ
 ձախ կողմն գլխոյն (պաշըն սօլ թէրաֆը) խա-
 ղայ՝ ՚ի չարէ ազատի, կամ որդի լինի • մե-
 ծամեծ բարիք դան նմա յաւազաց և յազ-
 գէ, մեծութեան շահու և աւագութեան
 հանդիպի •

Աթէ գլխոյն վերին կողմն (պաշըն եօգար-
 քի թէրաֆը) խաղայ՝ ՚ի հոգս անկանի, բայց
 պատիւ առնու •

Աթէ ամենայն գլուխն (պիւթիւն պաշը)
 խաղայ՝ բարեաց և բազում իրաց հանդիպի •
 բազում ինչ անկանի նմա • գաղտնի իրս տե-
 սանէ և լսէ •

Աթէ ճակատն (ալն) խաղայ՝ պատուի
 ՚ի բազմաց • և զամենայն զոր ասէ՝ առնէ •
 գանձ գտանէ, դատաւորութիւն վայելէ,
 փառաւորի յաւազաց և փառաց հասանէ •

Աթէ աջ քներակն (սաղ շահ տամար)
 խաղայ՝ նոյնպէս փառաւորի յաւազաց • ՚ի
 սգոյ զերծանի, ՚ի հոգս անկանի յաղադս կա-
 նանց՝ և մեռանի • թէ ձախ քներակն խաղայ՝
 լիութեան և խնդութեան հանդիպի, շնորհս
 առնու • պատուոյ և մեծութե է խորհուրդ •
 կամ կռուի ընդ մարդոյ •

Աթէ աջ յօնքն (սաղ գաշ) խաղայ՝ բերկ-
 լութիւն է և կորուստն գտանի • թէ ձա-

խըն՝ լիութեան և խնդութեան հանդիպի ,
երկար կեանս ստանայ և շահի , կամ նշան
է հիւանդանայոյ :

Աթէ յօնամեջն (գաշըն իչի) խաղայ՝ համ-
բաւ լսէ ներդութեան , անպատեհ բանս առ-
նէ , տրտմի և վերաւորի :

Աթէ աջ աչաց առաջոյ աղբիւրն (սաղ
կէօզիւն էօն չէշմէսի) խաղայ՝ անձկութեան ,
սգոյ և տրտմութե հանդիպի , բայց բարիս
գտանէ , կամ ընդ թշնամւոյն կռուի , վէրք
և լալիւն լինին : Թէ ձախ աչացն՝ բազում
բարւոյ և առողջութեան հանդիպի . զհե-
ռաւորն տեսանէ և վշտանայ :

Աթէ աջոյ աչաց յետին աղբիւրն (սաղ
կէօզիւն արտ չէշմէսի) խաղայ՝ բազումբար-
ւոյ հանդիպի , զիւր հեռաւորն տեսանէ և
խնդայ , իրաց հանդիպի և վայելէ : Թէ
ձախոյ աչացն՝ ընչից և մեծութեան հան-
դիպի . մօտենայ առ աւագս , տեսանէ աղ-
գահան և խնդայ . բարութիւնս կամ ինչս
ժառանգէ՝ ի նմանէ , թէ շատ թէ սա-
կաւ՝ իրս գտանէ :

Աթէ աջ աչաց վերին կոպքն (եօզարքի
քիրփիք) խաղան՝ մեծութիւն և պատիւ է .
մեծանայ յաւագաց , ինչս ժողովէ և ցըն-
ծութիւն կրէ , կամ արտասուէ և տրտմի ,

բայց փութով զերծանի : Թէ ձախ աչացն՝
ատելութիւն և կոծ է , բայց յետոյ բարի
է , ուրախութիւն և խնդութիւն . ևս և
տաղտկալի ոք հիւր գայ :

Եթէ աջ աչաց ներքին կուզն (աշաղքի
քիրովիք) խաղան՝ ՚ի հեռի ճանապարհ եր-
թայ , զհեռաւորն տեսանէ , բարիս գտանէ
և խնդութիւն : Թէ ձախ աչացն՝ բազում
բարւոյ հանդիպի . ցանկայ և հասանէ ,
ցնծայ և ուրախ լինի , կամ ազգի ատելու-
թիւն է . լաւոյ և սգոյ հանդիպի :

Եթէ աջ բիրն (կէօզ պէպէյի) խաղայ՝
անձկութիւն է : Թէ ձախն՝ բարիս գտանէ :

Եթէ աջ ախն (սաղ կէօզ) ամենայն
խաղայ՝ բազում բարւոյ հանդիպի , առող-
ջանայ և ազատի ՚ի դժուարութենէ . ՚ի
մեռելոց և յրնտանեաց ինչս ժառանգէ , և
հեռաւորն գայ : Թէ ձախն՝ բազում և ա-
ռատ բարւոյ հանդիպի . մեծարի յաւագաց
և գանձս , պատիւ և մեծութիւն գտանէ ,
բայց անձկութիւն կրէ և զչարի :

Եթէ աջ ախն ամենայն վայրօքն խաղայ՝
զիւր հեռաւոր մարդն տեսանէ . Թէ ձա-
խն՝ հիւանդանայ , բայց ապրի :

Եթէ վերին արտեանունքն աջոյ (եօ-
գարքի կէօզ գափաղը) խաղան՝ հեռաւոր ոք

գայ նմա , տրտաի և լայ , բայց գործ նորա
ըստ կամացն լինի • Քէ ձախն՝ զհեռաւոր
ազգական տեսանէ և խնդայ , և առողջու-
թիւն և խնդութիւն և բարիս գտանէ •

Աթէ ներքին արտեանունքն աջոյ (ա-
շաղքի կէօզ գափաղը) խաղան՝ լայ և անձ-
կութիւն է , կամ մեծ բարիս գտանէ 'ի
մարդկանէ • Քէ ձախն՝ լայ և անձկու-
թիւն է , բայց իւր հեռաւորն գայ •

Աթէ գլխոյ սկաւառակն (պաշ թասը)
խաղայ՝ 'ի մեծամեծ մարդոց պատիւս առնու •

Աթէ աջ կողմն քթին (պուրունուն
սաղ թէրաֆը) խաղայ՝ սակաւ մի հիւան-
դանայ • յատելութենէ և 'ի նեղութենէ
զերծանի • կռուոյ և վիճի հանդիպի , որ
ոչ է ըստ կամաց նորա , բայց զօրանայ և
ազատի 'ի չարէն • Քէ ձախն՝ ինչս ժա-
ռանդէ , կամ որդի լինի նմա • մարտնչի ընդ-
թշնամւոյն՝ բայց յաղթէ • զոր խորհին յաջողի
նմա • 'ի հիւանդութենէ առողջանայ և
սիրոյ հանդիպի •

Աթէ ամենայն քիթն (պիւթիւն պու-
րուն) խաղայ՝ 'ի մեծամեծաց շահս առնու •

Աթէ քթի ծայրն (պուրուն ուճու)
խաղայ՝ 'ի պարտուց ազատի և մեծատուն
լինի •

Եթէ աջակողման ծայր քթին (պուրուն ուճուն սաղ թէրաֆը) խաղայ՝ ցաւոց հանդիպի : Թէ ձախն՝ յանկարծ մարդ կըռուի ընդ նմա :

Եթէ աջ քթափողն (պուրուն տէլիսի) խաղայ՝ ընդ մարդոյ սէր դնէ : Թէ ձախն՝ ՚ի պարտուց աղաթի :

Եթէ քթին օղն (պուրուն հալգասը) խաղայ՝ մեծատուն լինի :

Եթէ երկու ուղունքն (պուրուն տէլիքլէրի) խաղան՝ մեծատուն լինի , բայց իւրն ընտանի մեռանի :

Եթէ աջ այտն (եանագ) խաղայ՝ տրրտմութեան հանդիպի . գործ գործէ և ամաչէ . սակաւ մի հիւանդանայ և ողջանայ . դէպք և պատահարք պատահին նմա : Թէ ձախն՝ որդի լինի նմա և խնդայ . բերկրի , բարի սիրելոյ՝ գանձի և լիութեան հանդիպի :

Եթէ աջ քնատեղն (ույգու եէրի) խաղայ՝ անձկութիւն է , յոյժ հիւանդանայ , բայց ապրի : Թէ ձախն՝ ձայն գուժի լսէ և տրտմի . ՚ի ճանապարհ երթայ , և գործ նորա յաջողի :

Եթէ աջ երեսն (եիւզ) խաղայ՝ առողջութի է և գանձ գտանէ . ՚ի տեղւօջէ իւր

մէ փոխի և բերկրի • թէ ձախն՝ սակաւ մի
տրտմի և տկարանայ • վէրս ընդ ունի • պա-
կաս ցաւոց հանդիպի և վաղվաղակի մեռանի •

Թէ աջ կողմն կլափին (իւսթ չէնէ) խա-
ղայ՝ դառնայ ՚ի ճանապարհէն, բերկրի և
բազում բարիք լինին նմա, կամ սակաւ մի
տկարանայ • Թէ ձախն՝ ընդ ազգին իւրում
կուռի • հիւանդանայ, բայց ասորի • մեծու-
թիւն գայ նմա և ուրախ լինի •

Աթէ աջ կողմն կզակին (այթ չէնէ)
խաղայ՝ վիճի և կուռի ընդ ազգին իւրում •
սակաւ մի տկարանայ և բերկրի • ՚ի նեղու-
թիւն անկանի և Նստուած վրկէ ՚ի ցա-
ւոց և ՚ի չարէ ազատի • Թէ ձախն՝ հե-
ռաւոր ճանապարհորդ գայ յազգատոհմէն
իւրմէ, կամ գհեռաւոր ճանապարհ երթայ •
՚ի սակաւ ցաւոց ողջանայ և խնդայ •

Աթէ աջ ունկն (գուլագ) խաղայ՝ համ-
բաւ լսէ յազգականէ • խնդութիւն և լիու-
թիւն է • յանկարծ բարւոյ հանդիպի, սի-
րի յամենեցունց, շահի և զուարճանայ •
բայց տկարանայ կամ ազգականն մեռանի •
Թէ ձախն՝ հեռաւորն գայ • յիշեն զնա ՚ի
բարին ՚ի հեռի ուրեք • զնոյն բարի զոյց
լսէ • յանկարծ խնդութիւն և մեծ առող-
ջութիւն է • աչք աւազաց նմա քաղցրա-

նան • մեծութիւն գայ նմա՝ ուստի ակն ոչ
ունէր :

Եթէ աջոյ ունկան բլթակն (գուլագ
եռւմշաղը) խաղայ՝ ընդ մարդոյ դատախազի •
Թէ ձախն՝ զինքն ՚ի բարին յիշեն :

Եթէ աջոյ ունկան վերին կողմն (գու-
լաղըն իւսթ թէրաֆը) խաղայ՝ ՚ի հոգս ան-
կանի : Թէ ձախն՝ յանկարծ գանձ գտանէ :

Եթէ աջոյ ունկան ներքին կողմն (գու-
լաղըն ալթ թէրաֆը) խաղայ՝ բարիս գտա-
նէ՝ ուստի ակն ոչ ունէր : Թէ ձախն՝ չէ
բարի •

Եթէ ամենայն բերանն (պիւթիւն աղ-
ղը) խաղայ՝ ՚ի սրտէ սիրեցեալ սիրելի հե-
ռաւոր համբուրէ, և մեծարի ՚ի սիրել-
ւոյն :

Եթէ լեզուն (տիլ) խաղայ՝ կռիւ և
խռովութիւն է, ատելութիւն և աղաղակ •
Թշնամի խօսի ընդ նմա, անձկութեան և
վիճի նշան է :

Եթէ աջ կողմն լեզունն (տիլին սաղ
թէրաֆը) խաղայ՝ մեծատուն լինի : Թէ
ձախն՝ բարւոյ հանդիպի :

Եթէ լեզուն ամենայն (պիւթիւն տիլի)
խաղայ՝ ՚ի մատնողաց և ՚ի զրպարտողաց
զդոյշ լիցի և պատրաստ կացցէ :

Աթէ վերին շուրթն (իւսթ տուտագ) խաղայ՝ համբաւ լսէ սպանման, վէճ է և խըռովութիւն • կռիւ և ատելութիւն • անձկութիւն և փնաս • կամ հեռաւոր ոք գայ • նմա ճօշք են • վատ զրոյց լսէ և տրտմի •

Աթէ ներքինն՝ անձկութիւն կրէ, վիճի և յաղթէ • ում ցանկայ՝ հասանէ • հեռաւոր ոք գայ, և բարւոյ նշան է •

Աթէ շրթանց երկու կողմն (տուտագ լարրն իքի թէրաֆը) խաղայ՝ խօսս լսէ և վիճի • խնդայ՝ ՚ի զաւակէ • բամբասի ՚ի մարդկանէ • փնաս է՝ տրտմութիւն և սուգ •

Աթէ ներքին և վերին շրթունքն (ալթ վէ իւսթ տուտագլար) խաղան՝ սիրելի համբուրէ •

Աթէ աջ կողմն վերին շրթանն (իւսթ տուտաղըն սաղ թէրաֆը) խաղայ՝ կռիւ լինին և խօսք, ՚ի մարդկանէ անձկութիւն կրէ և ՚ի սուգ անկանի, կամ զաւակ լինի ուրախութեան, բերկրի և ուրախ լինի • Թէ ձախն՝ սէր խնդութիւն և խաղաղութիւն է • զաւակ լինի բարի և շնորհաւոր • յանկարծ խնդայ ՚ի զաւակէ, վճարէ ըզպարտս՝ և սիրելին իւր գայ •

Աթէ վերին շրթանց մէջն (իւսթ տուտաղըն օրթասը) խաղայ՝ համբուրէ զո և

կամի • զըոյց լսէ և տրտմի • Թէ ներքին
տրտմի •

Նթէ աջ կողմն ներքին շրթանն (ալթ
տուտաղըն սաղ թէրաֆը) խաղայ՝ բերկրի
և ուրախ լինի • Թէ ձախն՝ ուրախ լինի •

Նթէ աջ կողմն շրթանն (տուտաղըն
սաղ թէրաֆը) խաղայ՝ իւր անձին առող
ջութիւն է • Թէ ձախն՝ քաջ մանուկ ծը
նանի •

Նթէ շրթունքն (տուտագլար) խաղան՝
բարիք և մեծութիւնք գան նմա •

Նթէ աջակողման բերանոյ կապն (աղը
զըն սաղ թէրաֆտաքի պաղ) խաղայ՝ բարձ
րանայ և կոխէ զթշնամին իւր • Թէ ձախն՝
յաղթէ թշնամւոյն, ՚ի բարի հեռաւոր տեղ
երթայ, կոխէ գլար կամս և մեծանայ •

Նթէ աջ կողմն վերին բերանոյն (աղը
զըն եօգարքի սաղ թէրաֆը) խաղայ՝ գանձ
գտանէ • բերկրի և բարւոյ հանդիպի, ըն
չից և մեծութեան • Թէ ձախն՝ յաղթէ
թշնամւոյն, և բարւոյ հանդիպի • հեռա
ւորն գայ և զօրանայ • Թէ բերանոյն ա
ռաստաղն (աղըղ թավանը) խաղայ՝ յանձ
կութիւն անկանի •

Նթէ աջ կողմն առաստաղին (թավանըն
սաղ թէրաֆը) խաղայ՝ բարիս գտանէ և

ուրախ լինի • թէ ձախն՝ սակաւ ինչ հիւ
ւանդանայ , և վաղվաղակի առողջանայ •

Եթէ աջ կլափն (չէնէ) խաղայ 'ի թըշ-
նամեաց զգոյշ լեր • թէ ձախն՝ մեծ բա-
րութիւն գտանէ •

Եթէ աջ կողմն երախին (աղըզ) խա-
ղայ՝ հարստութեան նշան է • թէ ձախն՝
ընչեց •

Եթէ աջ կողմն կլափին (չէնէ) խաղայ՝
բերկրի և ուրախ լինի • և աչօքն բազում
բարիս տեսանէ • թէ ձախն՝ մեծութիւն
գտանէ •

Եթէ կլափին ծայրն (զազան , թաշ)
խաղայ՝ ոսկւոյ և կերպասուց հանդիպի •

Եթէ կլափն խաղայ՝ շահու նշան է •

Եթէ աջ խակ ստինքն (խամ մէմէ) խա-
ղայ՝ առողջութիւն է • թէ ձախն՝ խնդայ
և ուրախ լինի •

Եթէ փողքն (պօրու) խաղան՝ անձկու-
թեան բանս լսէ •

Եթէ աջ կողմն պարանոցին (պօյուն
սաղ թէրաֆը) խաղայ՝ 'ի հեռաւոր տեղեաց
շահ գայ նմա • բազում կերպասուց հանդի-
պի , և ընչեց տէր լինի • մեծութիւն առ-
նու , ուստի ակն ոչ ունի , և ուրախ լինի •
Թէ ձախն՝ գլխաւոր լինի և խնդայ • մե-

ծուծիւն առնու . լինի մեծատուն և ա-
ջօքն բազում բարիս տեսանէ . խնդուծիւն
և ողորմուծիւն գտանէ , կամ անպատեհ
իրս գործէ . և յաւազէ կամ յազգէ ընդ
վայր զրոյց լսէ :

Եթէ բովանդակ պարանոցն (պիւծիւն
պօյուն) խաղայ՝ մեծ նեղուծիւն գայ՝ ի վե-
րայ . կեանք նորա պակասին , կամ սրով հա-
տանի պարանոցն և տուն այրի :

Եթէ աջակողմեան թիկնամէջն (սրբթ
օրթասրնն սաղ թէրաֆր) խաղայ՝ անձկու-
ծիւն է . թէ ձախն՝ առնէ ինչ զոր չէ
արժան :

Եթէ աջ թէկն (սրբթ) խաղայ՝ յորո-
գայթէ զգոյշ լիցի : թէ ձախն՝ խնդայ բո-
լորով սրաիւ :

Եթէ թիկնամէջն (սրբթ օրթասր) խա-
ղայ՝ մեծատուն լինի ինքն :

Եթէ աջ անթատակն (գօլթուգ ալթր)
խաղայ՝ յիւրոց ձեռաց գործոյն մեծանայ :
Թէ ձախն՝ մեծուծեան հանդիպի . խնդու-
ծեան և սիրոյ նշան է :

Եթէ աջ քամակն (արգա) խաղայ՝ մե-
ծատուն լինի և բերկրի . կամ ցնորք է և
տրտմուծիւն , զգոյշ լիցի ՚ի չարէ և ՚ի կր-
նոջէ : թէ ձախն՝ առողջուծիւն է . նորս

ազանի , բարի լինի նմա , կամ անպատեհ
իրս գործէ .

Աթէ աջ թիկունքն (արգա) խաղան՝
նորս ազանի : Թէ ձախն՝ խնդիրք նորա
կատարին :

Աթէ աջ ծղին (գօլ) խաղայ՝ գլխացա-
ւի հանդիպի և լաւանայ . դարձեալ մաղ-
ձոյ հանդիպի և սեւամաղձոս լինի : Թէ
ձախն՝ խնդութիւն և ցնծութիւն է . զոր
ինչ բարի կամիցի գտանէ յընկերաց . պար-
գև 'ի մարդկանէ առնու , շահի և մե-
ծատուն լինի .

Աթէ աջ արմուկն (տիրսէք) խաղայ՝ սի-
րելոյ հանդիպի , սէր է՝ լաւ և բարի . 'ի
գործ արքունի մտանէ , կամ սակաւ մի տը-
կարանայ . գլուխն ցաւի և տրտմի 'ի ցա-
ւոց և հիւանդանայ . և Մստուած ազա-
տէ զնա 'ի հիւանդութենէ : Թէ ձախն՝ բարի
է և խնդութիւն . հիւրն գնայ՝ և զերծա-
նի . ցնծայ և բերկրի , կամ յօտարաց վե-
րաւորի և հիւանդանայ :

Աթէ աջ բազուկն (փազու) խաղայ՝
զայր և զկին համբուրէ , 'ի կնոջէ սիրի ,
հասանէ խնդութեան և սիրելի գտանէ .
Թէ ձախն՝ մեծ բարւոյ և շահու հանդի-
պի . բարի և շնորհաւոր է . պատուի 'ի

մարդկանէ և ինչս գտանէ :

Եթէ աջ թևն (գօլ) խաղայ՝ ցաւոյ և նեղութեան հանդիպի : Թէ ձախն՝ ՚ի բանտ մտանէ :

Եթէ աջ բազկի ձուն (փազու եռմուր-թասը) խաղայ՝ գլխացաւութեան հանդի-պի : Թէ ձախն՝ յիւրոյ ընտանեացն բարի զրոյց լսէ և բարի լինի :

Եթէ աջ ձեռաց թաթն (սաղ էլ ա-վուճու) խաղայ՝ վէճ գայ մեծ և հարուած • աղմուկ է • դարձեալ վիրաւորի ՚ի մարդկա-նէ : Թէ ձախն՝ առատութեամբ բարիս գտանէ • արծաթոյ և ոսկւոյ և գանձուց հանդիպի • յաւագէ իրս առնու , կամ վիճի ընդ մարդոյ :

Եթէ աջ ափն (ավուճ) խաղայ՝ բարի գործոյ հանդիպի , կամ կռուոյ և աղաղա-կի : Թէ ձախն՝ բազում բարւոյ հանդի-պի , կամ արծաթ շահի :

Եթէ աջ բութն (պաշ փարմազ) խա-ղայ՝ ՚ի մեծ մարդկանէ սիրի և պատուի • յաւագէ իրս առնու , անկասկած բարիս գտանէ , շնորհին նմա ՚ի մեծամեծաց պար-գեք և մեծութիւն , բարիս խօսին զնմանէ մարդիկ , ազգն կամ եղբարք նովաւ խնդան : Թէ ձախն՝ ինչս և պատիւս գտանէ • բա-

ըի լինինամա • բարւոյ և գանձուց հանդիպի •
 զինչ և կամիցի՝ առնու • ասի սուտ վասն
 նորա , և ինքն ՚ի մեղս անկանի :

Աթէ աջ ցուցամատն (ղամմազ փարմազ) խաղայ՝ չարոյ հանդիպի • բանս չարս լսէ • բամբասեն զնա , ՚ի զուր վերաւորի , ՚ի լեզու անկանի , չարիս խօսին զնմանէ առ մարդիկ : Թէ ձախն՝ բարի է և ուրախութիւն • խորհուրդ բարի խորհի , գութ գրտանէ , գովութիւնս լսէ , զոր ինչ և կամի գտանէ :

Թէ աջ միջին մատն (օրթա փարմազ) խաղայ՝ ՚ի վէճ անկանի • վիճի և յաղթէ թշնամւոյն • բարիս գտանէ՝ ուստի ակն ոչ ունի • փոխի ՚ի մեծ բան , մեծութիւն և ինչք պարգևին նմա ՚ի մեծամեծաց : Թէ ձախն՝ կռուոյ և անձկութե նշան է • վիճի և յաղթէ • ինչս գտանէ և խնդայ • վերժանի ՚ի տրամուտենէ , և բարիք գան ՚ի վերայ նորա :

Աթէ աջ ծագ մատին (սօն փարմազ) խաղայ՝ ՚ի բարին յիշի , բազում բարիս գրտանէ , մեծատուն լինի և շահի , խնդրու ածքն կատարին , հեռաւոր սիրելին գայ , դարձեալ յԱստուծոյ բարիս գտանէ : Թէ ձախն՝ զնա ՚ի բարին յիշեն , բազում բար-

ւոյ հանդիպի , յաւազէ մեծանայ , սրտով
յորդորի և խնդայ , և խորհուրդ սրտի
նորա յայտնի :

Եթէ աջ ծկոյթն (սրբա փարմագ) խա-
ղայ՝ ընչեց հանդիպի , գանձ գտանէ և հա-
րրատութիւն և պարգևս Մատուծոյ , զուր-
տրտմի , 'ի վտանգ անկանի՝ և զերծանի : Թէ
ձախն՝ վէճ է և աղաղակ . բանս չարս ա-
սեն վասն նորա , կամ բարձրանայ և մեծա-
նայ . 'ի տրտմութենէ ազատի , վասն բար-
ւոյ յիշի 'ի մեծամեծաց :

Եթէ աջ ձեռն (էլ) ամենայն խաղայ՝
պատուի 'ի մեծամեծաց , մեծարի 'ի մարդ-
կանէ , մեծատուն լինի և խնդայ , կամ չար
պատահէ նմա , վասն այնորիկ զգոյշ կացցէ :
Թէ ձախն՝ բարիս գտանէ ուստի ակն ոչ
ունի . 'ի մեծամեծաց պատիւս առնու ,
պարգևս 'ի թագաւորէ , խնդայ և մեծա-
տուն լինի . ամենայն ինչ յաջողի նմա :

Եթէ աջ ձեռաց ամենայն մատունքն
խաղան՝ տրտմի , բայց յետոյ բերկրութիւն
գայ նմա . չարն հեռանայ 'ի նմանէ և Մատ-
ուած ընդ նմա լինի : Թէ ձախն՝ գանձուց
և պատուոյ հանդիպի :

Եթէ աջ ձեռաց վերին թաթն (ափուճ)
խաղայ՝ նախանձ դնեն ընդ նմա և յաղթել

ոչ կարեն :

Աթէ աջ ուսն (օմուղ) խաղայ՝ առողջութեան նշան է, և նոր հանդերձս ազանի : Թէ ձախն՝ ինչ քանկանին նմա և խրնդայ, պարգևս Մ^ս սուծոյ առնու, պատուի 'ի մեծամեծաց :

Աթէ աջ սոխնքն (մէմէ) խաղան՝ ռոճկի և ուրախ լինի • ազգականքն պորանան, սիրելիքն և ծանօթք բաղմանան : Թէ ձախն՝ հեռաւոր մարդ տեսանէ և յրնտանեաց խնդայ, մեծութեան հասանէ, կամ վեճի հանդիպի, և ահամայ վերաւորի և դժուարի :

Աթէ աջ կողմն կրծանոցն (կէօյիւսլիւք) խաղայ՝ բարւոյ հանդիպի, 'ի չարէ և 'ի հոգոց ազատի • կերպասուց տէր լինի և մեծութեան հասանի, կամ գործ գործէ՝ զոր չէ արժան և ապաւաչէ յոյժ : Թէ ձախն՝ ամենեքեան սիրեն զնա, զչարն որ գալոց է՝ Մ^ս սոււած անցուցանէ 'ի նմանէ :

Աթէ ամենայն կուրծքն (կէօյիւս) խաղան՝ գիրկս արկանէ որում սիրեն • խնդութեան սկիզբն է, բերկրումն անձին, բարւոյ աւետիս, մեծատուն լինի և սէր գրտանէ :

Աթէ աջ կողմն սրտին (եիւրէյին սաղ

Թէրաֆը) խաղայ՝ բազմանան սիրելիքն և
 ուրախ լինի : Թէ ձախն՝ տրտմութիւն հա-
 սանէ :

Աթէ սիրան (եիւրէք) խաղայ՝ անձկու-
 թիւն է և հոգ : յիւրոց անտի ոք մեռանի ,
 յանկարծ անձկութեան և տրտմութեան
 հանդիպի :

Աթէ աջակողմեան թւոց ներքին կողմն
 (սաղ գօլուն իչ Թէրաֆը) խաղայ՝ յօտար եր-
 կիր երթայ : Թէ ձախն՝ հիւանդանայ և
 վաղվաղակի ողջանայ :

Աթէ աջ կողմն կողիցն (եան Թէրաֆ)
 խաղայ՝ շահու հանդիպի : 'ի տեղւոջէն փո-
 խի և 'ի ճանապարհ երթայ , սակաւ մի տը-
 կարանայ բայց յառնէ : Թէ ձախն՝ որդի
 ծնանի նմա , կամ 'ի ճանապարհ երթայ .
 փոփոխումն է տեղեաց 'ի տեղի :

Աթէ աջ ողինն (օնուրդա քէմիյի) խա-
 ղայ՝ կին առնու և զաւակ ուրախութեան
 լինի : Թէ ձախն՝ զաւակ բարի լինի նմա ,
 և մեծութիւն գտանէ :

Աթէ մէջ ողինն խաղայ՝ բարի է նմա :

Աթէ աջ և թէ ձախ մսանն (լօփ էթ)
 խաղայ՝ մեծատուն լինի :

Աթէ երկոքին մսանքն խաղան՝ մեծու-
 թիւն է նմա :

Եթէ աջ կուշտն (պէօյր) խաղայ՝ մեծութիւն գտանէ, կին առնու բարի, բարձրութիւն և խնդութիւն է, զոր ինչ խրնդրէ Մատուծոյ՝ կատարի, Թէ ձախն՝ նոյն պէս կին առնու և զաւակ ուրախութեան լինի, ՚ի հոգոց զերծանի, բերկրի և մեծ լինի:

Եթէ աջ կողմն փորոյն (գարն սաղ թէրաֆր) խաղայ՝ մեծանայ և ընչեղ լինի: Թէ ձախն՝ յոյժ լայ և տրտմի:

Եթէ ամենայն փորն (պիւթիւն գարն) խաղայ՝ զինչ կամիցի Մատուծոյ՝ տայ նրմա Մատուած:

Եթէ փորն խաղայ՝ բարի է և մեծութիւն:

Եթէ աջ կողն (գապուրղա) խաղայ՝ ՚ի հիւանդութենէ ազատի: Թէ ձախն՝ յայլ ճանապարհ երթայ:

Եթէ աջ և թէ ձախ կողմն կողին խաղայ՝ բարի է նմա:

Եթէ աջ կողմն (եան թէրաֆ) խաղայ՝ ուրախութիւն մեծ գտանէ: Թէ ձախն՝ որդի լինի նմա, կամ ՚ի մահու երկիւղէ ազատի:

Թէ պորտն (կէօպէք) խաղայ՝ շահ գայ նմա, իւր բարիքն բազմանան, զերծանի ՚ի

հոգոյ , կին առնուլ , կամ 'ի կնոջէ խնդայ :

Աթէ աջոյ կողման փոքրափորն (քիւլ
 չիւք գարն) խաղայ՝ մեծատուն լինի : Թէ
 ձախն՝ ինչս ընդունի Մատուծոյ , և յաղ-
 քատութենէ ազատի :

Աթէ փոքրափորն ամենայն խաղայ՝ բա-
 ըի զրոյց լսէ և խնդայ . բազմանան ինչք
 նորա . բարի կնոջ գիպի , և մեծատուն լի-
 նի :

Աթէ երանքն (պէլ) խաղան՝ մեծ բա-
 ըի լինի յաւազաց . Մատուած տայ զխնդրո-
 սւածս նորա , զինչ և կամի առնուլ . խոր-
 հուրդն կատարի , և արու զաւակ լինի ու-
 բախութեան :

Աթէ աջ կողմն երանացն խաղայ՝ մե-
 ծատուն լինի : Թէ ձախն՝ մեծանայ և ու-
 բախ լինի : Թէ ծայրն և կամ տակն խա-
 ղայ՝ մեծանայ , կամ մնասի :

Աթէ ծածուկ մարմինն խաղայ՝ յազգէ
 բարի գտանէ , խնդութիւն և ուրախու-
 թիւն :

Աթէ աջ ձուն (եռամուրթա) խաղայ՝
 մեծատուն լինի և ծերանայ , և կամք նորա
 կատարին : Թէ ձախն՝ յայլ կին մերձենայ ,
 և շնորհաւոր որդի լինի նմա , յոյժ բերկրի ,
 պատիւս առնուլ եւ գովի . 'ի տուն ցնծու-

Թեան երթայ, կամ հարսանեաց հանդիպի :

Եթէ երկու ձուն միանգամայն խաղան՝
 շորհաւոր որդի լինի :

Եթէ աջ ձուտասկն խաղայ՝ ինչս՝ առ-
 նու՝ ուստի ակն ոչ ունի, կամ յայտնի լինին
 գաղտնիք իւր : Թէ ձախն՝ առնու զո և
 կամի, և ուրախ լինի, կամ անձկու թիւն է :

Թէ ցայլ քն (գասրգ) խաղան՝ ընդ կը-
 նոջ ննջէ և ՚ի բարին յիշի : հասանէ որում
 ցանկայրն : դարձեալ զոր ինչ փափաքէ՝ առ-
 նու : խորհուրդ նորա կատարի և գործն
 յաջողի :

Եթէ աջ ցայլ քն խաղան՝ յաջողի իւր
 գործոյն : Թէ ձախն՝ ՚ի մեղս անկանի, և
 ՚ի չարէ զգոյշ կացցէ :

Եթէ աջ ձուն խաղայ՝ կատարի յոր ինչ
 ձեռնարկեալն էր : Թէ ձախն՝ խնդու-
 թիւն և բերկրութիւն է, խնդման և շա-
 հու հասանէ :

Եթէ մէջ ողինն (սրբթ քէմիյի) խաղայ՝
 բերկրի և խնդայ :

Եթէ աջ և թէ ձախ կողմն ողինն խա-
 ղայ՝ բարութիւն գտանէ և յաւար վարէ :

Եթէ նստոյ տեղին (ախ) խաղայ՝ չար
 է : տուգանաց հանդիպի, վաճառին իւր
 ինչ քն և վնաս կրէ : սուգ հանդիպի նմա,

անկասկած տրտմի :

Եթէ աջ բուժքի տրտաքին կողմն խաղայ՝ մատնի 'ի մարդոց • այլ Աստուած յաջողէ նմա՝ և զերծանի • և թշնամիք նորա մեռանին • զուր խօսին զնմանէ ուժգին • առ սեն բանս անպատեհս : Թէ ձախն՝ սուտ ասեն վասն նորա • բարի առնէ մարդոց և ոչ շահի • 'ի մեղս անկանի և անձկութիւն կրէ • բայց վաղվաղակի ուրախ լինի : Թէ երկու բուժքի ներքեւն խաղայ՝ անկանին ինչք նմա՝ ուստի ակն ոչ ունի • յանկարծ շահի • անշնորհ մարդոց բարի առնէ :

Եթէ աջ անդամն խաղայ՝ բարի է և խնդութիւն • ցնծայ և բերկրի • կամ գաղտ ասեն զնմանէ • սակաւ մի երկնչի • երկնչի յիւր անձնէն • տրտմութիւն է և վնաս : Թէ ձախն՝ բարի է • Աստուծով ուրախ լինի • նոր ազանի և խնդայ • կամ վտանգեն զնա • մարդ թշնամանայ ընդ նմա • և վընասու հանդիպի սակաւ մի 'ի գործս իւր : Եթէ անդամոց արտաքին կողմն խաղան՝ զօրութիւն է :

Եթէ աջ անդամոց արտաքին կողմն խաղայ՝ մեծանայ և բարձրանայ յոյժ : Թէ ձախն՝ բազում ընչեց տէր լինի :

Եթէ աջ անդամոց ներքին կողմն խաղայ՝

ղայ՝ անձկութիւն հասանէ : թէ ձախն՝
բերկրութիւն է :

Եթէ աջ ծունկն (տիզ) խաղայ՝ մօտե-
նայ առ աւազս , մեծութիւն և պատիւս
է . կամ ՚ի վէճ կամ ՚ի դատու անկանի : թէ
ձախն՝ առ աւազ մասնէ , ՚ի պատիւ ելա-
նէ . կատարի նորա բան առ աւազս , կամ
չար զրոյց լտէ :

Եթէ աջոյ կողման արտաքին ծունկն
խաղայ՝ մատնեն զնա , և անխնաս զերծանի :
թէ ձախն՝ առ ժամայն զերծանի :

Եթէ աջոյ կողման ներքին ծունկն խա-
ղայ՝ աւերիս լտէ : թէ ձախն՝ ՚ի դատաստա-
նէ ուրախ լինի և խնդայ :

Եթէ աջ սրունքն (պաճազ) խաղան ,
մեծութիւն է . ՚ի մեծամեծաց գովութիւնս
առնու : թէ ձախն՝ մեծութիւն է :

Եթէ աջ սրունքն ամենայն խաղան , ահ
որ կայ ՚ի վերայ նորա անցանէ : թէ ձա-
խն՝ յամենայն նեղութենէ ազատի :

Եթէ աջ ոլոքն (պալտըր) խաղան՝ յորում
է սրունքն՝ բարւոյ նշան է . վիճի և բարիս
գտանէ . ցանկայ և խնդայ . յիւրոյ մօտա-
ւորացն մարդ մեռանի . մօտենայ առ ա-
ւազս , պատիւս առնու և մեծանայ : թէ
ձախն՝ թշնամեաց յաղթէ , յոյժ բարի և շը-

նորհաւոր լինի, կամ սուգ է և տրտմու-
թիւն • այլ մտոյ բարիս գտանէ, պատ-
ուի Մատուծոյ, պարգևս և սէր առ-
նու ՚ի մեծամեծաց և մեծատուն լե-
նի •

Աթէ աջակողմն ներքին ոլորին խաղայ՝
բարի զրոյց լսէ և ուրախ լինի • Թէ ձախն՝
ի ճանապարհ երթայ •

Աթէ աջ կոճն (թօփուգ) խաղայ՝ սգոյ
և լալոյ հանդիպի • սիրելի ոք յիւրոցն մե-
ռանի և տրտմի • Թէ ձախն՝ համբաւ ե-
լանէ վասն նորա, և խնդութիւն և ցրն-
ծութիւն է, բերկրի ՚ի սիրելեաց • գտանէ
բարիս յաւագաց, հասանէ ուրախութեան •

Աթէ աջ կոճոյ արտաքին կողմն խա-
ղայ՝ գհետ մեռելոյ երթայ • Թէ ձախն՝
բերկրութիւն է •

Աթէ աջ կոճոյ ներքին կողմն խաղայ՝
ի մեծամեծաց պատիւս առնու, բարի է
և բերկրութիւն • Թէ ձախն՝ ուրախու-
թիւն է յոյժ •

Աթէ աջ ոտից թաթն (այագ տիպի)
խաղայ՝ բերկրուի է և ուրախուի յոյժ • ծան-
րանայ ՚ի վերայ մարդկան • հաստատի գործ
նորա Մատուծոյ • ՚ի գործ Մատուծոյ գնալ
նշանակէ • ՚ի ճանապարհ երթայ • պատի վասն

ընչից իւրոց, և դառնայ յաջողութեամբ :
 Թէ ձախ ոտիցն՝ բարի է և շահ . ինչքն
 բազմանան . մօտենայ առ աւագս և փա-
 ռաւորի . ճանապարհ է խնդութեան և
 բարձրութեան . մտանէ յարքունիս , յոյժ
 խնդայ և մեծատուն լինի :

Թէ աջ ոտից կոճն (այսպէս թօփուղը)
 խաղայ՝ մնասու հանդիպի և յետոյ շահի :
 Թէ ձախն՝ բարի է և լաւ :

Եթէ աջ կրնկան կախ չին (էօքչէ սի-
 նիրի) խաղայ՝ օտար զրոյց լսէ : Թէ ձախն՝
 բախտաւոր լինի և բերկրի :

Եթէ աջ ոտից ներբանքն (թապան)
 խաղան՝ ՚ի ճանապարհ երթայ . վերք հա-
 ւանին նմա . մերժի յազգէն իւրմէ . ՚ի ծա-
 նօթից տրումի . ահու իրք հանդիպին , բայց
 յետոյ բարի լինի նմա . ՚ի տրումութենէ
 ազատի , ինչս գտանէ և շահի . մեծատուն
 լինի և խնդայ . Թէ ձախն՝ ՚ի ձեռն աւա-
 գաց՝ մեծութիւն , իշխանութիւն և պա-
 տիւս առնու , գործք նորա յաջողին , յար-
 քունիս մտանէ , մեծանայ և ընչեղ լինի :

Եթէ աջ ոտից ամենայն թաթն (այսպէս
 ալթը) խաղայ՝ տրումի յիւրմէ ազգէն . հե-
 ռանայ յազգէ իւրմէ , և թեթեանայ առ
 ծանօթս իւր , կամ ՚ի ճանապարհ երթայ՝

և իշխանութիւն գտանէ և շահի յընչից :
 թէ ձախ ոտիցն՝ հեռանայ՝ յաղգականացն
 և տրտմի • սակաւ մի հիւանդանայ և ապ-
 ըի • ՚ի ճանապարհ երթայ • պատիւս և շը-
 նորհ առնու՝ ուստի ակն ոչ ունէր • մեծա-
 նայ և բարձրանայ :

Աթէ աջ ոտից ներքին կամ վերին կող-
 մին (ալթ եախօտ իւսթ թէրաֆը) խաղայ՝
 ՚ի ճանապարհ արդիւնաւոր երթայ • մեծու-
 թեան հասանէ և բերկրի յանկարծ , խըն-
 դայ և մեծատուն լինի : թէ ձախ ոտիցն՝
 բարի լինի նմա յանկարծակի • յաւազաց ու-
 ճիկս առնու • խնդայ ՚ի ճանապարհի , սէր
 է և բարձրութիւն : թէ աջ և թէ ձախ
 ոտից մէջն խաղայ՝ մարդ վիճի ընդ նմա ,
 և գան ըմպէ :

Աթէ աջ կրնկան վերին կողմն (էօքչէ
 իւսթիւ) խաղայ՝ օտարանայ յերկրէ , և
 զրոյց լսէ բարի : թէ ձախն՝ ՚ի չար անկա-
 նի :

Աթէ աջ կրունկն (էօքչէ) խաղայ՝ մե-
 ծութիւն է , բայց զհետ մեռելոյ ընթա-
 նայ • մատնեն զնա և անվնաս գերծանի : թէ
 ձախն՝ վատս և բարութիւնս գտանէ , ու-
 բախ լինի և խնդայ :

Աթէ աջ ոտն ամենայն խաղայ՝ ՚ի ճա-

նապարհ երթայ • Թէ ձախն՝ բարի լինի
 նմա՝ ուստի ակն ոչ ունէր •

Եթէ աջ ոտից բուժն (պաշ փարմագ)
 խաղայ՝ զնայ ՚ի նմանէ տրամուժիւն, հե-
 ուաւորն գայ, ՚ի մարդկանէ շահի և մե-
 ծատուն լինի • Թէ ձախն՝ առողջութիւն
 է անձինն, զհեռաւոր զոք տեսանէ • սիրե-
 լիքն բազմանան, յՆստուծոյ ընդունի պար-
 գևս և խնդայ, և ամենեքեան սիրեն զնա,
 կամ ցաւք դիպին նմա, և հիւանդանայ
 յոյժ •

Եւ աջ ոտից ցուցամատն (ղամմագ փար-
 մագ) խաղայ՝ հիւանդանայ մինչ ՚ի մահ •
 տրամի և երկնչի, բայց յետոյ բարի լինի
 նմա • ՚ի փորձութիւն անկանի և ազատի,
 և ճանապարհորդ նորա գայ • Թէ ձախն՝
 ընչեղութեան և պատուոյ, մեծութեան
 և խնդութեան հասանէ, կամ վէրս ըն-
 դունի ՚ի ստոյ և տրամի • երկնչի ՚ի չարե՝
 որ ոչ գայ նմա •

Եթէ աջ ոտից միջին մատն (օրթա փար-
 մագ) խաղայ՝ անձկութիւն գայ, ՚ի վիշտ և
 ՚ի տրամութիւն անկանի, և մեծ փոթորիկ
 գայ նմա մարդ կռուի ընդ նմա՝ և գան
 ըմպէ, և չար լինի • Թէ ձախն՝ վիճումն է •
 ՚ի մեծ աղաղակ անկանի, գուժ առնու,

բազմանայ կռիւ , մեծ ֆնաս կրէ յազգակա-
նէ և վիճի , կամ ցնծու մն է մտացն • սի-
րով ընդ մարդոյ կենակից լինի • բազում բար-
ւոյ հանդիպի և ուրախ լինի :

Աթէ աջ ոտից ծագ մատն (սօն փար-
մագ) խաղայ՝ գտանէ ինչ և կամի , հարկիս
և սէր , կամ վիճի ընդ ծանօթի՝ և թշնա-
միքն բազմանան : Թէ ձախն՝ յազգէ հե-
ռանայ , բաժանի ՚ի տանէ և յորդւոցն • գը-
նայ յայլ տեղի և յաջողի • յոյժ հանգիստ և
լաւ լինի նմա • բամբասեն զնա առ կանայս •

Աթէ աջ ոտից ծկոյթն (սրբա փարմագ)
խաղայ՝ մեծութիւն և ընչեղութիւն տայ
Մատուած նմա • լինի զոր կամի • յաւազաց
շնորհս առնու , ընչից և բարւոյ հանդիպի ,
կամ ինչս կորուսանէ : Թէ ձախն՝ տրամի
յաւագէ , աղմուկ ՚ի սիրելեաց , վէրք յա-
ւագաց , անպատեհ բանս լսէ , յաղթեն աղ-
գականքն նմա , կամ ՚ի վաճառէ շահի ,
գանձ և առողջութիւն և բազում բարիս
գտանէ :

Աթէ աջ ոտից ամենայն մատուենքն խա-
ղան՝ հետի ՚ի ճանապարհ երթայ • բարի լի-
նի նմա և խնդայ , ցնծութիւն և մեծ սէր
գտանէ , պարգևս առնու Մատուծոյ , հե-
ռաւոր օտար մարդ ծանօթանայ ընդ նմա ,

ի մարդկանէ պատուի և բարւոյ հանդիպի :
 թէ ձախ ոտիցն՝ խիստ դատումն է , նե-
 դութիւն և վէրք , ցաւք լինին , զայրանայ
 ՚ի խօսից , աղքատանայ՝ և դարձեալ փորձի :

Եթէ աջ ոտից տաիրողն (տիւղ թէ-
 ռաֆ) խաղայ՝ խնդայ և ՚ի ձի հեծնու , և ՚ի
 բարի ճանապարհ երթայ :



Աղաչել զայլս : 4. Լինել մերժեալ յընկերակ-
ցութենէ :

ԱՅՐ

զՁորս իրս պարտի հոգայ այրն վասն կնոջ
իւրոյ :

1. Միշտ լինել զբաղեալ 'ի գործ ինչ : 2. Եր-
կընչել յառնէն : 3. Ըստ պատշաճի կերակրել
զնա : 4. Չափով զգեցուցանել :

ԱՆԱՍՈՒՆ

Չորք անասունք են՝ որք առաւել քան զայլս
տան մարդկան զօգտակարութիւն :

1. Ոչխար : 2. Եզն : 3. Հաւ : 4. Մեղու :

ԱՆԳԻՆ

Չորք իրք են անգին :

1. Գլխու-թիւն : 2. Առողջութիւն : 3. Աղատա-
կանութիւն : 4. Առաքինութիւն :

ԱՆԴԱՐՁ ԻՐՔ

Չորք իրք են անդարձ :

1. Քար յետ ելանելոյ 'ի ձեռաց : 2. Բանն որ
ելանէ 'ի շրթանց : 3. Դիպող ժամ որ խոյս ետ :
4. Ժամանակն որ էանց :

ԱՆԽՐԱՏ ՈՐԴԻՔ

Չորս իրս առնեն անխրատ որդիք :

1. Վատնեն զժառանգութիւնս հարց : 2. Ար-

համարենն զխրատա : 5. Թաւալին 'ի մոլութիւնա :

4. Ոչ ունին զփոյթ զօգտակարութենէ :

ԱՆՀՆԱՐԻՆ ԻՐՔ

Չորք իրք են անհնարինք առ 'ի լինել :

1. Առնել՝ զի ծովն միշտ իցէ խաղաղ : 2. Եր-

կինք միշտ պարզ : 3. Ամառն առանց բուտոց :

4. Չմեռն առանց ձեան :

ԱՆՅԱԳ ԻՐՔ

Չորք իրք են անյագ :

1. Կրակ 2. Հող : 3. Գժոխք : 4. Կին :

ԱՆՊԱՏԵՀ ԻՐՔ

Ի ջորից անպատէն իրաց՝ պարտ է մարդ

պահել զանձն :

1. Ի տանց որք են մօտաւորք գետոց : 2. Յըն-

կերակցութենէ դաւաճանող արանց : 3. Ի փը-

տեալ դրանց : 4. Յանդաստանաց՝ որք են յանցա

ճանապարհաց :

ԱՆՕԳՈՒՏ ԲԱՐԻ

Չորք իրք են, որք են անօգուտք զկնի առնելոյ :

1. Ննջումն : 2. Մտածումն : 3. Չկնի գործե-

լոյ քննել : 4. Տրտմութիւն :

ԱՇԱԿԵՐՏ

Չջորս իրս պարտի առնել աշակերտան :

1. Պատուել զվարդապետ իւր : 2. Կինել յոյժ

զգատտ 'ի լսել : 3. Բազմիցս կրկնել զոր լուան :

4. Առնուլ զխորհուրդ 'ի գիտնագունից :

Չորք իրք 'ի սակաւ ժամանակի տան հմտութիւն աշակերտի :

1. լսել մտերմաբար : 2. Ընթեռնուլ բարւոք :

3. Ուսուցանել այլոց : 4. Գրել զուսումն իւր :

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Չորից իրաց ոչ կարե հասանել մարդ' առանց աշխատութեան :

1. Մեծաց գովութեանց : 2. Բազում գիտութեան : 3. Ստացուածոց : 4. Իշխանութեան :

ԱԶԲ

Չորք իրք տան խնդութիւն աջաց :

1. Գեղեցկութիւն գիմաց : 2. Պէտպիտութիւն գունոց : 3. Արտաքին կազմուած : 4. Պարզութիւն երկնից :

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Չորք իրք պիտանիք են ապաշխարողի :

1. Խոստովանել բերանով : 2. Զղջալ արտիւ : 3. Առնել հատուցումն գործովք : 4. Հանապազորդել 'ի գործել զբարին :

ԱՌԱԶՆՈՐԴ

Չորք իրք պատշաճ են առաջնորդի :

1. Հանապազորդութիւն 'ի պաշտամունս : 2.

Համեատութիւն 'ի գնացս : 3. Հողացողութիւն
'ի վարել : 4. Վայելչութիւն 'ի յանդիմանու-
թիւնս :

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Չորք իրք վնասեն առողջութեան :

1. Յանկարդս վարել : 2. Աւելորդ կերակուրք :
3. Յոյժ վշտանալ 'ի ցրտոյ : 4. Ընդ երկար աշ-
խատել սաստիկ :

ԱՏԵԼՈՒԹԻՒՆ

Չորք իրք ծնանին գատելութիւն :

1. Լրբարար խօսել : 2. Մեղանչել : 3. Ագահել :
4. Բաժանումն :

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Չորք իրք են, որք թիւրեն զարդարութիւն :

1. Սէր : 2. Ատելութիւն : 3. Երկիւղ : 4. Շա-
հասիրութիւն :

ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Չորք իրք փութապէս ամբառնան զմարդն
յարժանապատուութիւն :

1. Ստացումք : 2. Ուժեղութիւն : 3. Գիտու-
թիւն : 4. Խորագիտութիւն :

ԱՐՔ ԱՆՈՒԱՆԻՔ

Չորք են որ եղեն անուանի 'ի մեջ ջորից ազգաց :

1. Յուդայ մակարէ 'ի Հրեայս : 2. Մեծն կարու-



ԲԱՆՔ

ՊԻՏԱՆԻՔ ԵՒ ՕԳՏԱԿԱՐՔ

ՀԱՒԱՔԵԱԼ ՅՈՒՄԵՄՆԷ ԲԱՆԱՍԻՐԷ

Ի ՊԷՍ ՊԷՍ ԳՐՈՅ ԱՅԲՈՒԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԻ

ԶՈՐԵՔՈՒՄԲԻ ԹՈՒՈՎՔ



ԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Զորք իրք առնեն զմարդ ազան:

1. Երկիւղ չքաւորութեան :
2. Արկանել զանձըն 'ի ներքոյ ծառայութեան :
3. Նախանձ դէպ առ այլս :
4. Բազմութիւն որդւոց :

Զորք իրք ծնանին յազանութենէ:

1. Գողութիւն :
2. Ստերղմնութիւն :
3. Խաբէութիւն :
4. Մարդասպանութիւն :

Զորք իրք 'ի բաց մերժեն զազանութիւն:

1. Առատութիւն ընչից :
2. Անատուղութիւն ա-

առղջութեան : 3. Կենակից լինել ընդ առատա-
 ձեռնա : 4. Ոչ ունելն զորդիա եւ զընտանիս :

ԱՂԱԶԱՆՔ

Չորս ինչ նկատել պարտ է յորժամ որ աղաչի :

1. Ով է այն որ աղաչէ : 2. Որոյ վասն աղաչէ :
3. Զինչ զհետ գայ եթէ պարգեւիցէ : 4. Զինչ
 եթէ ոչ պարգեւիցէ :

ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ

Չորք ազգք մարդկան են որ վաղվաղակի ան-
 կանին յաղքատութիւն :

1. Իգամուք : 2. Որկրամուք : 3. Ծոյլք : 4.
- Որք յանդգնին առնել ինչ ընդդէմ քաղաքա-
 կան իրաւանց :

Չորք իրք աղքատացուցանեն զմարդ :

1. Կանայք : 2. Խաղալ խաղա դրամով : 3. Չար
 ընկերք : 4. Առնել դաւաճանութիւնս :

Չորք իրք ծնանին յաղքատութենէ :


1. Գործել զչարութիւն : 2. Անարդութիւն ան-
 ձին : 3. Ապականութիւն մարմնոյ : 4. Խան-
 դարումն ընտանեաց :

ԱՄՕԹԱՀԱՐՈՒԹԻՒՆ

Չորք իրք առաւել գամօթահարութիւն բերեն
 քան զայլս :

1. Աղքատանալ : 2. Ընդ ունել զնախատինս : 3.

Փոքրիկ Բառարանս 'ի Թուրքերէնէ 'ի Հայ
բովանդակէ զկարեւորսն 'ի բառից Երազահա-
նիս . եւ եղաւ 'ի գիւրութիւն այնոցիկ՝ որ կա-
միցին խնդրել ինչ յԵրազահանի , եւ չգիտիցեն
զՀայերէն անունն :



Ա

Աւաճ . Աստուած :
 Ագէ . արած :
 Ագ սագալլը . սղեւոր :
 Ալաճա . խոյր :
 Ալըշգան . ընդել :
 Ալթուն . սախ :
 Աղաճ . շար :
 Աղըլ . գոմ :
 Աղըրըգ . լամ :
 Աղլեմէք . լուր :
 Անգա գուշու . սարժու , փխ-
 րիկ :
 Աքեր . զնետար :
 Արապա . խոտ :
 Արմաւ . սրտիկ :
 Արտան . սրտիկ :

Գ

Գաղ . Սոգ :
 Գաղըգ . ջեյ :
 Գաղմագ . Երել :

Գաթըր . Լոբ :
 Գաթլ օլունմուշ . Գլխարեւել
 Գալգան . սապոր :
 Գալէ . Բերդ :
 Գայիսի . ծերան :
 Գանաալլը . Նետար :
 Գապագ . արած :
 Գալուն . սխի :
 Գատէհ . Գետասի :
 Գաար . Գետարար :
 Գարա . Նախ :
 Գարա ճիյէր . Վարդ :
 Գարանլըգ . Տախ , խոտար :
 Գար եաղմագ . Բոստորիանել :
 Գարթալ գուշու . սարժու :
 Գարղա . սարժու :
 Գըգ . աղլիկ :
 Գըլըճ . Նար :
 Գուղու . Գարն :
 Գուճ . սապ :
 Գումաշ . Իրոտա , դիպակ :
 Գույու . Կոք , Լեհոր :
 Գույրուղլու . Գետար :
 Գունտուրա . Տաճակ :
 Գուտտա , Պարարակ :

Գուրու աղած (միյվէսիզ) .
 շոր ծառ:
 Գուրու միյվէ. շեր:
 Գուրպաղը. հարբ:
 Գուրա. հայլ:
 Գօգու. հարբ:
 Գօյուն. սիխար:
 Գօյուն գույրուղու. դժակ:

Ե

Եալըն այագ. բակ:
 Եայ. աղեղն:
 Եաս. սահ:
 Եեմիշ. ժերի:
 Եենի պիր շէյ. նար երբ:
 Եեսիր. (էսիր). գերի:
 Եըլան. օյ:
 Եըլարզ. սարդ:
 Եըլարըմ. հայծակ:
 Եըղըն, շէղլ:
 Եիւզիւք. ճարանի:
 Եոլմուրթա. շուս:
 Եօղուրթ. ճարանի:
 Եօլ. ճանապարհ:

Զ

Զավղավաթ (սէպղէվաթ).
 բանջար:
 Զաֆրան (զաֆէրան). Կրօն:
 Զէյթին. շիւտայրսաղ:
 Զէյթին եաղը. շիւ:
 Զէրաալի. պարխակ:

Զըրխօ զտհ:
 Զիւմրիւթ. զճրտար:
 Զուրնա. հար:

Է

Էթ. ժոս:
 Էլմա. խնչար:
 Էմանէթ. տատար:
 Էյէլէմէք. խարդել:
 Էյէր. խոմբ:
 Էսվապ. պարմանան, շարշ:
 Էրիք. դաման, սալար:
 Էքմէք. հայ. 2. սերմանել:
 Էքսէր. բետե:
 Էօրտէք. բար:
 Էօքիւզ. եղն:

Թ

Թաթլը. Կարդ:
 Թաթլը դօգու. սնտաղահար:
 Թախթ. սխար:
 Թաշ. Կար:
 Թային. բանի:
 Թավշան. նապաստակ:
 Թավուզ գուշու. սիրտարթ:
 Թարագ. սանար:
 Թարիգ. ճանապարհ:
 Թարլա. տեղատարան:
 Թագեա. հարակ:
 Թէմէլ. հիմն:
 Թէքէ (էրքէք քէչի). Կօլ:
 Թըրաշ իթմէք. անէլել:

Թըրնադ. էղաննի:
 Թիւքի (տիւքի). աղաննի:
 Թիրէմէնթի. բեւեհի:
 Թիւրիւտիւ. աղաննի:
 Թուղլա. աղաննի:
 Թուրի. բողի:
 Թօփ. ֆեդի:
 Թօփրադ. հող:

Ի

Ինճի. ճարգարի:
 Ինճիր. թաղ:
 Իպրիշիմ. ապրիտաճ:
 Իսթիֆան. պառի:
 Իրիւն. թարաթ:
 Իւղիւմ. խաղաղ:
 Իւրեա (րույա). երաղ:
 Իփ. ճապան:

Լ

Լահանա. խաղաճ:
 Լէշ. դի:
 Լիմուն. լիմուն:
 Լօփ էթ. թաճ:

Խ

Խաղ. Տ. Գաղ. ալլափն հան-
 դերն.
 Խաղինէ. ֆաննի:
 Խալեար. կի՞ն յիան:
 Խըզմէթքար. ճապան:

Խըյար. ճարաննի:
 Խըրսըղ. աղաննի:
 Խուրմա. աղաննի:
 Խուրմա աղաճը. աղաննի:
 Խօրօս. աղաննի. հող:

Կ

Կէմ. սաննի:
 Կէմի. նառ:
 Կէմի եօլճուսու. էմիօր կէ-
 միճի. նառար:
 Կէյիկ. էղջերառ:
 Կէյիկ (տիշի). էղն:
 Կէօջ արապասը. սաղ:
 Կէօմլէք. շապի:
 Կէօվէրճին. աղաննի:
 Կըրճիկ. աղաննի:
 Կիզլէնմիշ. է թափարի:
 Կիւլ. ճարդ:
 Կիւլլէ. թաճ, ֆեդի:
 Կիւճէրչէլէ. բողի:
 Կիւպրէ. աղի:
 Կիւվէ. ցեց:

Հ

Հայվան. աղաննի:
 Հաւուղ. աղաննի:
 Հաքիմ. դարառ:
 Հօդդա. խաղաճ:
 Հուրուշ. դարառ:
 Հուրուշ. դարառ:

Ճ

Ճանալար. գազան:

Ճէնք. բազմ:

Ճէվահիր. ախանք:

Ճէվիզ. շնչոյզ:

Ճին. դեռ:

Մ

Մաղլ. փղոր:

Մահիթապ. լաւտին:

Մանաա. գամեղ:

Մանարա. փոմ:

Մասդարա իթմէք. ծիծաղէլ:

Մավի. խաղոյս:

Մէզարլըք. փերեզման:

Մէշալէ. դամբար:

Միյվէ. փրփ:

Միւրէքքէպ. խանութ:

Մում. հրանք, մոմ:

Ն

Նար. նսարան:

Նէֆէր. պինասար:

Նուխոււ. սխտան:

Շ

Շահին դուշու. քաղ:

Շավգ. լոյս, շոյ:

Շէհիր. փաղտ:

Շէյթան. դեռ:

Շիշէ. շշ:

Շիշման. փեր:

Ո

Ունտան եէմէք. փոխէնք:

Ուրուպա. հալաւ, հանդերձ:

Չ

Չաղանօս. խաղափոս:

Չամուր. ցիխ:

Չայ. փեր, սարսառ:

Չան. ծոմահար, փոշնախ, զանու
գան:

Չէօմլէքատէն. խեցեղէն:

Չէքիրկէ. մարտի:

Չընկըրտապ. պանգուպ:

Չիզմէ. խոլի:

Չիլինկիր. դարբէն:

Չիյ. համ:

Չիչէք. ծաղիկ:

Չիֆթլէք. անդամասրան:

Չօճուգ. մանասի:

Չօգա. աստի:

Պ

Պալ. ծեղ:

Պալըք. ջանք:

Պաղէ. դարբէն:

Պայգուլ. քառ:

Պարապ. փառ:

Պէլ. քահ:

Պիթ. սնել.
 Պիլեզիք. ասպարանջան:
 Պիպեր. պղպեղ:
 Պիր ճրնս պալըզ. քարեխի:
 Պիքիր. խոյ:
 Պուղ. պաղ:
 Պուլլութ. ասպ:
 Պուղտայ. ցորեխ:
 Պուղտայ պաշը. հասի:
 Պուտ. ըսմբ:
 Պոզա. ցուլ:
 Պոզաղլամազ. պինուլ:
 Պորու. փուլ:

Ս

Սաաթ. ծամացուց:
 Սադալը. ճորսոփ:
 Սաչ. ծամ:
 Սապուն. օճախ:
 Սարը. դեղին:
 Սարըմազ. խոտոր:
 Սեմիզ. գեր:
 Սերայ. դարպաս:
 Սերչե դուշու. ճնճպախ:
 Սըրըզ. գերան:
 Սիյահ. ըսմբ:
 Սիւրիւ. նախիբ:
 Սուլթան. ըսգոհի:
 Սուսամազ. ծարաւել:
 Սողան. սի:
 Սօփա. քեր:

Վ

Վերախիլեն (նէրախւպան).
 սանդուղ:

Տ

Տաղ. լեարան:
 Տաղ տէփէսի. քլար:
 Տամար. երակ:
 Տավար. նախիբ:
 Տարը. խոտակ:
 Տէյիրմէն. երխան, լաղապ:
 Տէնիզէ միւթաալլիզ շէյ-
 լէր. ծովահան:
 Տէսթի. խոտ:
 Տէվէ. սուղ:
 Տէվէ դուշու. լայլամ:
 Տերե. շոր:
 Տիզիլին. սանջ:
 Տիւսիզ. համբ:
 Տիշ. սորսմ, սորսմանի:
 Տիշի հայլան. ծարակի լեւալանի:
 Տերէք. գերան, սիւն:
 Տիրճեմ. դրամ:
 Տիւմէն. զիւ:
 Տիւյիւն. հարսանի:
 Տիքէն. փուլ:
 Տօլու. խոխոտ:
 Տօղմազ. ծնանել:
 Տօն. պաղ:
 Տօնուղ. խոտ:

Ր

Րազը. օղի:
 Րահիպ. տէրղայ:
 Րավէնտ. գաբ:
 Րէղէնէ. սասիթ:
 Րէնտէ. դասը:

Փ

Փամպուղ. բաճայակ:
 Փէլին. օղինդր:
 Փէշթիմալ.)
 Փէշկիր.) զէնջակ:
 Փիրէ. լաս:
 Փիրինճ մատէն. դեղին պղինձ:

Ք

Քեասէ. գասաթ:
 Քէթէն պէզի. իրաս:
 Քէլի. լասն:
 Քէմիք. սակր:
 Քէչի. սյճ:
 Քէպապ. խորոված:

Քէօրկէ (կէօլկէ). լասփ:
 Քէօփրիւ. իսմասը:
 Քիլիսէ. խմորասան, եկեղեցի:
 Քիշնիշ. գինձ:
 Քիրէմիթ. խորհրդ:
 Քիւմէ. շիշ:
 Քիւննիւք. խոտնի:
 Քիւրէք. բահ:
 Քիւփ. իսրաս:
 Քիւփէ. գինոյ:

Օ

Օթ. խոր:
 Օվա. դաշր:
 Օտուն. խոր:
 Օրադ. գերանդի:

Ֆ

Ֆարէ. ճակ:
 Ֆէնա դօզու. լար հար:
 Ֆըչը. իսրաս:
 Ֆիտան. քոտնի:
 Ֆրէնկ ույուղու. գորի:



լոս՝ ՚ի քրիստոնեայս : 3. Սալատինն՝ ՚ի Սարա-
կինացիս : 4. Օգոստոս կայսր ՚ի հեթանոսս :
Չորք ազգք մարդկան են որ ստացան համ-
բան մեծ :

1. Սողոմոն՝ իմաստութեամբ : 2. Արթաթոտէլ՝
փիլիսոփայութեամբ : 3. Վիրգիլիոս՝ բանաս-
տեղծութեամբ : 4. Սուրբն Պօղոս՝ պաշտամամբ
առաքելութեան :

Առաջինն՝ ուսուցանէ իմաստութեամբ : Արկ-
րորդն՝ փիլիսոփայութեամբ : Արրորդն՝ ազնուու-
թեամբ : Չորրորդն՝ կատարեալ եւ կենդանի
հաւատով :

ԱՔՍՈՐԵԱԼ

Չորք իրք օգտակարք են արտորելոց :

1. Նկատել զվիճակ արանց անկելոց : 2. Սպա-
սել մինչեւ ազնուագոյն լիցի վիճակ նոցա : 3.
Ծախել արծաթ բազում : 4. Արիաբար մուծա-
նել ՚ի չափաւոր շահեկանութիւն :

ԲԱՆ

Չորք իրք են, զորս առանձինն պարտին մար-
դիկ դնել ՚ի միտս իւրեանց :

1. Թէ կարի առատաձեռնութիւն՝ ոչ կարէ տեւել :
2. Թէ իմացականութիւն՝ ոչ միշտ օգնէ : 3. Թէ
ճարտարաբանութիւն՝ երբեմն պատրէ : 4. Թէ

Հափաւորութիւն՝ բնաւ ոչ կորուսանէ զիւրն :

ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Չորք իրք են, որք առաւելապէս վրդովեն զբանականութիւն հոգւոյն :

1. Անկարգ սէր :
2. Արբեցողութիւն :
3. Ազահութիւն :
4. Ատելութիւն :

ԲԱՐԵՒԱՌՆՈՒԹԻՒՆ

Չորս իրս ուսուցանէ մեզ բարեխառնութիւն :

1. Հեռանալ յաւելորդ իրաց :
2. Սանձահարել զցանկութիւնս :
3. Ժուժկալել յանպատեն իրաց :
4. Հրաժարել 'ի հաճութենէ ցանկութեանց :

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Չորք ազգք են գլխաւորագոյնք բարեկամաց :

1. Բարեկամ բախտի :
2. Բարեկամ սեղանոց :
3. Բարեկամ պաշտօնի :
4. Բարեկամ հաւատարիւմ :

Առաջինն հրաժարի, մինչ բախտն չուէ : Երկրորդն աներեւութանայ, մինչ բառնի սեղանն : Երրորդն տեւէ, մինչ տեւէ պաշտօնն : Չորրորդն տեւէ հանապաղ :

Չորք ազգք մարդկան անարդարապէս կորուսանեն զբարեկամութիւն :

1. Մեծատուն բռնադատեալ 'ի հարկէ :
2. Իշխող զրկեալ յիշխանութենէ :
3. Մեր մաշեալ

յամաց : 4. Բարեբախտն՝ նուաճեալ 'ի ձախոր-
դութենէ :

ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ

Չորք ազգք մարդկան են, որոց ընդդեմ կա-
մաց առնի բարեբարութիւն :

1. Պարտապանն՝ մինչ ստիպի հաստուցանել :
2. Տղայն՝ մինչ ըստ արժանւոյն զան ըմպէ : 3. Հի-
ւանդն՝ մինչ դառնադոյն դեղօք բժշկի : 4. Խե-
լագարն՝ մինչ կապի շղթայիւք :

Չորք իրք յորդորեն զմարդ առնել բարեբա-
րութիւն :

1. Շահեցողութիւն : 2. Երկիւղ : 3. Յայս :
4. Սէր :

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

Չորք իրք ծնանին 'ի բարկութենէ :

1. Տաղնապ մտաց : 2. Տգէտ լինել անձին :
3. Գործք անիրաւութեան : 4. Անիրաւ վճիռք :

'ի Չորից իրաց ծնանի բարկութիւն :

1. Ի ծանակութեանց : 2. Յանարդութեանց :
3. Յապերախառութեանց : 4. Յանիրաւութեանց :

Չորք իրք մերժեն զբարկութիւն :

1. Քաղցրաբանութիւն : 2. Վրէժխնդրութիւն :
3. Սով : 4. Հատուցումն :

ԲԺԻՇԿ

Չորք իրք պատշաճին բժիշկի:

1. Քննել խնամով զպատճառս հիւանդութեան :
2. Ստէպ այց առնել հիւանդին : 3. Ի ժամանակի իւրում տալ զսպեղանին : 4. Մխիթարել քաղցրութեամբ :

ԲՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐՔ

Չորք իրք փոխեն զբարս եւ զբնութիւն մարդոյ:

1. Պատիւ : 2. Սէր : 3. Քաղցրաբանութիւն կրնոջ : 4. Գինի :

ԲՌՆԱԿԱԼ

Չորս գործս գործէ բռնակայն:

1. Առնէ բաժանումն 'ի մէջ քաղաքացւոց :
2. Նուաճէ զիմաստունս : 3. Մերկացուցանէ զմեծատունս : 4. Ցածուցանէ զիշխանս :

Չորք իրք արգելուն գիշխանութիւն, եւ զհրաման բռնակայի:

1. Միաբանութիւն քաղաքացւոց : 2. Բազմութիւն մեծատանց : 3. Հանձար իմաստանոց : 4. Համարձակութիւն իշխանաց :

զՉորս իրս անեցուցանեն բռնաորք:

1. Չգաղանարարոյութիւն պաշտօնէից : 2. Չամբարտաւանութիւն : 3. Չտառապանս հնազանդելոց : 4. Չարհամարհութիւն ազնուականաց :

Չորք սովորութիւնք գտանին յառն բռնաւորի :

1. Խառնել զանձն յանողորմ իրս :
2. Անհամբեր լինել յաղաչանս :
3. Առնել զամենայն ըստ կամաց իւրոց :
4. Չկամել թէ ոք զնա յանդիմանեացէ :

Չորք իրք օգտակարք են որոց հնազանդիւնն բռնաւորաց :

1. Պատուել զմեծամեծս :
2. Մի զայրացուցանել զոք :
3. Խօսել սակաւ :
4. Կեալ առանձին :

ԲՈՆԱԻՈՐՔ

Չորք են բռնաւորք , որք յոյժ խստասիրտ են ամբարտաւանք էին :

1. Հերովդէս 'ի Հրէաստանի :
2. Ներոն 'ի Հռոմ :
3. Ատաղիլա 'ի Գաղղիա :
4. Էքսէլինոս 'ի Լոմպարտիա :

Առաջինն սպան զանձն սրով : Երկրորդն սպան զժողովուրդն : Երրորդն մեռաւ յանկարծ : Չորրորդն մեռաւ 'ի թունոյ :

Չորք են գործք բռնաւորաց :

1. Յափշտակել զինչս :
2. Մերժել զաղքատս :
3. Մեծացուցանել զչարս :
4. Արհամարհել զառաքինիս :

Չորք իրք նուանեն զբռնաւորն :

1. Պակասութիւն կերակրոց :
2. Մեծամեծ տառապանք :
3. Յաճախ տալ պատերազմ :
4. Բառ-

Նախն 'ի նմանէ արդար իրաւանց :

գԲՆԱՆՈՐԵՆ պատրէն ջորք իրք , որոց կարծե
հասանել :

1. Օգտակարութիւն ժողովրդեան :
2. Ազնու
ութիւն համբաւոյ :
3. Յաճախութիւն մեծու
թեան :
4. Յանկութիւն իշխանութեան :

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Չորք են , որք ածեն զմարդ 'ի գիտութիւն :

1. Սէր պատուոյ :
2. Յանկութիւն ընթերցման :
3. Յանկութիւն շահելոյ :
4. Ազգումն աստ
ուածեղէն :

Չորք են գլխաւոր գիտութիւնք :

1. Աստուածաբանական :
2. Դատաստանական :
3. Քաղաքական :
4. Ֆիզիքական :

Առաջինն է կերակուր հոգւոյ : Երկրորդն՝ ձե
ռընտու լինի անկելոց : Երրորդն՝ մեծացուցա
նէ զաղքատս : Չորրորդն՝ դարմանէ զհիւանդս :

ԳՈՂԱՆԱԼ

Չորք իրք ոչ կարեն գողացեալ լինել 'ի մարդ
կանէ :

1. Գիտութիւն :
2. Կամք :
3. Արուեստ :
4. Հանճար :

ԳՈՎՈՒԹԻՒՆ

Չորք իրք արժանի են մեծի գովութեան :

1. Խնդրել խորհուրդ :
2. Կեալ աշխատութեամբ :

իւրով: 3. Գթալ տառապելոց: 4. Առնել ողորմութիւն:

ԳՈՐԾ

Չորք ինչ պիտոյ են մարդոյ նախ քան զամենայն ինչ:

1. Կատարեալ սէր առ ընկերն: 2. Քաղցրաբանութիւն առ ամենեւին: 3. Ուսուցանել ըզտգէտս: 4. Միշտ պատուել զծերս:

Չորք իրք են յոյժ գովելի:

1. Առնել խաղաղութիւն: 2. Պահել զարդարութիւն: 3. Կազդուրել զանկեալս: 4. Օգնել կարօտելոց:

ԳՈՐԾՔ

Չորս ինչ նկատել արժան է յամենայն գործս:

1. Արդեօք հարկ եւ պատշաճ իցէ: 2. Արդեօք արժան իցէ ըստ համեստութեան: 3. Արդեօք օգտակար իցէ յառաջադրութեան: 4. Արդեօք կատարեացի ըստ ժամանակին:

ԳՌԵՀԻԿ

Չորք իրք են որ յոյժ հաճոյ թուին գոեհկաց:

1. Գիտել սակաւ ինչ արուեստ: 2. Գիւրազնութիւն կերակրոց: 3. Նուաճումն ազնուականաց: 4. Յաճախ լսել նորագոյնս:

ԴԱՏԱՍՏԱՆ

Չորք իրք դարմանեն զդատաստան:

1. Պատիւ: 2. Հմտութիւն ՚ի դատել: 3. Պատ-

Ժել զհարագործս : 4. Առնել բարերարութիւն :

Չորիք իրօք կորուսանի դատաստան :

1. Սիրելով :
2. Ատելութեամբ :
3. Երկիւղիւ :
4. Շահասիրութեամբ :

ԴԱՏԱԻՈՐ

Չորք իրք պատշաճին դատաւորի :

1. Լսել զթութեամբ :
2. Պատասխանի տալ իմաստութեամբ :
3. Նկատել մտերմութեամբ :
4. Դատել յայտնապէս :

ԴԱԻԱՃԱՆ

Չորք իրք գտանին 'ի դաւանանս :

1. Քաղցրութիւն մեծ 'ի բանս որով խաբեն :
2. Մահաբեր լեղի 'ի սրտի , որով թունաւորեն :
3. Սուտ ծիծաղ յերեսս , որով պատրեն :
4. Մահաբեր գործ , որով կեղծաւորին :

ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆ

Չորք իրք առնին յոյժ դժուարութեամբ :

1. Վերստին հատուցանել զոր ինչ առեալ իցէ յայլոց :
2. Լռել 'ի լսել զնախատինս :
3. Ոչ գանգատել վասն անիրաւութեան իրիք եղելոյ :
4. Ոչ վայելել պիտոյիւք զոր ունի ոք :

ԴՐԱՄ

Չորք ազգք մարդկան հասանին դրամոց :

1. Խաբերայք :
2. Աղահք :
3. Նրբամիտք :

4. Հետաքրքիրք :

Չորք իրք գան 'ի ձեռս առանց դրամոց :

1. Արհամարհութիւն անձին : 2. Չքաւորութիւն :
3. Սով : 4. Հիւանդութիւն :

ԴՐՕՇԱԿԻՐ

Չորս առաքինութիւնս պարտի ունել դրօշակիրն :

1. Ազնուականութիւն տոհմի : 2. Սէր հայրենեաց :
3. Արութիւն սրտի : 4. Հանձար 'ի պատերազմի :

ԵԼՔ ԻՐԱՅ

Չորք իրք ցուցանեն ունել վատթարագոյն էլս :

1. Անարգել զխորհուրդս : 2. Չարութեամբ ըսկիզբն առնել իրաց ինչ :
3. Առնել ինչ որ 'ի վեր իցէ զկար ուրուք : 4. Յախշտակել զիրա այլոց :

ԵՐԿԻՐ

'ի Չորից իրաց վնաս մեծ ընդունի երկիր :

1. Ի ծառայէ՝ մինչ թագաւորէ : 2. Ի խելագարէ՝ մինչ յագեալ է :
3. Ի լկտի կնոջէ՝ մինչ ամուսնանայ : 4. Յաղախնոյ՝ մինչ լինի տիկին , եւ ժառանգ :

ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ

Չորք ազգք մարդկան երջանիկ են պես պես կերպարանօք :

1. Որ ջերմեռանդն ծառայէ Աստուծոյ : 2. Որ

հասու լինի պատճառաց իրաց : 3. Որ կարէ պահպանել զանձն 'ի դիպուածոց աշխարհի :

4. Որ զգատանայ 'ի հարեաց այլոց :

Չորք են երջանկութիւնք , որք բազում անգամ փոխին յաներջանկութիւն :

1. Բազմութիւն որդւոց : 2. Բազմութիւն ընչից : 3. Տիրել 'ի վերայ հայրենեաց : 4. Ունել զբազում բարեկամս :

ԶԱՐՄԱՅՈՒՄՆ

Չորք իրք 'ի մեծի գարմացման են յաշխարհի :

1. Բռնաւոր որ ունի ընդ իշխանութեամբ իւրով ժողովուրդ բազում : 2. Սակաւք ոմանք որ 'ի պատերազմի բազմութեան յաղթիցեն : 3. Չքաւորք որ ոչ խլեն զինչս մեծատանց : 4. Բազմութիւն մարդկան որ խելամուտ լինի յամենայն խարէութիւնս :

ԶԳԱՅՈՒԹԻՒՆ

Չորք իրք նրբացոցանեն գչգայութիւնս :

1. Յօժարութիւն 'ի վիճել : 2. Բարեխառն խորհուրդք : 3. Կենակից լինել ընդ իմաստունս : 4. Շնորհել տուրս :

Չորք գգայութիւնք են , որոց ունին մարդիկ առաւել պիտս :

1. Տեսանելիք : 2. Լսելիք : 3. Շօշափելիք : 4. Ճաշակելիք :

ՋՕՐԱԳԼՈՒԻ

Չորք իրք յոյժ օգտակարք են զօրագլխաց:

1. Բազմութիւն արծաթոյ :
2. Բազմութիւն մարդկան :
3. Առատութիւն զինուոց եւ պաշարոյ :
4. Գիտել զբարս հակառակորդին իւրոյ :

Չորք իրք պիտոյ են զօրագլխաց:

1. Տեղեկութիւն կարողութեան թշնամոյն :
2. Ընտրել գործիա՝ որ տեւեն՝ ի պատերազմի :
3. Քաջալերել զզինակիրս մղել՝ ի պատերազմ :
4. Ճօճել կորովաբար զձեռն ընդդէմ թշնամեաց :

ՋՕՐԱՅՈՒՄՆ

Չորք իրք զօրացուցանեն զմարդ:

1. Բանականութիւն :
2. Ուժեղութիւն :
3. Արիական քաջութիւն :
4. Տկարացեալ թշնամին :

ԸՆԾԱՅ

Չորս ինչ առնեն ընծայք եւ տուրք:

1. Մերժեն զազահութիւն :
2. Շածկեն զմոլութիւն :
3. Յաւելուն զազնուութիւն :
4. Խանգարեն զթշնամին :

ԸՆԿԵՐԱԿԻՅ

՚ի Չորս իրս ոչ հաճի մարդ ունել ընկեր:

1. Ի հրամայել ՚ի միում քաղաքի :
2. Ի կենակցել ընդ կնոջ իւրում :
3. Ի շահել զօգուտ ինչ :

4. Յուսել յամանոյ իւրմէ՝ մինչ քաղցեալ իցէ :
 'ի Չորս իրս հարկաւ պարտի ունել ոք ընկեր :

1. Մինչ անկեալ է 'ի տարակուսանս : 2. Մինչ
 նոր ընկալեալ է պաշտօն ինչ : 3. Մինչ տա-
 ռապեալ է 'ի պատիժս : 4. Մինչ գնայ 'ի ճա-
 նապարհ :

ԹԱԳԱԻՈՐ

Չորք իրք լաւագոյնք են վասն թագաւորի :

1. Հայրական սիրով վարել զհնադանդեա-
 լըս իւր : 2. Պարգեւատուութեամբ շահել բա-
 րեկամս : 3. Քաղցրաբարոյ լինել առ աղաչողս :
 4. Գթութեամբ առնել դատաստան չարագոր-
 ծաց :

ԹՇՆԱՄՈՒԹԻԻՆ

Չորք իրք քան զամենայն ինչ ծնանին զթշնա-
 մութիւն :

1. Խօսել լրբաբար : 2. Ցանկութիւն մարմնոյ :
 3. Ազահութիւն : 4. Ծաղր առնել :

Չորք իրք են՝ որ կարծին լինել բարեբարու-
 թիւն, դառնան 'ի թշնամութիւն :

1. Փոխ տալ արծաթ, եւ յետոյ խնդրել : 2. Ե-
 րաշխաւոր լինել ումեք, եւ կամել թէ հա-
 տուսցէ պարտաւորն : 3. Խոստանալ ինչ, եւ
 յետոյ ոչ տալ : 4. Ծառայել ումեք, եւ 'ի նը-
 մանէ չառնուլ զվարձս :

ԹՇՈՒԱՌԱԿԱՆ

Չորք ազգք մարդկան են թշուառականք:

1. Որ միշտն 'ի մեղս է :
2. Որ կարէ առնել զբարի , եւ ոչ առնէ :
3. Որ տգէտն իցէ եւ ոչ կամիցի ուսանել :
4. Որ գիտիցեն , եւ ոչ կամիցի ուսուցանել :

ԺԱՄԱՆԱԿ

Չորք են ժամանակք , կամ մասունք տարւոյ :

1. Քարուն :
2. Ամառն :
3. Աշուն :
4. Չմեռն :

ԻՂՁ

Չորք իրք առաւել քան գամենայն նուաճեն , եւ վտանգեն գիղձս մարդկան :

1. Շահել զարծաթ :
2. Բարձրանալ 'ի պատիւս :
3. Խնամել զընտանիս :
4. Առնել զչարիս :

Չորք անյագ իղձք գտանին 'ի մարդ :

1. Յանկալ շահուց :
2. Տեսանել նորագոյնս :
3. Բաղձալ 'ի գիտել :
4. Լսել ականջօք :

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

Չորք իրք են , որ առնեն զմարդ իմաստուն :

1. Սովորական ուսումն :
2. Փորձ իրաց :
3. Գիշերի զմտաւ ածել :
4. Չհետ երթալ արանց իմաստնոց :

զՉորս իրս ուսուցանէ իմաստութիւն :

1. Յիշել զանցեալս :
2. Յարդարել զմօտաւորս :

3. Յառաջագոյն տեսանել զհանդերձեալս :

4. Հանդարտել զտարակուսանս :

Զորք իրք ապականեն զիմաստութիւն:

1. Տարիանք : 2. Ատելութիւն : 3. Երկիւղ :

4. Շահասիրութիւն :

Զորք ազգք մարդկան են որ իմաստութիւն մեծ պարտին 'ի կիր արկանել:

1. Քահանայք՝ 'ի դնել զապաշխարութիւն :

2. Գատաւորք՝ 'ի տալ վճիռս : 3. Բժիշկք՝ 'ի բուժել զհիւանդս : 4. Մեծատունք՝ յարկանել 'ի

կիր զմեծութիւնս :

Զորք իրք առաւել վնասեն համբաւոյ արանց իմաստնոց:

1. Խօսել եւ գործել զգարչելիս : 2. Զլանալ զարդարութիւն : 3. Արհամարհել զայլս : 4. Հաւատալ ամենայն ումեք որ ասիցէ ինչ :

Զորք իրք պատշաճին արանց իմաստնոց:

1. Կեալ կարգօք : 2. Ստանալ զմեծութիւն :

3. Զհետ երթալ կամաց այլոց : 4. Համեատ երեւեցուցանել զանձն :

ԻՄԱՍՏՈՒՆ

Զորք իրք ոչ վայելեն լինել 'ի բերան իմաստնոյ:

1. Գովել՝ զոր չիցէ արժան գովել : 2. Ոչ գովել՝ զոր արժանին է գովութեան : 3. Մաքառել վասն իրիք՝ որում ոչ կարէ հասու լինել :

4. Կռուել ընդ դրացւոյն անաւօթարար :

ԻՄԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Չորք իրք խոշտանկէն զիմացականութիւն առաւել քան զայլս :

1. Մարմնական ցանկութիւն : 2. Մեծամեծ ինչ ձախողանք : 3. Նուաճել ընդ երկիրդիւ : 4. Անչափ յաջողութիւն :

ԼԱԻ ՎԻՃԱԿ

Չորիք իրօք կարե հասանել մարդ 'իլաւ վիճակ :

1. Առնելով զբարի : 2. Ասելով զճշմարտութիւն : 3. Չեռնամուխ լինելով 'ի սէր : 4. Ոչ ինչ վատ զմտաւ ածելով :

ԼԵՋՈՒ

Չորք իրք ծնանին 'ի ջար լեզուէ :

1. Սերմանել զխռովութիւն : 2. Աղարտել զբարի անուն : 3. Նենգութեամբ թարգմանել : 4. Առնել վարդապետութիւն չար :

Չորք իրք ծնանին 'ի բարի լեզուէ :

1. Ածել 'ի սէր : 2. Գովել զմարդիկ : 3. Ուսուցանել զօրինակ կելոյ : 4. Արդիւնք կենաց :

ԼՍԵԼ

Չորք իրք պահանջին 'ի լսել :

1. Լսել մտերմութեամբ : 2. Լռութեամբ : 3. Համբերութեամբ : 4. Հնազանդութեամբ :

ԼՍԵԼԻՔ

Չորք իրք հեշտացուցանեն զյսելիս:

1. Քաղցրաշունչ երգել: 2. Ճարտարութեամբ
խօսել: 3. Հանճարեղս բարբառել: 4. Հնչիւն
դրամոց:

ԼՍՈՂ

ԳՉորս իրս պարտի ունել որ յսեն զգաստութեամբ:

1. Ունկնդիր լինել համբերութեամբ: 2. Զմտաւ
ածել իմաստութեամբ զայն՝ զոր լսէ: 3. Ու
նել ՚ի մտի զիրս բարիս: 4. Մտռանալ վաղվա
դակի զչարիս:

ԽԱԲԷՈՒԹԻԻՆ

Չորք իրք խաբեն զմարդ:

1. Ցանկութիւն շահելոյ: 2. Քաղցրութիւն
բանից: 3. Սակաւութիւն խելաց: 4. Խորա
մանկութիւն կնոջ:

ԽԱՂԱՂՈՒԹԻԻՆ

Չորս ինչ առնէ առաւել քան զամենայն խա
ղաղութիւն:

1. Առաւելուլ զքաղաքացիս: 2. Առատացու
ցանել զկերակուրս: 3. Ածել ՚ի շահ զմեծու
թիւնս: 4. Ուրախ առնել զժողովուրդ:

ԳՉորս իրս պարտի առնել մարդ առ ՚ի կեայ
խաղաղութեամբ:

1. Տեսանել: 2. Լսել: 3. Լսել: 4. Համբերել:

Չորք իրք օգտակարագոյնք են այնմ որ կամի պահել զխաղաղութիւն:

1. Ոչ առնուլ զիրս այլոց :
2. Ունել զհամբերութիւն :
3. Օգնել բարի դաշնակցաց :
4. Յամենայնի պահել զարդարութիւն :

ԽՈՆԱԻՈՒԹԻՒՆ

Չորք են զխաղաղագոյն խոնառութիւնք մարմնոյ:

1. Արիւն :
2. Դեղին մաղձ :
3. Տողունք :
4. Սեւամաղձ :

ԽՈՐՀՐԴԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Չորք իրք յոյժ օգտակարք են այնմ, որ տայ զխորհուրդ եւ զխրատ:

1. Լսել զիրաւունս երկոցունց կողմանց :
2. Որոճալ զոր ինչ լուանս 'ի հաւատարիմ գրոց :
3. Խնդրել վարձս չափով :
4. Տալ զխորհուրդ համեմատ օրինաց :

Չորք խրատք յոյժ օգտակարք են մարդոյ:

1. Հեռանալ յաղմկէ :
2. Թողուլ զվնասակարցանկութիւնս :
3. Ուտել թեթեւ կերակուրս :
4. Յարդարել զիրս մինչչեւ անցեալ իցեն :

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Չորք իրք արգելուն զխոստովանութիւն:

1. Հաւատալ թէ կելոց է ժամանակս բազումս :
2. Ամօթ խոստովանելոյ :
3. Երկիւղ հատուցաւ :

Կելոյ : 4. Յուսահատութիւն :

ԽՐԱՏ

Չորք իրք ոչ ընդունին զխրատ :

1. Բարկութիւն : 2. Ազահութիւն : 3. Պիտոյք
մարմնոյ : 4. Նախանձ :

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Չորք իրք պատշաճ են այնմ, որ իրօսի
ընդ այլս :

1. Յառաջագոյն պատրաստել զոր ասելոցն է :
2. Տեսանել թէ ընդ ում խօսելոյ իցէ : 3. Նը-
կատել զժամանակ խօսելոյ : 4. Ասել բանս
պատշաճս :

ԾԱԾԿԵԼ

Չորք իրք ոչ ծածկին :

1. Հաղալ : 2. Սիրել : 3. Բարկանալ : 4. Ցա-
ւազնել :

Չորք իրք առնեն, զի ծառայիցէ մարդ :

1. Սիրել : 2. Երկնչել : 3. Շահել : 4. Պարծել :

Չորից իրաց ծառայեն մարդիկ :

1. Քաղցր բանից : 2. Շահու արծաթոյ : 3.
Պատժոյ ձախորդութեան : 4. Օգնելոյ անձին :

ԾԵՐՈՒԹԻՒՆ

Չորք իրք ծնանին ՚ի ծերութենէ :

1. Տկարութիւն զգայութեանց : 2. Նուազումն :

ուժոյ : 5. Երկչոտութիւն : 4. Պարծեցողութիւն :

ԾՈՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԳՁորս իրս պարտի Է առնել պահեցողն :

1. Զափով ուտել : 2. Փախչել 'ի մոլութեանց :
5. Յիշել զերկնաւորսն : 4. Առնել ողորմութիւն աղքատաց :

ԾՈՒԼՈՒԹԻՒՆ

Զորք իրք բերեն առաւել քան զամենայն ինչ զծուլութիւն :

1. Մթազոյն տեղիք : 2. Առանձին հանդիսաք :
5. Տրամական կարիք : 4. Ընդունայն խորհուրդք :

Զորք իրք մերժեն զծուլութիւն :

1. Զեռնամուխ լինել յիրս ախորժականս : 2. Ընկեր լինել զուարթացելոց :
5. Բազմել 'ի խրատխճանս : 4. Լսել երբեմն զերաժշտական քաղցր նուագս :

ԿԱՄԱԿՈՐՈՒԹԻՒՆ

Զորք ազգք մարդկան յոյժ կամակորք են :

1. Բռնակալն 'ի տիրապետել զտէրութիւնն :
2. Հերձուածողն ոչ ճանաչէ զմոլորութիւն իւր : 5. Սովորեալն 'ի վատթարազոյնս՝ որ ոչ կամի 'ի բաց կալ անտի :
4. Անիրաւ ժառանգ՝ որ ոչ յօժարի հատուցանել :

ԿԱՌԱՎԱՐԻՉ

Չորք գլխաւորագոյն իրք պատշաճին կառա-
վարչի:

1. Օգնական լինել բարեաց :
2. Նուաճել ըզ
չարս :
3. Պատուել զառաքինիս :
4. Կազդու-
րել զանկեալս :

Չորս ինչ պարտի ունել կառավարիչն:

1. Փորձ իրաց :
2. Սիրել զհնազանդեալս :
3. Հաստատութիւն 'ի գործել :
4. Առնել զարդա-
րութիւն յամենայնի :

զՉորս իրս պարտի ունել որ իշխանն է երկ-
րի միոջ:

1. Պահել զհաւասարութիւն 'ի մէջ մարդկան :
2. Չանալ առատութեան իրաց :
3. Ընտանու-
թեամբ զնալ ընդ ամենայն ումեք :
4. Պահել
զարդարութիւն :

ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ

Չորք իրք կատարեն զգործ:

1. Հմտութիւն արուեստի :
2. Անալ իմաստ-
նոց :
3. Պահպանել զիրս պիտանիս :
4. Բար-
ւոք խօսիլ :

ԿԱՐՃԱՏԵԻ

Չորք իրք ոչ կարեն տեսել բազում ժամա-
նակս:

1. Մարդ կռուարար :
2. Անիմաստ բռնաւոր :
3. Անիրաւ ժառանգ :
4. Որ քան զչափն վատնէ :

ԿԵԱՆՔ

Չորք իրք երկարեն գկեանս:

1. Կեալ ժուժկալութեամբ: 2. Բնակել ընդ այնոսիկ զորս սիրէ ոք: 3. Լինել յառողջարար տեղւոջ: 4. Ուրախ լինել հանապաղ:

ԿԻՆ

Չորք իրք պարտին քան զամենայն ինչ գտանել ՚ի կին մարդ:

1. Գեղեցկութիւն ՚ի դէմս, եւ յանդամս: 2. Ըզգաստութիւն ՚ի մարմնի: 3. Համեստութիւն ՚ի բարս: 4. Իմաստութիւն յառանին իրս:

Չորից իրաց առաւել ցանկան կանայք:

1. Ունել այր գեղեցիկ եւ երիտասարդ: 2. Ունել բազում որդիս: 3. Բազում եւ պատուական հանդերձս: 4. Իշխանութիւն ՚ի վերայ ամենայն ընտանեաց:

Վասն Չորից իրաց յոյժ վշտանան կանայք:

1. Եթէ այր նոցա սիրիցէ զայլ կին: 2. Եթէ տուն նոցա աղմկիցի սաէպ: 3. Եթէ որդիք նոցա կրիցեն կարօտութիւն: 4. Եթէ մեռանին նոքա տարածամ:

Վասն Չորից իրաց պարտի կին հոգալ:

1. Սիրել զայր իւր: 2. Ոչ զայրացուցանել զնա: 3. Մակաւութիւն բաւականանալ: 4. Ունել ըզգուշութիւն մեծ վասն անձին:

Չորս ինչ պարտի դիտել նա, որ կամի ամուսնանայ:

1. Գեղեցկութիւն դիմաց: 2. Մաքրութիւն բարուց: 3. Մեծութիւն ընչից: 4. Ազնուութիւն տոհմի:

ԿՐԹՈՒԹԻՒՆ

Չորք իրք են գորս չէ մարդ ստանայ առանց բազում կրթութեան:

1. Գիտել զքերականութիւն: 2. Գրել ուղիղ: 3. Քարոզել լաւ: 4. Յօրինել ոտանաւորս:

ԿՐՕՆԱԻՈՐ

Չորք իրք պատշաճին կրօնաւորին:

1. Սակաւ ելանել արտաքոյ վանաց: 2. Պահել զհնազանդութիւն առ մեծաւորն: 3. Փախչել ՚ի դատարկութենէ: 4. Յաճախ յաղօթս կալ:

ՀԱՃՈՅ ԻՐՔ

Չորք իրք յոյժ հաճոյ են, գորս ամենայն որ պարտի ունել:

1. Իմաստութիւն: 2. Աստուածաբանութիւն: 3. Խոնարհութիւն: 4. Զղջումն:

Ընդ Չորս իրս առաւել հաճի Աստուած:

1. Ի միաբանութիւն եղբարց: 2. Ի սէր ընկերաց: 3. Ի հնազանդութիւն ամուսնոց: 4. Ի դարձ մեղաւորաց:

ՀԱՅՐ

Չորս բարի պարտի առնել հայր որդւոյ իւրում:

1. Տալ նմա օրինակ բարի: 2. Ուսուցանել նմա զարուեստ ինչ: 3. Սրկանել զնա ընդ իւրով հնազանդութեամբ: 4. Մնուցանել զնա սիրով:

Չորս ինչ պարտի առնել հայրն ընտանեաց:

1. Ունել զնոսա չափով ընդ երկիւղիւ: 2. Տալ նոցա զպիտոյս ըստ կարողութեան իւրում: 3. Ուսուցանել լաւութիւնս: 4. Յուցանել զանձն ուրախ ըստ ժամանակի իւրում:

ՀԱՍԱՆԵԼ

Չորք իրք են՝ որոց յոյժ ցանկան մարդիկ, եւ ոչ կարեն հասանել:

1. Բազում արժաթոյ: 2. Կատարեալ գիտութեան: 3. Հանապազորդ հանգստեան: 4. Մըշտընջենաւոր ուրախութեան:

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Չորք իրք բերեն հաստատութիւն:

1. Երկիւղ յամօթոյ: 2. Երկիւղ ՚ի պատժոյ: 3. Գովութիւնն անձին: 4. Սննել բազում ծախս:

ՀԱՐԿԱԻՈՐ

Չորս իրք են որ սակաւ հարկաւոր կարծի, եւ յոյժ հարկաւոր են:

1. Պատուել զամենեւեան բանիւ: 2. Խօսել ըղ

Ճշմարտութիւն . 5. Ոչ զայրացուցանել զոք :
4. Կեալ ընդ առաքինիս :

ՀԱՐՅՈՒՄՆ

Չորք իրք օգտակարք են՝ այնմ որ հարցումն
իցջ լսէ :

1. Ո՞վ է որ հարցանէ : 2. Ո՞ւմ հարցանէ :
3. Վասն էր հարցանէ : 4. Չինչ է զոր հարցանէ :

ՀԱՒԱՏՔ

Չորք իրք ծնանին ՚ի հաւատոց :

1. Ճշմարտութիւն իրաց : 2. Բարութիւն բարուց : 3. Մտունդ հոգւոյ : 4. Պաշտել զԱստուած :

ՀԵՂԱՆԻԻԹ

Չորք հեղանիքք առաւել պիտանի են վասն
կենաց մարդոյ :

1. Չուր : 2. Գինի : 3. Մեղր : 4. Չէթ :

ՀԵՇՏԱՆԱԼ

Չորք իրք մանաւանդ պատճառեն հեշտութիւն :

1. Քաղցր հնչումն ձայնի : 2. Քեղեցկութիւն
կերպարանաց : 3. Քաղցր կերակուրք : 4. Ծաղ-
կաւէտ տեղիք :

՚ի Չորից իրաց յոյժ գոարճանայ մարդ :

1. Յիմաստութենէ որդւոյ : 2. Ի պայծառութեանէ
մեծութեան : 3. Ի հասանելոյ պատուոյ :
4. Ի վրէժխնդրութենէ թշնամեաց :

ՀԻՒԱՆԴ

Չորս ինչ պարտի առնել հիւանդն:

1. Հնազանդել ճարտար բժշկի :
2. Տալ առատապէս արծաթ վասն պիտոյից :
3. Հաւատալ բժշկին :
4. Եւալ հանդարտութեամբ :

ՀՆԱԶԱՆԴԵԱԼՔ

Չորք իրք պատշաճին առաւել հնազանդելոց:

1. Հնազանդել տեառն իւրեանց յօրինաւոր իւրրս :
2. Չանալ վասն բարեաց հասարակաց :
3. Օգնական լինել բարեգործաց :
4. Նուաճել զչարս :

Չորք ազգք մարդկան բարեոք առնեն, եթէ հնազանդեցուցանեն ինքեանց գայլս:

1. Թաղաւորն՝ զհնազանդեալս իւր :
2. Հայրն՝ զորդի իւր :
3. Այրն՝ զկին իւր :
4. Վարդապետն՝ զաշակերտ իւր :

ՀՈՂՄ

Չորք են գլխաւոր հողմունք:

1. Արեւելեան :
2. Արեւմտեան :
3. Հարաւային :
4. Հիւսիսային :

ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Չորք իրք ծագին 'ի հպարտութենէ:

1. Ապերախտութիւն բարեաց զոր ընկալեալ իցէ ոք :
2. Արհամարհութիւն ընկերին :
3. Չարիս խօսել :
4. Կռուել :

Չորք իրք մերժեն գնպարտութիւն:

1. Աղքատութիւն: 2. Արհամարհել: 3. Մե-
րանայ: 4. Հիւանդութիւն:

Չորք իրք հպարտացոցանեն գմարդ:

1. Ստացուածք: 2. Կարողութիւն: 3. Պատիւ:
4. Ազնուականութիւն:

ՁԱՆՁՐՈՒԹԻՒՆ

Չորք իրք տան գճանձրութիւն:

1. Անձրեւ տուրնջեան: 2. Շատխօսութիւն:
3. Հողմ ձմեռն: 4. Մանր աշխատութիւն:

ՁԵՌՖԱԿԱԼ ԱՌՆԵԼ

Չորս ինչ պարտի նկատել նա, որ ձեռքա-
կալի պատերազմաւ զգաւատ:

1. Ո՞վ իցէ որ ընկեր լինի ընդ նմա: 2. Ընդ
մեմ պատերազմի: 3. Որով իրաւամբ պատե-
րազմի: 4. Չինչ լինիցի վախճան պատերազմին:

ՃԱՆԱԶԵԼ

Չորս ինչ ոչ է մարք ճանաչել:

1. Թռչել հաւուց յօդս: 2. Շաւիղ նաւու 'ի
ծովու: 3. Ճանապարհ օձի յանտառս: 4. Կեանք
մարդոյ յերիտասարդութեան իւրում:

ՃԱՇԱԿԵԼԻՔ

Չորք իրք տան առաւել հեշտութիւն ճաշա-
կելեաց:

1. Համադամք: 2. Քաղցրախառն թթու: 3. Օդ-
տակար բարք: 4. Ախորժելով ուտել:

ՃԱՐՏԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Չորք իրք առնեն զմարդ ճարտարախօս:

1. Համարձակութիւն :
2. Խելամտութիւն :
3. Յօրինուած :
4. Սովորութիւն :

ՄԱՀ

Չորք են որ վատարագոյն են քան զմահ:

1. Ծերութիւն ընդ աղքատութեան :
2. Պակասութիւն զգայութեան :
3. Հնանալ 'ի մեղս :
4. Ի բանտ մտանել հիւանդութեամբ :

Չորք իրք մահացուցանեն զմարդ յառաջ քան զժամանակն:

1. Գեղեցիկ կլին :
2. Տրտմութեան խթան :
3. Թունաւոր կերակուր :
4. Ապականեալ օղբ :

ՄԱՆՈՒԿ

Չորք ինչ գտանին 'ի մանկունս:

1. Փութով զայրանալ :
2. Արագ շրջել :
3. Դիւրաւ մոռանալ :
4. Յօժարութեամբ խաղալ :

ՄԱՐԴ

Չորք իրք առաւել փայլեն 'ի մարդ:

1. Գեղեցկութիւն մարմնոյ :
2. Իմաստութիւն հոգւոյ :
3. Բարի համբաւ վարուց :
4. Ճարտարութիւն խօսելոյ :

Չորք իրք առաւել օգնեն յառնել մեծատուն զմարդ:

1. Չանալ շահիլ :
2. Չափով ծախել :
3. Համ-

բերել անիրաւութեանց : 4. Հրաժարել 'ի վըշտացուցիչ իրաց :

Չորք իրք պիտանի են մարդոց յաշխարհիս յայսմիկ :

1. Ճանաչել անձն իւր : 2. Տանել անիրաւութեանց : 3. Բարւոք վարել զընտանիս : 4. Ոչ տալ իշխանութիւն կանանց :

Չորք իրք տան տրտմութիւն մեծ մարդկան :

1. Մեռանել որդւոց : 2. Կորուստ ընչից : 3. Յառաջադիմութիւն թշնամեաց : 4. Նուաճումն բարեկամաց :

Ի Չորից իրաց ոչ կարե փախչել մարդ :

1. Ի դալոյ ծերութեան : 2. Ի կորստենէ բարեկամաց : 3. Ի դառն պատահարաց : 4. Ի հասանելոյ մահուան :

Չորք իրք առնեն զմարդ կատարեալ :

1. Սիրել զԱստուած : 2. Սիրել զընկերն : 3. Առնել այլոց զայն՝ զոր կամիցի թէ առնիցեն այլք : 4. Ոչ կասել առնել այլոց զայն՝ զոր ոչ կամի այլք առնիցեն ինքեան :

Չորք իրք պատշաճին առն իմաստնոյ :

1. Պահել զարդարութիւն : 2. Մեծացուցանել զբարիս : 3. Կանգնել զանկեալս : 4. Խրատել զմոլորեալս :

Չորք ազգք մարդկան ջեն հաճոյ Աստուծոյ:

1. Աղքատ հպարտ : 2. Ստախօս մեծատուն :
3. Ծեր գազաշեալ : 4. Բանասարկուն 'ի մէջ եղբարց :

ՄԱՐՄԵՈՅ ՅԱՆԿՈՒԹԻՒՆ

Չորք են ջար ազդեցութիւնք մարմնոյ ցանկութեան:

1. Աղտեղացուցանել զհոգի : 2. Տկարացուցանել զզգայութիւնս :
3. Վատնել զստացուածս :
4. Փութացուցանել զծերութիւն :

Չորք իրք են, որք բորբորեն զցանկութիւն մարմնոյ:

1. Զօրաւոր զինիք : 2. Քաղցրահամ կերակուրք :
3. Ընտանութիւնն ընդ կանայս : 4. Պարապորդութիւն հանգստեան :

Չորք իրք են որք մերժեն զցանկութիւն մարմնոյ:

1. Ըմպել ջուր լոկ : 2. Ուտել կերակուր զով :
3. Ի բաց կալ 'ի կանանց : 4. Աշխատել հանապազորդ :

ՄԱՐՏԻՐՈՍ

Չորիք օրինակօք մարթէ լինել մարտիրոս առանց հեղման արեան :

1. Կուսութեամբ 'ի տղայութեան : 2. Ժուժկալութեամբ յառատութեան :
3. Խոնարհութեամբ 'ի յաջողութեան : 4. Համբերութեամբ 'ի ճախորդութեան :

ՄԵԾԱՄԵԾՔ

Չորս ինչ մեծ համարին մեծամեծք:

1. Հատանել զինչս այլոց :
2. Հրամայել բազմաց :
3. Շահել բազումս :
4. Արհամարհել զառատաձեռնութիւն :

Ի Չորից իրաց գոարճանան մեծամեծք:

1. Յերթալ յորս :
2. Ընդունել պատիւս :
3. Խօսել զզարմանալիս :
4. Գովութիւնս ընդունել յայլոց :

ՄԵՂՔ

Չորք մեղք գտանին վատթարագոյն ՚ի մարդ:

1. Սպանանել զընկերն :
2. Չարախօսել զայլս :
3. Առնուլ յանիրաւի զինչս օտարաց :
4. Ի հրապարակի նախատել զոք :

ՄՈԼՈՒԹԻՒՆ

Չորք մոլութիւնք առաւել գարշելի են:

1. Ուրանալ զԱստուած :
2. Գաւաճանել զհայրենիս :
3. Սպանանել զծնօղս :
4. Պատրել զընկերն :

Չորք իրք ծածկեն զմոլութիւնս:

1. Առատաձեռնութիւն՝ ՚ի ծախել :
2. Ճարտարութիւն՝ ՚ի խօսել :
3. Համեստութիւն՝ ՚ի բարրս :
4. Խորամանկութիւն՝ ՚ի գործս :

Չորք մոլութիւնք առնուն զկերպարանս ջորից առաքինութեանց:

1. Խորամանկութիւն՝ յիմաստութեան :
2. Կա-

մակորութիւն՝ ՚ի հաստատութեան : 5. Ազահու-
 թիւն՝ ՚ի ժուժկալութեան : 4. Խատարատու-
 թիւն՝ յարդարութեան :

ՄՈՌԱՅՈՒՄՆ

Չորք ազգք մարդկան վաղվաղակի մոռանան
 զբարեբարութիւն :

1. Մանուկ՝ իբրեւ լինի այր : 2. Աղքատ՝ զկնի
 ելանելոյ ՚ի պատիւ : 5. Հպարտն՝ շաղախեալ
 յամբարտաւանութիւն : 4. Բանտարկեալն՝ յետ
 աղատութեան :

ՅԱՅՏՆԻ

Չորք իրք յոյժ վնաս են մինչ յայտնի լինին :

1. Գործեալ մեղք : 2. Շահեալ ստացուածք :
 5. Յատուկ կարիք անձին : 4. Մեծութիւնք
 առ բռնաւորի :

ՅՈՅՍ

Չորք իրք ծնանին ՚ի յոսոյ :

1. Ուրախութիւն մարմնոյ : 2. Կեանք հոգւոյ :
 5. Թեթեւութիւն աշխատանաց : 4. Երկարու-
 թիւն կենաց :

ՆԱԽԱՆՁ

Չորք իրք ծնանին ՚ի նախանձութիւն :

1. Տրտմութիւն՝ զոր ընդունի ոք ՚ի նախան-
 ձութիւն : 2. Կորուստն՝ որ անտի լինի : 5. Բա-
 ժանել ՚ի մարդկանէ : 4. Աւերումն քաղաքի :

Կամ որ ճշմարիտն է:

1. Տառապանօք կեանք: 2. Թշուառութիւն:
5. Պարծեցողութիւն: 4. Աղքատութիւն:

’ի Չորից իրաց ծնանի նախանձ:

1. Ի ցանկութենէ պատուոյ: 2. Ի ցանկութե-
նէ շահուց: 5. Յերջանկութենէ այլոյ: 4. Յա-
տելութենէ դրացւոյ:

Չորք իրք մերժեն զնախանձ:

1. Զրկեալ յիշխանութեան: 2. Հասանել աղքա-
տութեան: 5. Վնասել զդայութեանց: 4. Պա-
կասել զօրութեան:

ՆԻԻԹ

Չորք են, որ բովանդակեն զամենայն իրս աշ-
խարհի:

1. Հող: 2. Զուր: 5. Օգ: 4. Հուր:

Չորք են, յորոց ծնանին ամենայն ջարիք
աշխարհի:

1. Նախանձ: 2. Ագահութիւն: 5. Հպարտու-
թիւն: 4. Յանկութիւն:

ՇԱՀ

Չորք ազգք մարդկան ասեն շահել առասել
քան զոր շահինն:

1. Դերասանք: 2. Փաստաբանք: 5. Ոստի-
կանք: 4. Բժիշկք:

Չորք ազգք մարդկան ասեն սակաւ շահել
քան գոր շահինն:

1. Մաքսառուն՝ ՚ի վարել :
2. Հողագործն՝ ՚ի սերմանել :
3. Վաճառականն՝ ՚ի վաճառել :
4. Որ խաղայն արծաթով ՚ի խաղալ :

Չորից իրաց գայ սակաւ շահ:

1. Տանել ձուս ՚ի քսակի :
2. Գաղել հուր ՚ի ծոցի :
3. Մնուցանել դօձս :
4. Առնել բարիս ապախտաւորաց :

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

Չորիք օրինակօք ողորմութիւն հաճելի է Աստուծոյ:

1. Տուրք աղքատաց :
2. Ներել անիրաւութեանց :
3. Խրատել զմեղաւորս :
4. Ուղղել ըզմոլորեալս :

ՈՐԴԻ

Չորս պարտս ունի որդի դեպ առ հայրն:

1. Պատուել զնա :
2. Հնազանդել նմա :
3. Ոչ տրամեցուցանել զնա :
4. Օղնել նմա իբրեւ ծերանայ :

ՈՐԿՈՐՍՏՈՒԹԻՒՆ

Չորք իրք մերժեն գորկորստութիւն:

1. Փոյթ շահելոյ :
2. Հանդուրժել քաղցու :
3. Մարմնոյ աշխատութիւն :
4. Յանկութիւն արծաթոյ :

Չորք իրք առնեն զմարդ որկորուստ:

1. Սովորութիւն երթալոյ 'ի դինեառուս : 2. Ընկերակից լինել որկորստաց : 5. Ունել բազում եկամուտա :
4. Հանապազորդ հանգստութիւն :

ՈՐՈԳԱՅԹ

Չորք իրք որոգայթ մեծ են:

1. Անալ ընդ հրամանաւ բռնաւորաց : 2. Հաւատալ հողմոց : 5. Լինել յառաջընթաց 'ի պատերազմի :
4. Անակից լինել ընդ յիմարս :

ՈՒՆԵԼ

Չորս ինչ առանել ունի մարդ քան զոր կարծե:

1. Թշնամիս : 2. Մեղս : 5. Չամս : 4. Պարսս :

Չորս ինչ ունի մարդ առանել սակաւ քան զոր կարծեն:

1. Իմացականութիւն : 2. Բարութիւն : 5. Բարեկամ :
4. Տափական ցանկութիւն :

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

'ի Չորից իրաց ծնանի սակաւ ուրախութիւնս:

1. Ազատել 'ի բանտէ : 2. Ամուսնանալ ընդ կրնսջ : 5. Մտանել 'ի դինուորութիւն : 4. Հասանել պատուոյ :

ՉԱՐՍՉԱՐ Ի ԿԻՐ ԱՆԿԱՆԵԼ

Չորք են, որք յոյժ ջարաջար 'ի կիր արկանեն:

1. Թագաւոր անիրաւ 'ի թագաւորելն : 2. Այլ

անհող 'ի կրօնա իւր: 5. Իմաստուն առանց դոր-
ծոյ: 4. Մեծատուն առանց ողորմութեան:

Չորք են որ յոյժ ջար են յաշխարհի:

1. Քրիստոնեայ վիճող: 2. Աղքատ հպարտ: 3.
Ծեր առանց կրօնից: 4. Կին առանց ամօթոյ:

Չորք իրք են յաշխարհի, որք ջարաջար 'ի
կիր արկանին:

1. Մեծաւոր առանց առաքինութեան: 2. Ժողովուրդ
առանց օրինաց: 3. Մարդ առանց
կրթութեան: 4. Մանուկ առանց հնազանդու-
թեան:

ՊԱՏԱՆԻ

Չորս ինչ առնեն պատանիք:

1. Խնդրեն մեծութիւն: 2. Հեշտաման 'ի պատ-
տիւս: 3. Չանան բարեկամութեան: 4. Հրա-
ժարին 'ի վնասակար իրաց:

Չորք իրք պատշաճին պատանեաց:

1. Լսել համբերութեամբ: 2. Պատասխանի տալ
իմաստասիրութեամբ: 3. Ոչ վնասել ումեք:
4. Ծառայել ամենեցուն յօժարութեամբ:

Չորք իրք վայելեն պատանեաց:

1. Պահել 'ի մտի դրանս ծերոց: 2. Հնազան-
դել հաւատարմութեամբ: 3. Խօսել հանճա-
րով: 4. Պատուել զայնտսիկ որ արժանի են:

ՊԱՏԵՐԱԶՄ

Վասն ջորից իրաց առնի իրաւամբ պատերազմ:

1. Վասն հաւատոց :
2. Վասն արդարութեան :
3. Վասն պահելոյ զխաղաղութիւն :
4. Վասն ազատութեան :

Չորք իրք ստիպեն զմարդն առնել պատերազմ:

1. Բազմութիւն գանձուց :
2. Փառասիրութիւն :
3. Ցանկութիւն :
4. Յաճախութիւն զինուց :

Չորք իրք մերժեն զպատերազմ:

1. Վրէժխնդրութիւն :
2. Պակասութիւն կերակրոց :
3. Սակաւութիւն գրամոց :
4. Չանձրութիւն պատերազմելոց :

Չորս ինչ վնասակար առնե պատերազմ:

1. Դատարկացուցանէ զքաղաքս :
2. Բերէ զնրւագութիւն կերակրոց :
3. Ստիպէ զմարդիկ հեռանալ ՚ի հայրենեաց :
4. Պատճառ լինի սովու :

ՊԱՐՏԻՔ

Չորս ինչ առնաւել պարտին մարդիկ:

1. Մեծացուցանել զառաքինիս :
2. Պատժել զչարագործս :
3. Պատուել զառաքինութիւնս :
4. Օգնել կարօտելոց :

ՊՈՌՆԻԿ

Չորք են ազգք պոռնկաց:

1. Առաջինն՝ վասն սիրահարութեան :
2. Երկ-

րորդն՝ վասն անյադ ցանկութեան: 5. Արորդն՝
առ 'ի յափշտակել զինչս: 4. Չորրորդն՝ վասն
հրապարակագոյժ լինելոյ:

ՍԷՐ

Չորք իրք ծնանին 'ի սիրոյ:

1. Պատուել զԱստուած: 2. Սիրել զընկերն:
3. Օգնել կարօտելոց: 4. Խրատել զմոլորեալս:

ՍԻՐԵԼ

Չորք են աստիճանք սիրելոյ:

1. Տեսանել: 2. Խօսակից լինել: 3. Շօշափել:
4. Ժառանգել:

ՍՊԱՍԱԻՈՐ

Չորս ինչ պարտի ունել սպասանոր յառ:

1. Հանճար 'ի ծառայել: 2. Արագութիւն 'ի
սպասաւորել: 3. Քաղցրութիւն 'ի խօսել: 4.
Հաւատարմութիւն 'ի տալ եւ յառնուլ:

ՍՏԱՅՈՒԱԾՔ

Չորք իրք վաղվաղակի կողոպտեն զստաց-
ուածս 'ի մարդկանէ:

1. Հրկիզութիւն: 2. Բռնակալք: 3. Հեղեղք:
4. Կարկուտ:

ՍՔԱՆՁԵԼԻՔ

Չորք մեծագոյն սքանջելիք են յաշխարհի:

1. Արեղակն՝ որ 'ի միում առուի պատէ զամե-

Նայն երկիր : 2. Զուր՝ որ հաստատուն է եւ
 առանց շարժման միաւորեալ ընդ երկրի : 3.
 Պէսպիսութիւն կերպարանաց 'ի դէմս երեսաց :
 4. Անչափ բազմութիւն մարդկան որոց ազգի
 ազգի են գնացք, եւ հասանեն 'ի մի վախճան,
 որ է մահ :

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Զորս ինչ պարտի ունել վաճառակաւնն :

1. Լինել ուշիմ 'ի գնել : 2. Հանճարեղ 'ի վաճառել :
3. Հաւատարիմ 'ի տալ եւ յառնուլ :
4. Քաղցրախօս լինել 'ի սակարկանել :

ՎԷՃ

Զորս ինչ պարտի ունել նա՛ որ կամի վիճել
 եւ հակառակել :

1. Խոնարհութիւն՝ յառաջադրել : 2. Խմաստութիւն՝ 'ի պատասխանի տալ :
3. Խնամա՛ 'ի վիճել :
4. Առատաձեռնութիւն՝ 'ի ծախել ինչս :

ՎԻՇՏ

Զորք իրք տան մարդոյ վիշտս մեծամեծս :

1. Հոգք որդւոց : 2. Կորուստ ընչից : 3. Անակրնկալ դիպուած 'ի թշնամեաց :
4. Նուաճումն բարեկամաց :

ՎՆԱՍ ԱՌԱՆՑ ԴԱՐՄԱՆՈՑ

Զորք իրք են որք բառնան 'ի մարդկանե, եւ
յետոյ ոչ կարեն դառնալ:

1. Կուսուլթիւն՝ եթէ ապականի :
2. Կեանք՝
եթէ բառնան :
3. Համբաւ՝ եթէ կորնչի :
4. Ան-
դամ՝ եթէ հատանի :

ՎՆԱՍ ԱՌԱՆՑ ՕԳՏԻ

Զորք իրք առաւել վնասեն, եւ են առանց
օգուի:

1. Յանկուլթիւն առանց որդեծնուլթեան :
2. Տրամուլթիւն առ ատելուլթեան :
3. Ընդունայն
խորհուրդք :
4. Խաժատիչ նախանձ :

ՏԱՌԱՊԱՆՔ

Ի ջորս դեպս տառապի մարդ:

1. Ի հասանել պատուոյ :
2. Ի փախչել յաղքա-
տուլթենէ :
3. Ի հրաժարել 'ի նախատանաց :
4. Ի մեծացուցանել զորդիս իւր :

ՏԻՐԵԼ

Զորք ազգք մարդկան ունին ցանկութիւն մեծ
տիրելոյ:

1. Աղքատն՝ 'ի կողոպտել զինչս մեծատանց :
2. Մեծատունք՝ 'ի պաշտպանել :
3. Վշտաց-
եալք՝ 'ի խնդրել վրէժս :
4. Բարիք՝ 'ի պաշտ-
պանել զքաղաքս :

Առաջինքն՝ ժանտք են քաղաքացւոց : Երկ-
րորդքն՝ կարեն համբերել խիք իրօք : Եւ-

բորդքն՝ վնասեն բազում անդամ : Չորրորդքն՝
օգտակարադոյնք են :

ՏԻՐԵԼ ՅԱՆԻՐԱԻԻ

Չորք ազգք մարդկան յանիրաւի տիրեն ՚ի
վերայ այլոց :

1. Մեծատունք : 2. Խարերայք : 3. Հպարտք :
4. Համարձակք :

Չորք անպատշաճութիւնք ծնանին յանիրաւ
իշխանութենէ :

1. Կեղծաւորեալ պատիւ : 2. Մահաբեր հա-
խանձ : 3. Ատելութիւն իշխանաց : 4. Պատիժ
պատուհասի պետաց :

ՏՂԱՅԱՆԱԼ

Չորք իրք տղայացուցանեն զծեր :

1. Սիրտ : 2. Ունայնութիւն : 3. Լեզու : 4.
Յանկութիւն :

ՏՈՒՆ

Չորք իրք դարձուցանեն ստեպ զմարդ ՚ի
տուն իւր :

1. Սէր կնոջ : 2. Վայելչութիւն տան : 3. Ոչ
գտանել ընկեր զոք : 4. Ժամանակ հար :

Չորք իրք հանեն զմարդ ՚ի տանէ :

1. Առաւել դարչահոտութիւն : 2. Սաստիկ ծուխ :
3. Կաթիլք անձրեւաց : 4. Բարկութիւն կնոջ :

ՏՈՒՐԳ ԱՌԱՆՑ ՎՆՅԱՍՈՒՅ

Չորս ինչ տայ մարդ առանց վնասու անձին:

1. Գիտութիւն՝ զոր ուսուցանէ:
2. Ճրագ՝ որով լուսաւորէ:
3. Գործ վայելուչ զոր առնէ:
4. Քաղցրութիւն զոր 'ի կիր արկանէ:

ՏՐՏԱՌԻԹԻՒՆ

Չորք իրք են պատճառք մեծի տրտմութեան:

1. Ծառայել ասկերաստի:
2. Աղաչել առանց լսելի լինելոյ:
3. Առնել բարիս առանց ընդունելոյ վարձս:
4. Յպասել այնմ որ յապաղէ 'ի դալ:

Չորք իրք տան վիշտ մեծ մարդոյ առանել քան զայլ ինչ:

1. Կեալ ընդ յիմար ընտանեաց:
2. Ունել բազում չար որդիս:
3. Ի միում ժամու կորուսանել զբազում ժամանակաց շահ:
4. Համբերել ընդ հրամանաւ:

ՏՐՏՆՁԵԼ

Չորք ազգք մարդկան են, որք անմտաբար տրտնչեն:

1. Նա՛ որ տրտնջէ զԱստուծոյ, թէ վասն էրո ոչ արար զնա այնպէս որպէս կամէրն:
2. Որ տրտնջէ զբախտէն յորժամ յաշխատանս է:
3. Որ տրտնջէ զայլոց 'ի պատահմունս:
4. Որ տրտնջէ զանձնէ խորհելով զկորուստ դիպող ժամանակի:

ՓԱՍՏԱԲԱՆ

Ձորս ինչ պարտի ունել փաստաբանն:

1. Ասել համբերութեամբ հակառակորդին :
2. Բարւոք նկատել զոր լսէն :
3. Պատրաստ ունել զպատշաճ պատասխանիս :
4. Հանել 'ի գլխուս զպատճառան որ առաջի կան :

ՓՈՓՈԽՈՒՄՆ

Ձորք իրք փոփոխին բազում անգամ:

1. Կամք կնոջ :
2. Բախտ յաջող իրաց :
3. Իայն երեսաց վասն դորձելոց :
4. Հողմն որ շնչէ :

ՔԱՀԱՆԱՅ

Ձորք իրք վայելուց են քահանայի:

1. Յառաջագոյն ընթեռնուլ զժամերդութիւնն զոր ասելոց է 'ի վաղիւն :
2. Կրթել զանձն յուսումն զմասն մի գիշերոց :
3. Մեկնել աշակերտայ իւրոց զգժուարինս :
4. Լինել քաղցրաբարոյ ընդ նոսա :

Ձորք իրք քաջայերեն գրահանայն, զի բարւոր ասիցե գաղօթսն:

1. Բազմութիւն ունկնդրաց :
2. Բազմութիւն եկամտից :
3. Առաւել գիտութիւն :
4. Պատիւ զոր շահի անտի :

ՔԱՐՈՋԻՉ

Ձորս ինչ պարտի ունել քարոզիչն:

1. Շանուցանել ժողովրդեան զիրս օգտակարս :

2. Նշանակել զնիւթն , զորմէ խօսելոց է : 3.
 Ոչ կրկնել բազում անգամ զայն զոր միանգամ
 ասաց : 4. Հառառօտս հատանել :

ՕԳՏԱԿԱՐ ՓԱԽՈՒՍՏ

Ի ջորից իրաց պարտ ե փախչել մեծաւ օգտիւ :

1. Ի վարելոյ ընդ ամենեցուն : 2. Ի վշտանալոց
 վասն իւրաքանչիւր իրաց , որք ոչ են ըստ հա-
 ճութեան մերում : 3. Ի ցաւելոյ առաւել վասն
 անցելոց իրաց : 4. Ի ցանկանալոց այնմ զոր ոչ
 է հնար ունել :



ՈՏԱՆԱԻՈՐ

ՎԱՍՆ ԿԻՒՐԱԿԷԻ

ԱՍԱՅԵԱԼ

ՅԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԷ



ՏԷՐԸՆ գրեալ ե զայս յօրէնս,

Մատամբք իւրովք, յԱստուածեղէնս :

Թե պանեացիր զԿիրակես,

Եւ 'ի նմա մի ինչ գործեացես :

Եթե պահես զԿիրակէն,

Հօտք եւ անդք քո բազմանայցես :

Թե հակառակ կաս դու նմին,

Բարիքքն քո խաւարեացին :

Բամեայ ազգաց տոհմք մարդկեղեն,
 Ունին փափուկ զԿիրակեն,
 Ուրբաք Տաճկին՝ Շաբաք Հրեին,
 Օր Հինգշաբթի՝ Կռապաշտին:
 Ազգըն Հրեից ՚ի հին օրենս,
 Խնամով պահէր զԿիրակես.
 Թէ սպանանէր զնա քըշնամին,
 Նա ջառաներ ինչ ամենեւին:
 Ռամիկք մարդկան, ՚ի Հայ ազգեն,
 Որ ոչ պահէր զԿիրակեն,
 Ոչ էր նման դուք Կռապաշտին,
 Եւ ոչ Տաճկին, եւ ոչ Հրեին:
 Այս են օրենք. Քրիստոնեայ ես,
 Աւել ջածել ՚ի Կիրակես.
 Այլ դեգերեայ յեկեղեցին,
 Միտ դնել բանից քահանային:
 Քահանայ դու, որ յաշխարհի,
 Երեսփոխան ես Քրիստոսի.
 Թէ ժողովուրդն անօրինի,
 Արիւն նորա ՚ի քեն խնդրի:
 Զամենեսին դու լաւ խրատես,
 Զի զԿիրակեն Սուրբ պահեսցես.
 Եւ մի երթար ՚ի տունս նոցա,
 Թէ բանից քոց ոչ լուիցես:
 Ասա նոցա զօրենս յայտնի,
 Զի ան ՚ի սիրտ նոցա անկցի.
 Նա անաստուած եւ անօրէն
 Է, որ ջպահէ զԿիրակեն:

Լուր դու գօրեմս Հրեից ազգին,
 Մակարայեան քաջի գնդին.
 Անտիրոքոս խոզն անտառին,
 Զինչ ոչ գործեաց ընտրեայ տոհմին:
 Սուսեր առեայ կոտորեցին,
 Զբոյոր մարդիկ Հրեից ազգին.
 Զձեռս 'ի գործ նորա ջարկին,
 Զի մի առորք սորքք պղծեցին:
 Արդ որ ջպահե գԿիրակեն,
 Յանդիմանի 'ի Հրեայ ազգեն.
 Որ գԿիրակեն ոչ պահիցե,
 Թողու գօրեմսն 'ի Քրիստոսե:
 Աստուած ջիք այնր ամենեին,
 Որ ջտայ պատիւ Կիրակեին.
 Կամ 'ի տուն Տեառն ոչ յանախե,
 Քան գՀրեայս իսկ պղծագոյն ե:
 Վայ այնմ մարդոյ ե ե եղուկ,
 Որ գԿիրակեն ջունի փափուկ.
 Ոչ Թորք, ոչ Հայ ե այնպիսին,
 Այլ անաստուած 'ի գլխովին:
 Ազգն Հրեից երբեմն 'ի հնում,
 Շաբաթս ե տօնս ունեք բազում.
 Առ իւրաքանչիւր օր' օր մի,
 Յեօթն շաբաթս' գշաբաթ մի:
 Առ եօթնամիս' մեն մի ամիս,
 Յանցնիւր եօթն ամս' մի մի տարիս.
 Զեզ յեօթն առուր մի ե շաբաթ,
 Ի գործոյ գայն ջառնեք ազատ:

Դու տես գսեր Հրեից ազգին,
 Ջկիրակեն պղծեաց մի կին.
 Առ յոյժ ցրտոյն նա կրակ էլոյց,
 Եւ արար ազգն զնա բարկո՞ծ:
 Նա էլոյց հուր վասն ցրտոյն,
 Կրեաց պատիժ ազգն ողջոյն.
 Մինչչեւ կնոջըն լեալ բարկո՞ծ,
 Տեւեաց յազգի անդ մահուն կո՞ծ:
 Թե ընդեր կրակ արար մի կին,
 Տեր բարկացաւ ողջոյն ազգին.
 Որ ջտայ պատիւ Կիրակեին,
 Քարկո՞ծելոց է այնպիսին:
 Ջայդ օրինակ արա անձին,
 Եւ տուր պատիւ Կիրակեին.
 Ջի բարկութիւնըն յատուածուստ,
 Մի մատնեացէ զձեզ ՚ի կորուստ:
 Տեսեր զԱղամ զնախնին մեր հայր,
 Որ Աստուծոյ բանին ջանաայր.
 Վեց հազար ամբ են զի գաւակ,
 Նորա վշտաց եղեւ նշաւակ:
 Թե ոչ պահեք զԿիրակես,
 Պատիժք գայոց են ձեզ պես պես.
 Այժմ էւ յաւուր դատաստանին
 Բարկութիւն մեծ գայցէ նոցին:
 Որ զսուրբն օրե ջառնե ինչ փոյթ,
 Ուստերք, դատերք իւր ջեն անբոյթ.
 Հօտք էւ անդք իւր պատուհասին,
 Կարկտոյ էւ հրոյ ճարակ լինին:

Որ զհին օրենս՝ էտ նոյն մի տեր,
 Թե զշաքարս իմ ջպահեր, ասեր.
 Ես գտարին ձեր գլխովին,
 Առնեմ ՚ի գլուխ ձեր հուր կրկին:
 Քրիստոս յաղագս քո խաջեալ,
 Ջղժոխան հինս է աներեալ.
 Դու ջպահելով զԿիրակես,
 Քեզ նոր դժոխս անձամբ կազմես:
 Որ ոչն պահեն զԿիրակեն,
 Բարկութիւն մեծ անձանց գանձեն.
 Վասն գործոյ Կիրակեի
 Գան պեսպես ցարք անդաստանի:
 Երաշտութիւն, մարախ, կարկուտ,
 Ջորեակ, դայուկն ժանտաժուտ.
 Անասնոց ցարք է կոտորածք,
 Մահք տարածամբ է այլ արկածք:
 Ան է փախուստ է խռովութիւնք,
 Պատերազմութիւնք, սասանութիւնք.
 Աւար, կապուտ, անձրեալքերք,
 Եւ սպանութիւնք, քանդմութիւնք, աներք.
 Ողբք է լալիւնք է ցարք անձին,
 Եւ աստ է անդ ձեզ լինիցին:
 Որ ոչն պահեն զԿիրակեն,
 Չանձինս հրոյ ճարակ առնեն:
 Մի ինչ գործեր ՚ի կիրակես,
 Յեկեղեցւոջ տեսցեն զքեզ.
 Լսել քարոզ է զընթերցուած,
 Խոստովանել վասն յանցանաց:

ՄԱՆԿՏԻՈՅ ԽԱՂՔ

ՀՆԱՐԵԱԼՔ Ի ՀԱՆՃԱՐԵՂԱՑ ՈՄԱՆՑ

ԶԻ Ի ԲԱՑ ԿԱՑՑԵՆ ՄԱՆԿՈՒՆՔ

ՅԱՆԱՐԺԱՆ ԽԱՂՈՒՑ

Վայելուչ տղայական խաղք : Երեք իրք
յերից ոմանց թաքուցանին, եւ միւս
եւս չորրորդ ասացէ թէ «յր զինչ թատուցեալ էցե
յերեց երայ անդի :

Համարեսցուք թէ երեք անձինքն իցեն,
Արամ, Հայկ եւ Տիգրան որ խաղան. իսկ Ար-
չակ իցէ չորրորդն այն որ գուշակիցէ :

Համարեսցուք եւս թէ 'ի մէջ խաղալեա-
ցն իցեն երեք իրք. եւ 'ի փայտէ, կամ 'ի
քարէ եւ կամ յայլ ինչ նիւթոյ իցէ իրն որ թա-
քուցանիցի : Զոր օրինակ . մին իցէ լիմոն, միւ-
սըն թուրինջ, եւ միւսն եւս խնձոր, կամ այլ
ինչ որ հաճոյ իցէ :

Իցեն եւս 'ի մէջ խաղացողացն Չհ մանր քա-
րինք կամ սիսեռունք, եւ կամ այլ ինչ մանր
որ համարիցի : Յետոյ Արչակ որ գուշակելոցն
է, 'ի մտի իւրում պահիցէ զանուանս երեսունց
իրացն թաքուցելոց այսու գրովք այբուբենից :

Ա. Բ. Գ : Իսկ զերիս անձինս զխաղացողս
'ի մտի իւրում ունիցի այսպիսի ինչ կարգաւ .
1 . 2 . 3 . որ է առաջին, երկրորդ եւ երրորդ
անձն . այսինքն՝ Արամ, Հայկ եւ Տիգրան, կամ
ով ոք եւ իցէ :

Եւ յառաջ քան զԹաքուցանել երից իրացն
յերից անձանց անտի, Արչակ՝ որ է գուշակող,
'ի 24 քարանց անտի որ կայցեն 'ի միջի՝ տա-
ցէ Առաջնոյն 1 քար, Երկրորդին՝ 2 . Երրոր-
դին՝ 5 :

Ապա գուշակողն տացէ երից անձանցն դայա
պատուէր . Ով ոք 'ի ձէնջ Թաքուցանիցէ զԱ,
առցէ 1 յ18 քարանց անտի մնացելոց այնչափ
ինչ քար՝ որչափ ինքն ունիցի : Որ Թաքուցա-
նիցէ զԲ, առցէ քարինս երկիցս այնչափ՝ որ-
չափ ինքն 'ի ձեռին իւրում ունիցի . Իսկ որ
զԳն Թաքուցանիցէ, առցէ քարինս չորս ան-
գամ այնչափ՝ որչափ ինքն ունիցի : Զմնացեալ
քարինսն Թողցեն յայտնի, որ լինի արդարեւ
մին 'ի Թուոց աստի, 1 . 2 . 5 . 5 . 6 . 7 :

Յետոյ ինքն Արչակ զերիս իրան եւ զերիս
անձինսն բարւոք զմտաւ ածեալ եւ պահեալ
կարգաւ 'ի մտի իւրում, հեռասցի սակաւ ինչ,
մինչեւ երեքին անձինքն Թաքուցեն զերիս
իրան ըստ հաճոյից իւրեանց, եւ կոչեսցի ին-
քն 'ի տեսանել զքարինսն որ կայցեն 'ի միջի,
եւ գուշակել զմնացեալ քարինսն Թէ ով զինչ
Թաքոյց :

Իբրեւ Արչակ դառնայ եւ տեսանէ զքարին-
սըն որ 'ի միջի են, գտանէ զի մի քար մնաց-
եալ է . առաջինն ունի Ա, երկրորդն ունի Բ,
երրորդն ունի Գ :


Իսկ զքարանցն մնացելոց գուշակումն տես
աստ յաղիւսակի իւրում :

ԳԱՐԻՆՔ	ԱՆՁԻՆՔ	ԻՐՔ
1	1	Ա
	2	Բ
	3	Գ
2	1	Բ
	2	Ա
	3	Գ
3	1	Ա
	2	Գ
	3	Բ
5	1	Բ
	2	Գ
	3	Ա
6	1	Գ
	2	Ա
	3	Բ
7	1	Գ
	2	Բ
	3	Ա

ՀԱՐՑՈՒԱԾ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ

Ի ՄԷՋ ԵՐՈՒԱՆԴԱՅ ԵՒ ԹՈՐԳՈՄԱՅ

Վասն իմանալոյ զքիւն զոր 'ի մտի ունի որ,
այլ եւ այլ օրինակաւ:



ՕՐԻՆԱԿ ԶՈՅԳ ԹՈՒՈՑ

ԵՐՈՒԱՆԴ

ԹՈՐԳՈՄ

Կալ թիւ ինչ 'ի մտի:

Կալայ 4:

Երեք պատկեա:

Արարի 12:

Կիսեա:

Կիսեցի . 6. 6:

Հաւասար իցէ կիսեալն:

Այն:

Զմին 'ի բաժնիցն կիսելոց

երեք պատկեա:

Երեք պատկեցի . 18:

Ո՞րչափ ինուը իցեն 'ի թիւն

զոր երեք պատկեցեր:

Երկու:

Ապա առաջին թիւն զոր կա-

լար 'ի մտի էր . 4:

Այն , այդպէս էր:

Զի յայսմ խաղու որչափ ինուը են , այնչափ
երկուք համարին:

ՕՐԻՆԱԿ ԱՆԶՈՅԳ ԹՈՒՈՑ

ԵՐՈՒԱՆԴ

ԹՈՐԳՈՄ

Կալ թիւ ինչ 'ի մտի:

Կալայ . 3:

Երիւք բազմացո:

Եղև 9:

Կիսեա:

Կիսեցի . 4. 5:

Հաւասար իցէ զոր կիսեցերն:

Ոչ:

Աստ երուանդ 'ի մտի ունի զմի միայն թիւ:

Զմեծ բաժին թուոյն զոր կի-

սեցեր, երեքսպատկեա: Երեքսպատկեցի. 13:

Ո՞րչափ ինն կայցէ 'ի նմա: Մի միայն:

Ապա զոր կալար 'ի մտի էր 3: Այո:

Զի որչափ ինուըք են, այնչափ եւս երկուք են, եւ մի թիւ եւս աւելի զոր 'ի մտի կալայ:

ԱՅԼ ՕՐԻՆԱԿ ԹԻԻՍ Ի ՄՏԻ ՈՒՆԵԼՈՅ

Կալ թիւ ինչ 'ի մտի: Կալայ. 3:

Կրկնեա: Կրկնեցի. 6:

Դիր 'ի վերայ 4 եւս: Եդի. 10:

Հնգիւ բազմացո: Բազմացուցի. 50:

Յաւել 'ի նա եւ 12: Յաւելի. 62:

Տասամբ բազմացո: Արարի. 620:

Ո՞րչափ ինչ եղեւ: Վեց հարիւր եւ քսան:

Յետոյ լռելեայն մտօք բառնամ զ320 'ի 620 թուոցն, եւ մնայ 300. ապա թիւ զոր կալայ 'ի մտի' էր 3:

Այսպէս է եւ 'ի զոյգ թիւս. զի որչափ հարիւր ելանէ, նոյնչափ մի մի թիւ իմացեալ լինի փոխանակ հարիւրոցն. բայց պարտ է նախ բառնալ անտի զ320:

ԳՈՒՇԱԿԵԼ ԶՈՐ ՇԱԲԱԹՈՒՆ

ԶՈՐ ՈՒՆԻՑԻ ՈՔ Ի ՄՏԻ

Կալ 'ի մտի օր մի:

Կալայ. Ուրբաթ:

Զթիւ աւուրն կրկնեա:

Կրկնեցի. 12:

Յաւել յայն եւ Յ եւս :

Յաւելի . 17 :

Բազմացո հնգիւ :

Եղեւ 85 :

Բազմացո տասամբ եւս :

Եղեւ 850 :

Որչափ հարիւրք կայցեն 'ի նմա : Ութ . 800 :

Ես 'ի ծածուկ մտօք 200 կամ 250 'ի բաց հանեմ , եւ մնայ 600 . ապա վեցերորդ օրն , այսինքն Ուրբաթ է օրն զոր կալար 'ի մտի :

Աստ եւս այնպէս է որպէս յառաջնումն . 'ի դումարէ անտի հարիւր թուոց պարտ է բառնալ զթիւն 250 :



ՄԱՆԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆՔ

Երամ մի հաւուց արածէին 'ի դաշտի . յանցանել ընդ այն այլ միւս հաւու՝ ողջունեալ զնոսա ասաց . Ողջոյն ձեզ , հարիւր հաւք : Եւ նոքա ասացին . Մեք ոչ եմք հարիւր հաւ . այլ մեք եւ քան զմեզ , եւ քան զմեր կէսն եւ կիսոյ կէսն , եւ դու եւս ընդ մեզ , ապա լինիմք հարիւր հաւք : Արդ իմա թէ քանի հաւք էին 'ի դաշտին . 36 :

Բառասուն մարդ գնացին 'ի բաղանիս : Բաղանեպանն էառ 'ի նոցանէ 40 դանդ . բայց երեք կարգ մարդկան էին որ 'ի բաղանիսն գընացին : Առաջնոյ կարգի մարդիկն հատուցին մէն մի կէս դանդ . երկրորդ կարգի մարդիկն մէն մի դանդ , երրորդ կարգի մարդիկն իւրաքանչիւր երկուս երկուս դանդս : Եթէ կամյա

Իմանալ թէ յիւրաքանչիւր կարգէ անտի քա-
նիք ունիք կային 'ի բաղանիսն, գիտասջիր զի
20 մարդք էին որոց մէն մի կէս դանդ ետ .
10 մարդք որոց իւրաքանչիւր ետ մի մի դանդ .
եւ 10 մարդք որք ետուն մի մի երկուս դանդս :

Այր ոմն ունէր ընդ իւր գառն մի, գայլ մի,
եւ խուրճն մի խոտոյ: Իբրեւ եհաս յեզր դե-
տոյ, ընդ գետն անվնաս անցոյց զնոսա այսու
օրինակաւ: Նախ անցոյց զգառնն միայն . յե-
տոյ զխոտն միայն: Ապա եբեր յայս կոյս գե-
տոյն զգառն միայն . յետոյ թողեալ զգառն՝ ան-
ցոյց զգայլն միայն յայնկոյս . ապա եկն եւ ըզ
գառնն վերստին անցոյց:

Ծեր ոմն օրհնեց զմանուկ մի՝ եւ ասէ . Աեաց
որչափ կեցերդ . եւ եւս այնչափ կեաց, եւ դար-
ձեալ երկիցս եւս այնչափ: Նաեւ յաւելցէ Աստ-
ուած 'ի քեզ զմին յամաց իմոց զի լինիցիս հար-
իւրամեայ: Արդ եթէ կամիս գիտել թէ որչափ
ամաց էր մանուկն այն, գիտասջիր զի էր ութ
ամաց եւ ամսոց երկոց:

Այր ոմն ունի աման մի ութ լտերաց լի
ձիթով. կամի կիսել զձէթն, եւ ունի այլ եւս
երկուս անօթս, որոց մին տանի երիս լտերս,
եւ միւս հինգ: Յայս երկուս անօթս զայն ութ
լիտր ձիթոյ կիսեաց այսպէս:

Նախ ելից զանօթն որ տանէր լտերս երիս,
եւ հեղ զայն 'ի միւս անօթն որ տանէր լտերս

հինգ : Գարձեալ ելից դանօթն երից լտերաց եւ
 եհեղ յանօթն հինգ լտերաց , մինչեւ մնալ լտեր
 միոջ ձիթոյ յանօթն երից լտերաց : Յետոյ եւ
 հեղ զձէթն որ յանօթ հնգից լտերացն էր՝ յա-
 մանն ութից լտերաց , եւ զմի լիտրն որ էր յե-
 րից լտերաց ամանն՝ եհեղ յամանն հինգ լտե-
 րաց . յետոյ ելից միւսանգամ զերից լտերաց
 անօթն եւ եհեղ ՚ի հինգ լտերաց անօթն : Այս-
 պէս եղեն չորք լտերք ձիթոյ ՚ի հինգ լտերաց
 ամանն , եւ չորք լտերք յութից լտերաց ամանն :



ԱՌԵՂԾՈՒԱԾԻ (ՀԱՆԵԼՈՒԿԻ)

Ա Ս Ա Յ Ե Ա Լ Ք Ի Գ Ի Տ Ն Ո Ց



ԵՂՆ

Մանուկ մի քաջ աղուոր հասակ,
 Կապեր կրթոցն դաստառակ .
 Է նա բարի անմեղ տեսակ,
 Եւ Բրիստոսի ինքն օրինակ :

ԵՁՆ

Է աներման աղուոր տիկին,
 Ինքըն ծնանի ըզմայրն օձին .
 Փոքու մասն թե թեզ պիտին,
 Դու լաւ սիրե ըզսրսորդին :

ԱՅԾ

Ձամեն շրջի ինքն 'ի քարեր,
 Ունի ծախու մազե կըրծեր.
 Գինույ ունի աղուոր տըկեր,
 Ի'օժտե ճրի դանկի կոթեր:

ՄԱՔԻ

Ի յԱստուծոյ բանն է նմաներ,
 Հերն վայելուչ եւ գուուզ եկեր.
 Է նա բարի աղուոր ընկեր,
 Բայց զօճն ուտե զինչ ըզխտներ:

ԽՈԶ

Ջետ միակեց հազնի խոշոր,
 Ի'ինքն 'ի բրնե մազեղնաւոր.
 Ջորմե ասեն թե ջե աղուոր,
 Ջի Բրիսատուի կայ նենգաւոր:

ԱՐԶ

Շըխուկ մի կայր գետ ըզՖըրեր,
 Ի'ինքըն խաւար մուշտակ ուներ.
 Խաղայր քաջօյ կենայր ո'յառներ,
 Ի հետ տանծին գաջերն ածեր:

ՋՈՐԻ

Աստուած ջարար' եղեւ նա նոր,
 Շատ հիացայ ես վասն այնոր.
 Թեպետ նըման է 'ի փայտ ջոր,
 Ըզնա սիրե խիստ ճիաւոր:

ՍՂՈՒԷՍ

Ջեռ ըզայսր խիստ է 'ի յար,
 Սիրէ զմորթին և՛ ատէ զբան ջար.
 Առ ինչ կարդամ զիւրմէ քեզ ճատ,
 Խելօքըն ծով է զես խիկար:

ԿԱՏՈՒ

Որպէս տիկին ուշիկ զընայ,
 Պարան 'ի հետըն քարշ կու գայ.
 Բազմի յոսկի բարձի վերայ,
 Որսիկ առնէ զես ըզբաջայ:

ՍԱՐԴ

Ի սուրբանի մեծ քարխանան,
 Կայր մի ուստա խիստ անըման.
 Առանց հորի է մարութան,
 Գործեր բարակ գործ անխափան:

ՈԶՆԻ

Գայր 'ի յայգին որպէս ըզգող,
 Ի՛ագան ուտեր ինքըն իւաղող:
 Գիրացեր է զես ըզգեր գող,
 Բայց ինքն ջարժէ բան մէկ մի փող:

ՍԱԳ

Հանց գեղեցիկ հաւ իմաստուն,
 Որ չէ տեսեայ հանցեղ գիտուն.
 Երբ գողըն գայ մտնէ 'ի տուն,
 Նա գաղաղակ բառնայ 'ի բուն.

ՅԻՐԱՄԱՐԳ

Ուր բուրաստան կայ ու պարտեզ,
 Ու շատ դայար ու կանանջ սեզ.
 Անդ աստ ճեմի ջը տայ քարտեզ,
 Իւր անձն ամեն ոսկի տըրեզ:

ԱՐՏՈՒՏԻԿ

Տեսի փոքրիկ մոնոզոնակ,
 Ի'ուներ պլուզ իւր կընկըղակ.
 Յառաւօտուն սկսնոյր մինակ,
 Պաշտեր անոյշ քաղցր եղանակ:

ԱՆԾԵՂՆ

Ձեռ գշահեն հանց սուր էրթայ,
 Համյայ կապե դարտակ դառնայ.
 Ձեռ զասորի երեց կարդայ,
 Ուտե ջոր թան է թարխանայ:

ԽԱՂՈՂ


Ձարմանք մ'ասեմ քեզ սիրելի,
 Կին մի ծընաւ գըռուզ որդի.
 Տըղան ունի այիք ծերի,
 Երբ ծերանայ դառնայ սեւի:

ԳԻՆԻ

Ըզջուրն հրոյ նըման տեսայ,
 Ու հանց պայծառ թան գլուսընկայ.
 Քան գծիրանի ծով կը ծըփայ,
 Շատոց արիւն հեղեայ է նա:

ԱՅԼ ԻՄՆ ԿԵՐՊ ԶԲՕՍՆԼՈՅ

Ի գտանել զկայեայ տառն, զորոյ խրատն տես
զկնի ոտանաորացս:



Ա.

Թե շատ կաճայ ջափես 'ի ճախ.
Գտցես 'ի յաջ գայ խիստ յաճախ:

Բ.

Բաժնե անի բան շաղկապած.
Գիջ զգիտ վիճակիտ փակած:

Դ.

Կամբղ մշակ ծառայ դատես.
Կանխեայ զանտենն վայելես.

Ը.

Իսպառ ժըպտիս լաս ըստ կոծով.
Ըստ առաջի խաջի թըռչիս կառով:

ԺԶ.

Սաղմոս ասն վշտահաճայն.
Առաջապան առ ճջաճայն:

ԼԲ.

Փրփրացաք ցաք ցաքօք.
Քարացաք աքար ցաքօք:

Ծանիր սիրելի իմ, զի եթէ կամօրցիս զբօս-
նուլ սովաւ եւ կարգալ առաջի ուրուք, յա-
ւարտելն ամենայն տան հարց թէ զիրն զոր կա-
լաւ 'ի մտի' կայցէ 'ի նոսա թէ ոչ. եւ դու պահ-
եալ 'ի մտի' զտունան զորոց ասիցէ թէ կայ զիրն
'ի նոսա, զումարեա զթիւնն որ 'ի վերայ այնց
տանց են. եւ ըստ այնմ զումարեալ թուոյ հա-
մարեա զգիրս այրուբենին սկսեալ յԱյբէն,
յորում գրի գաղարի թիւն՝ այն է զիրն զոր
կալեալ է նա 'ի մտի:

Բայց գիտասջիր՝ զի թէ յառաջնում տան-
միայն կայ ասէ, այն Տ է. եւ թէ 'ի վերջնում
տան միայն կայ ասէ, անդ շիոթումն է. զի
'ի վերջնում տանն՝ երկու գիր կայ, որ չկայ 'ի
միւս այլ տունան, այսինքն՝ Ր եւ Օ:

Արովհետեւ արտաքոյ են 'ի թուոյ երեսուն
եւ վեց գրոյն Օ եւ Տ, բարւոք է զի մի կալ-
ցեն զայնս. զի անշիոթ մնասցեն այլքն: Եւ
եթէ յամենայն տան կայ ասիցէ, այն Այբն է:



Ծանիր եւ զհետեւեալ բոլորակացն զկիրա-
ռութիւն. զի ՅԱ տունք են սոքա. որք եւ ա-
սին Բնաբանք. որոց իւրաքանչիւրն 'ի վերայ
միոյ միոյ իրաց արարեալ է. որք են այսոքիկ:


Հաւատ. Յոյս. Սէր. Արախջին. Ատրոց.
Շապիկ. Հանդերձ. Գօտի. Մատանի. Բանա-
լի. Մեղր. Զուր. Գինի. Հաց. Աղ. Արմաւե-

Կի . Չիթեհի . Վարդ . Համատիիւռ . Բրաբիոն .
 Անթառամ . Մանուչակ . Շուշան . Նոնոֆար .
 Ոսկի . Արծաթ . Սնդիկ . Կլայեկ . Պղինձ . Եր-
 կաթ . Արճիճ :


Արդ՝ մինչ կամիցիս դու առաջի ուրուք
 հայիլ 'ի բուրրական , նախ զսա զոր աստ գրե-
 ցի՝ ընթերցիր առաջի նորա . զի խմացեալ թէ
 որքան բան 'ի ամա գոյ՝ այնպէս կալցի զոր եւ
 կամիցի : Եւ սկսեալ յառաջին բուրրակէն՝ ըն-
 թերցիր կարգաւ : Եւ 'ի կատարել յամենայն բու-
 լորակի՝ հարց թէ կայ բանն զոր կալաւ 'ի նամա
 թէ ոչ . եւ յորում ասիցէ թէ՛ կայ , զթիւսն որ
 են 'ի միջոցի այնց բուրրակաց ժողովեալ 'ի մի-
 ասին , երթ 'ի բնաբանն . ուր կարգաւ նշա-
 նակեալ են նշանագիրք յիւրաքանչիւր բնա-
 բանի վերայ : Եւ այսպէս լաւագոյն 'ի կիր արկե-
 եալ՝ աշխատանք շինողին մի 'ի զուր լինիցին :

Եւ յիրաւի՝ զի թէպէտ տղայականք են այ-
 սոքիկ , բայց եւ մեք ոչ սակա 'ի հափ հասե-
 լոց , այլ վասն նոցին եղաք զնոսա . զի պարա-
 պելով 'ի նոսին՝ յետս կացցեն 'ի վնասակար խա-
 դուց . եւ ընդ գրոց լիցի զբաղումն նոցին . ո-
 րովհետեւ տղայական բարուցն՝ այսպիսիք են
 ախորժելիք :







Ար ունիցին բառ ինչ 'ի մտի,
 Նախ յակն արկեալ բարւոք գանիւն,
 Է՞ անդ թե ճե ասել պարտի.
 Զի 'ստ այնմ դու կալցիս գրիւն:




Զնոյն արասցե նա քեզ յետոյ
 Եկեալ յերկրորդոյ յայդ անիւ.
 Դու միշտ գրիւն կալ յուշ քո,
 Եւ յառաջիկան յաւել հաշիւ:



Ընդ առաջինսն փորձեալ դու
 Զունիս այլ ես պեսս իրատու.
 Յասէլ նորա թէ, ե յանուիս
 Զմիջոցի թիւն յաւել 'ի հինս:



Մի եւ նոյն կարգ ե ե ոչ այլ.
 Զուարթ մտօք միշտ զնոյն արա.
 Թե սխալեցիս լինիցի մո.այլ
 Ի հաշուի բռն. գայդ լաւ գիտա:



Նոր իմն է խաղս այս արդարեւ
 Ի պետս հանճարեղ հայ մանկան.
 Չի մի հատցի 'ի խաղ թերեւ,
 Ոչինչ խնայեալ աշխատութեան:

Ա.

Անկեղծաւոր հաւատք էս սուրբ,
 Բարի գործովք 'ի սուրբ սրբտե.
 Հաճոյ յկատուած զմարդ առնե,
 Զնա մանաւանդ որ մտադիրն է:

Բ.

Յոյսն է անվրեպ ակնկալել,
 Անճառ խոստմանցն յաւիտեճից.
 Որ աներկբայ յուսով յուսայ,
 Նա արժանի լիցի երկնից:

Գ.

Սերն է պիտոյ ամենեցուն,
 Առանց այնր որ ոչ կարե կեայ.
 Եթե սիրես զընկերն ըստ քեզ,
 ԶԱստուած 'ի քեզ իմա բնակեայ:

Դ.

Արախշինդ այդ որ կայ 'ի գլուխդ,
 Ի Սաղիմայ է ընծայ քեզ.
 Յերուսաղեմ յորժամ զընաս,
 Դու թաշկինակ մի բերցես մեզ:

Ե.

Զկտրոցդ գայդ գունակ ներկեայ
 Պահեա 'ի քեզ դու յոյժ սիրով,
 Զի մեզ բերցես յորժամ 'ի սուրբ
 Կարապետե գայցես բարեով:

Զ.

Շապիկն անձինդ է օրինակ
 Մեռելութեան քոյ պատանաց.
 Մեռն է դու գախարս հոգւոյ,
 Պահպանութեամբ տեսուն օրինաց:

Է.

Հանդերձ մարդոյ պարկեշտութեամբ,
 Զմերկութիւն անձին ծածկէ.
 Մի պճնասէր լինիր բարութ,
 Որ 'ի գարդուց զհոգին զրկէ:

Ը.

Գօտի ածեալ զմիջով անձինդ,
 Այն նշանակ է արութեան.
 Արի է դու իբրեւ զըմբիշ,
 Մարտիր ուժգին ընդ յոռութեան:

Թ.

Մատանին է քեզ գարդ պատուոյ,
 Նաեւ պարգեւ իշխանական.
 Ուրեմն է դու գիշխան հոգին,
 Մի առնիցես ծառայական:

Ժ.

Բանային է ինչ մի ազնիւ,
 Եւ յայտ առնէ հանճար խորին.
 Փակեցես զաջս ընդդէմ ջարեաց,
 Եւ բանայցես միշտ առ բարին:

ԺԱ.

Մեղրն է ազնիւ եւ քաղցրահամ,
 Իմաստութեան օրինակ է.
 Երէ նովաւ լիցիս վարժեալ,
 Ի բնաւ կարժեաց ըզբեզ փրկէ:

ԺԲ.

Զոր աղբերաց զաղտըս մարմնոյ,
 Առ ՚ի մաքրել քաջ լուանայ.
 Իսկ արտասուաց ջրով ախտ հոգւոյ,
 Ի բաց մերժեալ պայծառանայ:

ԺԳ.

Գինի ուրախ, առե, առնե,
 Արքայն Դաւիթ սուրբ մարգարէն.
 Մի շատ ըմպեր թէ արբենաս,
 Առցես պատիժըս փոխարէն:

ԺԴ.

Հաց զմարմինըն բուծանե,
 Բանն ըզհոգին կեցուցանե.
 Ըստ շնորհալուոյն սուրբ Ներսիսի,
 Զոր երգելով մեզ ցուցանե:

ԺԵ.

Աղն համեմիջ է կերակրոց,
 Որ թէ հոտի ոչ ինչ օգտե.
 Նոյնպէս է դեպք թէ թիւրիցին,
 Զոր է տերն իսկ մեր հաստատե:

ԺԶ.

Արմաւենին ե բարձրագոյն,
 Ի քառասուն տարւոջ անի.
 Զնոյն թիւ աւուրց մօր յարգանդի,
 Զոյգ ընդ մարմնոյն հոգին տածի:

ԺԷ.

Զիթենին ե գտարին ողջոյն,
 Մշտադալար 'ի գոյն կանաջ.
 Եւ դու գտերեւրս հոգւոյ քոյ,
 Անբափ պահեալ լինիջիր քաջ:

ԺԸ.

Վարդն ե իշխան խմբից ծաղկանց,
 Հոտով անոյշ քան զամենայն.
 Զանուշութեան վարուց քոց եւս
 Լցցե բուրումն զամենայն:

ԺԹ.

Համասփիռն ե ծաղիկ պայծառ,
 Ոյր արքայիկ օճ պահապան.
 Ծաղկի հոգւոյդ դարանակալ
 Օճն ե վնասող. կալ զայն եւ սպան:

Ի.

Բրաբիոնն ե ծաղիկ դրախտին,
 Այն գոր հրեշտակն եբեր Կոստին,
 Եթէ լինիս եւ դու մարուր,
 Արժանանաս նորս տեսին:

ԻԱ.

Անբառամն ե ծաղիկ դեղին,
 Փոքրագոյն սակայն գունաւոր.
 Նման նոցա որք փոքր են յաջս,
 Իսկ առ Աստուած միշտ փառաւոր:

ԻԲ.

Մանուշակն ե կապուտագոյն,
 Նախածաղիկ գարնան գուշակ.
 Առ հանդերձեայ կենաց գարնան,
 Քեզ աստ հնարեա ե դու թոշակ:

ԻԳ.

Շուշան ծաղիկն ե համատիպ
 Լուսազգեստիցն երանելեաց.
 Որք ե փայլեն յարքայութեան,
 Ըստ գրոց սրբոց հաւատայեաց:

ԻԴ.

Նոնոփարն ե եղեգնամե,
 Ի ջրաշեղջ տեղիս բուսեալ.
 Ի ջրոյ ախտից մաքուր կացցես,
 Զահն Աստուծոյ բարեոր ուսեալ:

ԻԵ.

Ոսկին ասի 'ի մեջ եօրանց,
 Հրահայելեաց անապական.
 Հոգի մարդոյն միայն ասի
 Ի մեջ զգայնոց անմահական:

ԻԶ.

Արծաթն 'ի վաշխ եթէ տացի,
 Կամ որ լինի արծաթաւեր.
 Ի սուրբ լերինն ոչ կացցէ նա,
 Սաղմութեցուն որպէս ասեր:

ԻԷ.

Սընդիկն է նիւթ արագ շարժուն,
 Որ ոչ մընայ միշտ հաստատուն.
 Նըման փոփոխ 'երկմիտ մարդկան,
 Որոց հաստոք ոչ են կայուն:

ԻԸ.

Կլայեկն է աղտոյ սրբբիջ,
 Կրկին պատճառ նոր նորոգման.
 Նոյնպէս է դու գիտցիդ սրբեայ,
 Արա դարձեայ լուսոյ նըման:

ԻԹ.

Պղինճն առակ առեայ լինի,
 Ի սեր անկեղծ բոյ ընկերին.
 Զոր թէ որք ոչ սեռն սիրեն,
 Հնչմամբ լոկով նորա բերին:

Լ.

Երկաթն է կարծր եւ ժանկաբեր,
 Քարասրտից է օրինակ.
 Ժանկոտ անձանց զագիր գործոց'
 Եւ անգղջից է հանգունակ:

ԼԱ.

Արճիճն ե թոյլ կապար անարգ,
 Որ 'ի պաղէյն ոչ կարծրանայ.
 Նոյնպէս տկար անճն 'ի վըշտի
 Վաղվաղակի իմն ուրանայ:

ՎԵՐՁ ԲՆԱԲԱՆԻՑՍ

Բանքս այսոքիկ որք աստ եղան,
 Չեն կատարեալ մըտաց մարդկան.
 Տըղայոց կաթն ջամբեցան,
 Մինչեւ առցեն ջափ այրական:

*Եւ որպէս 'ի սկզբանն ասացաւ, թէ ԼԱ.
 տունք են. որոց եօթն՝ են 'ի վերայ իրաց ա-
 գանելեաց եւ կրելեաց. եօթն՝ են 'ի վերայ կե-
 րակրոց եւ ըմպելեաց. եօթն՝ են 'ի վերայ
 ծաղկանց հոտոտելեաց. եօթն՝ են 'ի վերայ եօ-
 թըն հրահալելեաց: Իսկ առաջին երեքն՝ յայտնի
 են. որք հորս անգամ եօթն, եւ մի երեք վի-
 նին. որոց բաժանումն եւ իրքն՝ իմաստուն մը-
 տաց ոչ են տարադէպ: Որք եւ ամենեքին՝ գը-
 րեթէ հային 'ի հողեւորականն կոյս. զի բովան-
 դակութիւն գիտաւորութեան իրիք եթէ չիցէ
 'ի հողեւորն, ընդունայն է:*

Ուստի սիրով ներել խնդրի,
 Ի հարց 'եղբարցըդ սիրելեաց.
 Ի տկարութիւն մեր հայեցեալ,
 Մի մատնել զմեզ պարսաւանաց:



Յ Ա Ղ Ա Գ Ս

Բ Ա Ր Ո Ւ Յ Կ Ե Ն Դ Ա Ն Ե Ա Ց Ի Ն Ձ

Ա Ռ Ի Ի Ծ (արսլան) է աղատական, հաճոյա-
կան, յաղթասէր, հղօր, արդար, գթած, հը-
պարտ եւ գիշատիչ :

Փ Ի Ղ (ֆիլ) է իմաստուն, դաւաճան եւ նա-
խանձայոյզ :

Ո Ի Ղ Տ (տէվէ) է վրէժխնդիր եւ զչարող :

Ե Ր Ի Ի Ա Ր կամ Ձ Ի է փոփոխական, մեծամիտ,
դիմագրաւ, արշաւող եւ սնապարծ :

Է Շ է աղտեղի, խոտան, ծոյլ, հլու, ցանկա-
սէր, համբերող, անդգայ եւ երկայնակեաց :

Վ Ա Ր Ա Ձ (եապան տօնուղու) է դժնեայ եւ ա-
րիւնահեղ :

Խ Ո Ձ (տօնուղ) է վաւաշոտ, երկրասէր, ան-
յազ, խուլ, աղտեղի եւ ցանկասէր :

Ի Ն Ձ (գափլան) է ամբարտաւան, չարասիրտ,
քնքուշ, գոռող, նենգաւոր, վատահ, եւ եր-
բեմն երկչոտ :

Ա Ր Ձ (աշը) է որկրամուլ, կլանող, խստաբարոյ,
ցանկասէր, կատաղի, վայրաբնակ, խորամանկ,
նենգաւոր, կեղծաւոր եւ չարամիտ :

Գ Ա Յ Լ (գուրտ) է անհաշտ եւ յափշտակող :

Ա Ղ Ո Ւ Է Ս (թիւքի) է խաբեբայ, նենգաւոր,
չարագործ եւ դարանակալ :

ԿԱՊԻԿ (մայմուն) է նենգաւոր, խաբեբայ,
ցանկասէր, հտպիտ, ռիսակալ, հեզնող եւ սը-
տայօղ :

ՇՈՒՆ է բարկացող եւ ազահ :

ԿԱՏՈՒ է գող, ժլատ, կարճամիտեւ վնասա-
կար :

ՄՈՒԿ է քսու եւ վնասող :

ՆԱՊԱՍՏԱԿ (թավշան) է երկչոտ եւ դազիր :

ԳՈՐՏ (գուրպաղը) է զզուիչ եւ վայրահնչու :

ՕԶ է խորամանկ եւ եղբայրատեաց :

ԿԱՐԻՃ (ագրէպ) է չարալեզու եւ կշտամբող :

ՃԱՆՃ է զզուիչ եւ տմարդի :

ՍԻՐԱՄԱՐԳ (թավուզ գուշու) է անապարծ :

ԱՐԱԳԻԼ (լէյլէկ) է բուժ եւ ուսումնատեաց :

ՍՐԾԻԻ (գարա գուշ) է ամբարիշտ եւ կլանող :

ՋԱՅԼԱՄ (տէվէ գուշու) է ծոյլ եւ ազահ :

ՅԻՆ (չայլագ) է աւարառու եւ բազմակուլ :

ԱԳՌԱԻ (գարկա) է լիրբ եւ լեզուազար :

ԱՆԾԵՂ որ է ԿԱԶԱՂԱԿ (սագսաղան) է լեզ-
ուազար եւ շողոքորթող :



ԱՌԱՋԻՆ	ԵՐԿՐՈՐԴ	ԵՐՐՈՐԴ	ՉՈՐՐՈՐԴ
Վարդան Մինրդատ Զարեհ Գրիգոր Արմենակ Յակոբ Թորգոմ Յովսէփ	Յովհաննէս Լեւոն Երեմիա Ստեփանն Կարապետ Պօղոս Վահան Պետրոս	Իսահակ Դաւիթ Տիգրան Ալէքսան Մինաս Արամայիս Մանուէլ Երուանդ	Սարգիս Վահէ Գէորգ Արամ Մեսրոպ Զաքարիա Մովսէս Սեպուհ
ՀԻՆՔԵՐՈՐԴ	ՎԵՅԵՐՈՐԴ	ԵՕԹՆԵՐՈՐԴ	ՈՒԹԵՐՈՐԴ
Սամուէլ Անդրէաս Եղիա Մարտիրոս Ներսէս Բարսեղ Արրահամ Ռուբէն	Անանիա Տիրան Ղուկաս Թադէոս Սիմոն Մկրտիչ Միքայէլ Ռափայէլ	Նիկողոս Խոսրով Տրդատ Հմայեակ Ազարիա Գարեգին Յօնան Սմբատ	Մինրան Աբէլ Վահան Սուքիաս Հեթում Արշակ Աշոտ Կրօնիդէս

ԽՐԱՏ ՀԵՏԵԻՆԱԼ ՈՒԹՆ ԿԱՐԳ ԱՂԻԻՍՍԿԱՑ

Չայտասիկ ութ կարգս կամ սիւնս աղիւսակաց՝ այսպէս ՚ի կիր առնուլ պարտիս ՚ի գուշակել զանունն կալեալ յումեքէ : Նախ՝ ցուցցես նմա զառաջին կարգ անուանց, յորում կան 64 անուանք ՚ի մէջ ութ սեանց . եւ ասիցես զի գտցէ ՚ի նոսա եւ կալցէ ՚ի

ԱՌԱՋԻՆ	ԵՐԿՐՈՐԳ	ԵՐՐՈՐԳ	ՁՈՐՐՈՐԳ
<p>Վարդան Յովհաննէս Իսահակ Սարգիս Սամուէլ Սնանիա Նիկողոս Մինրան</p>	<p>Մինրդատ Լեւոն Գաւիթ Վահէ Սնդրէաս Տիրան Խոսրով Աբէլ</p>	<p>Չարեհ Երեմիա Տիգրան Գէորգ Եղիա Ղուկաս Տրդատ Վահան</p>	<p>Գրիգոր Ստեփան Ալէքսան Սրամ Մարտիրոս Թադէոս Հմայեակ Սուքիաս</p>
ՀԻՆԳԵՐՈՐԳ	ՎԵՑԵՐՈՐԳ	ԵՕԹՆԵՐՈՐԳ	ՈՒԹԵՐՈՐԳ
<p>Արմենակ Կարապետ Մինաս Մեսրոպ Ներսէս Սիմօն Աղարիա Հեթում</p>	<p>Յակոբ Պօղոս Արամայիա Չաքարիա Բարսեղ Մկրտիչ Գարեգին Արշակ</p>	<p>Թորգոմ Վահան Մանուէլ Մովսէս Աբրահամ Միքայէլ Յօնան Աշոտ</p>	<p>Յովսէփ Պետրոս Երուանդ Սեպուհ Ռուբէն Ռափայէլ Սմբատ Կրօնիդէս</p>

մտի լռիկ դանուն իւր, եւ կամ զայլ իմն
անուն, եւ միայն ասիցէ քեզ թէ 'ի քա-
ներորդ սեան իցէ : (Ուրի դիցումք թէ ասաց 'ի
շրբորդումս սեան լեւել) :

Բայց որովհետեւ այսու միայն ոչինչ կա-
րես գուշակել դու, պարտիս 'ի հարկէ գը-
նալ 'ի միւս կարգն, ուր թէպէտ գտանին նոյն

ԱՌԱՋԻՆ	ԵՐԿՐՈՐԳ	ԵՐՐՈՐԳ	ՉՈՐՐՈՐԳ
Մարիամ	Սրբուհի	Անատոլա	Թագուհի
Եւա	Հեղինէ	Վասիլուհի	Վարդուհի
Սաթինիկ	Ազնէս	Յուլիանէ	Քայիանէ
Շէհրիզաա	Տիրուհի	Աղաւնի	Վիրգինէ
Մարգարիտ	Փերրոնիա	Ակիւլիւնէ	Սայենուհի
Փէրուզ	Պեղիքէ	Իւղաբեր	Կալինիկէ
Անթառամ	Քրիստինէ	Սոփիա	Արմաւենի
Եւզինէ	Հռիփսիմէ	Ելպիս	Ազնիւ
ՀԻՆՑԵՐՈՐԳ	ՎԵՑԵՐՈՐԳ	ԵՕԹՆԵՐՈՐԳ	ՈՒԹԵՐՈՐԳ
Հռիփսիմէ	Շուշան	Ռամէլ	Պիատոս
Եղիսաբեթ	Աշխէն	Նարդուհի	Պայծառ
Սանդուխտ	Յուդիտա	Վառվառէ	Մարթա
Արուսեակ	Մաքրուհի	Եփրոսինէ	Հայկուհի
Խոնարհ	Լուսինէ	Մէնտուհի	Կատարինէ
Հայկանոյշ	Մանանուշ	Մարիանէ	Արտեմ
Յուստիանէ	Իսկուհի	Միհրիպէ	Եւպրաքսէ
Զապել	Ազապի	Թերեզիա	Լուցիա

անուանք, բայց այլով կարգաւ գրեալ. եւ
 ասիցես ցնա, զի եւ անդ գտցէ զանունն զոր
 կալաւ 'ի մտի. եւ ասիցէ քեզ թէ 'ի քանե-
 բորդ սեան իցէ. (Եւ համարեացաւ թէ ասաց 'ի
 հինգերորդ տան լինել) : Եւ յասելն զայս՝ պար-
 տիս վերստին դասնալ դու յառաջին կարգն,
 եւ գտանել զանունն զոր կալաւ նա 'ի մտի



ԱՌԱՋԻՆ	ԵՐԿՐՈՐԴ	ԵՐՐՈՐԴ	ՉՈՐՐՈՐԴ
Մարիամ Սրբուհի Անատոլա Թագուհի Հռիփսիմէ Շուշան Ռամէլ Պիատոս	Եւա Հեղինէ Վասիլուհի Վարդուհի Եղիսաբեթ Աշխէն Նարդուհի Պայծառ	Սաթինիկ Ազնէս Յուլիանէ Գայիանէ Սանդուխտ Յուղիտա Վառվառէ Մարթա	Շէհրիզատ Տիրուհի Աղաւնի Վիրգինէ Արուսեակ Մաքրուհի Եփրոսինէ Հայկուհի
ՀԻՆԳԵՐՈՐԴ	ՎԵՏԵՐՈՐԴ	ԵՕԹՆԵՐՈՐԴ	ՈՒԹԵՐՈՐԴ
Մարգարիտ Փերրոնիա Ակիւլիւնէ Սայենուհի Խոնարհ Լուսինէ Մէնտուհի Կատարինէ	Փէրուզ Պեղիքէ Իւղաբեր Կալինիկէ Հայկանոյշ Մանանոյշ Մարիանէ Արտէմ	Անթառամ Քրիստինէ Սոփիա Արմաւենի Յուստիանէ Իսկուհի Մինրիպէ Եւպրաքսէ	Եւգինէ Հռիփսիմէ Ելպիա Ազնիւ Ջապէլ Ազապի Թերեզիա Լուցիա

'ի հինգերորդ տողն շորրորդի սեան . քան-
զի երկրորդ կարգի սիւնք ցուցանեն զտողս
առաջին կարգի սեանցն :

Եւ զսոյն օրինակ ունել պարտիս՝ եթէ
կամիցիս գուշակել 'ի խաղս՝ նաեւ զանուանս
զատերաց , զամս , եւ զամիսս , առ 'ի զքօս-
նուլ ուրախութեամբ :

ԱՌԱՋԻՆ	ԵՐԿՐՈՐԴ	ԵՐՐՈՐԴ	ՉՈՐՐՈՐԴ	ՀԻՆԳԵՐՈՐԴ
Յուճալար	Փետրվր	Մարտ	Ապրիլ	Մայիս
Յուճիս	Յուլիս	Օգոստոս	Սեպտեմ	Հոկտեմ
Նոյեմբեր	Դեկտեմ	Երկուշբ	Երեքշբ	Չորեքշբ
Հինգշբ	Ուրբաթ	Շաբաթ	Կիրակի	Գիշեր
Գիւղ	Երկիր	Քաղաք	Բերդ	Ցերեկ

ԱՌԱՋԻՆ	ԵՐԿՐՈՐԴ	ԵՐՐՈՐԴ	ՉՈՐՐՈՐԴ
1	9	17	25
2	10	18	26
3	11	19	27
4	12	20	28
5	13	21	29
6	14	22	30
7	15	23	31
8	16	24	32

ՀԻՆԳԵՐՈՐԴ	ՎԵՅԵՐՈՐԴ	ԵՅԹՆԵՐՈՐԴ	ՈՒԹԵՐՈՐԴ
33	41	49	57
34	42	50	58
35	43	51	59
36	44	52	60
37	45	53	61
38	46	54	62
39	47	55	63
40	48	56	64

ԱՌԱՋԻՆ	ԵՐԿՐՈՐԴ	ԵՐՐՈՐԴ	ՉՈՐՐՈՐԴ	ՀԻՆԳԵՐՈՐԴ
Յուսմար	Յուսիս	Նոյեմբեր	Հինգշաբթ	Գիւղ
Փետրվր	Յուլիս	Գեկտեմ	Ուրբաթ	Երկիր
Մարտ	Օգոստոս	Երկուշաբթ	Շաբաթ	Քաղաք
Ապրիլ	Սեպտեմ	Երեքշաբթ	Կիրակի	Բերդ
Մայիս	Հոկտեմ	Չորեքշաբթ	Գիշեր	Ցերեկ

ԱՌԱՋԻՆ	ԵՐԿՐՈՐԴ	ԵՐՐՈՐԴ	ՉՈՐՐՈՐԴ
1	2	3	4
9	10	11	12
17	18	19	20
25	26	27	28
33	34	35	36
41	42	43	44
49	50	51	52
57	58	59	60

ՀԻՆԳԵՐՈՐԴ	ՎԵՑԵՐՈՐԴ	ԵՕԹՆԵՐՈՐԴ	ՈՒԹԵՐՈՐԴ
5	6	7	8
13	14	15	16
21	22	23	24
29	30	31	32
37	38	39	40
45	46	47	48
53	54	55	56
61	62	63	64

Յ Ա Ն Կ

ԸՍՏ ԿԱՐԳԻ ԻԻՐԱՔԱՆՁԻԻ ԲԱՆԻՑ

	Երե․․
Տաղ 'ի վերայ Յովասափու թագաւորին	1
Իգնատիոսի արարեալ մարմնախաղաց փորձիւ	52
Երազահան հարուստ եւղեղեցիկ	81
Փոքրագոյն բառարան Տաճկերէնէ 'ի Հայ Լուսնիւ Երազացոյց	121
	127
Բանք պիտանիք եւ օգտակարք	137
Ոտանաւոր վասն Ախրահէի	185
Մանկտուոյ խաղք	190
Հարց պատասխանի ուսումնական	193
Մանկական ճարտարութիունք	195
Առեղծուածք ասացեալք 'ի գիտնոց	197
Կերպ առ 'ի գտանել զկալեալ տառն	201
Կերպ առ 'ի գտանել զբառս հինգ բո- լորակաց	202
Հինգ բոլորակք	204
Ոտանաւոր 'ի վերայ երեսուն եւ մի բա- ռից՝ հինգ բոլորակաց	209
Յաղագս բարուց կենդանեաց ինչ	216
Ութն կարգ աղիւսակք եւ խրատք նոցա	218

